


Վ. Պողոսյան

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

Հասկացություններ, սկզբունքներ, մոտեցումներ  
Ռիտմանական ձեռնարկ



VALERI V. POGOSSYAN  
HUMAN RIGHTS:  
Conceptions, principles, approaches  
Yerevan 2002

## ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր Մարդ իր ողջ գիտակցական կյանքում ձգտում է ազատության եվ երջանկության, սակայն դրանք իրականացումը մշտապես բախվում է տարբեր կարգի պատնեշների ու արգելքների եվ Նա մշտապես պայքարում է դրանք հաղթահարելու համար: Միայնակ չկարողանալով հաղթահարել այդ դժվարությունները Նա միավորվում է այլ մարդկանց հետ՝ համատեղ ջանքերով իրենց երազանքներն իրականացնելու նպատակով: Մարդկանց միավորվելու առավել արդյունավետ եղանակը պետությունն է, համենայն դեպս մարդկությունը ցայսօր որքով է այլ եղանակ չի հայտնագործել: Այդ պատճառով բոլոր ազգերը փորձել են փորձում են ստեղծել սեփական պետություն: Պետություն ստեղծելով մարդիկ ցանկացել են այժմ էլ ցանկանում են առաջին հերթին լուծել մեկ հիմնական խնդիր՝ ապահովել իրենց անվտանգությունը՝ պաշտպանվել ինչպես արտաքին հարձակումներից, այնպես էլ հասարակության մեջ ստեղծել ներքին կարգուկանոն, խաղաղություն: Այստեղ հարկ է նշել, որ այս հիմնական խնդիր լուծումը ոչ թե նպատակ է, այլ սոսկ միջոց՝ յուրաքանչյուրի անվտանգ ու երջանիկ կյանքն ապահովելու համար: Սակայն հարց է առաջանում, ինչու՞ այդ նպատակի իրագործման համար ստեղծել պետություն, այն էլ՝ ազգային պետություն: Բանն այն է, որ մարդիկ կարող են միավորվել միայն այն դեպքում, երբ յուրաքանչյուրն ինքն իրեն դասում է տվյալ ազգի ներկայացուցիչների շարքը: Այլ կերպ ասած՝ պետության ստեղծման համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ ազգային ինքնության ըմբռնումը, իսկ այդ ըմբռնումն իր հերթին ենթադրում է մարդկային այլ հանրություններից իրենց առանձնացումը, «մերի» եվ «ձերի» տարբերակումը: Ազգային ինքնության գիտակցման համար անհրաժեշտ է, որ մարդկանց որոշակի հանրույթ ապրի որոշակի տարածքում, որի սահմաններում ձեւավորվում են (ստեղծվում են) մարդկային փոխհարաբերությունների կոնկրետ ձեւեր՝ սովորույթներ, ավանդույթներ, հոգեվոր-մշակութային ընդհանրություններ, լեզու, ընդհանուր տնտեսություն, ընդհանրական շահեր եվ այլն: Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ ազգային ինքնությունը ստեղծվում է կոնկրետ մարդկանց որոշակի ընդհանրությունների հիման վրա, ինչն ի հարկե չի վերացնում առանձին անհատի անհատականությունը, նրա «ես»-ը, սեփական պատկերացումները երջանկության, հաջողության, հոգեմտավոր դրսեվորումների ու ունակությունների մասին: Այսինքն՝ մարդը լինելով որոշակի հանրության մաս, միաժամանակ մնում է անձնավորություն իր անհատական ձգտումներով եվ բնականաբար փորձում է այդ ձգտումները կենսագործել իր առօրյա կյանքում՝ իր հոգեմտավոր պատկերացումներին համապատասխան: Այստեղից, բնականաբար, բխում է, որ ոչ մի պետություն երբեք իրավունք ձեռք չի բերում մարդուն զրկել իր անհատականությունից, իր ինքնությունությունից ու ինքնավարությունից, եվ ինչպես պետությունն է ինքնիշխան, այնպես էլ մարդն է ինքնիշխան, եվ լիովին կարող է եվ պետք է տնօրինի իր գործողությունները՝ բացառելով ամեն մի պետական միջամտություն: Այստեղ թերեվս տեղին է հիշատակել Ի. Կանտի անհատի «ներքին ազատության» ըմբռնումը, ըստ որի այդ ազատությունը նրա հիմնական իրավունքն է եվ ոչ մի արտաքին իշխանություն (այսինքն՝ առաջին հերթին պետությունը) չպետք է մարդուն պարտադրի երջանկության մասին պատկերացումներ, հանդգնումներ, նպատակներ եվ իդեալներ:

Այսպիսով, մարդիկ պայքարելով հանուն պետության ստեղծման, ակնկալում են, որ պետությունը կստեղծի այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն իրենց ազատությունը, իրավունքները եվ երջանիկ կյանքը: Այլ խնդիր է, որ պետության ստեղծումից հետո այդպիսի պայմաններ չեն ստեղծվում: Դժբախտաբար ամեն անգամ պետական իշխանության հաստատումով իշխանությունն ամենուր եվ միշտ չարաշահվել է: Նախ, իշխանություն ունեցողները (չնոռանաք, որ նրանք էլ նույն մարդիկ են) միշտ ձգտել են իրենց իշխանությունը որքան հնարավոր է երկարաձգել, իսկ դա ապահովելու համար ձգտել են բացառիկ իշխանության: Այս մտտեցման հիմքում ընկած է առաջին հերթին այն հանդգնումը, որ միշտ անհրաժեշտ է ունենալ իշխանություն եվ այդ հանդգնումը, ինչպես արդեն նշել ենք, ունեն բոլորը, համենայն դեպս բացարձակ մեծամասնությունը: Այստեղ տեղին է հակառակել (չհամաձայնել) այն ընդդիմախոսներին, որոնք կարծում են, որ ժողովրդի մեծամասնությունը չունի պետական մտածողություն եվ այդ պատճառով են մարդիկ արտագաղթում, կամ ցանկանում են մաս դառնալ ավելի հզոր պետության եվ այլն: Այստեղ, ի միջի այլոց, նշենք, որ վերոհիշյալ գործոնները պայմանավորված են ոչ թե պետական մտածողության բացակայությամբ, այլ միայն ու միայն վատ իշխանությամբ եվ մարդկանց վերաբերմունքն այդ վատ իշխանության նկատմամբ դրսեվորվում է այդպիսի երեվույթներով: Նորից կրկնենք, որ բոլոր ժամանակներում մարդիկ ձգտել են շնորհիվ իրենց ընդհանրական հատկանիշների միավորվել մարդկային հանրույթի մեջ, ստեղծել պետություն, իսկ իրենց անհատական ցանկությունների (երջանության ձգտման իրենց պատկերացումներով) բավարարման համար հակադրվում են իշխանությանը, եվ ոչ թե պետությանը: Թերեվս պետք է նշել նաեվ, որ երբ մարդկանց անհատական հակվածությունները չեն բավարարվում եվ դրանք դառնում են ընդհանրական, հանընդհանուր, ապա սա կարող է սպառնալ ընդհանուր պոռթկումով (ապստամբությամբ, հեղափոխությամբ եվ այլն):

Այսպիսով, եթե միշտ պետք է լինի իշխանություն, ապա այդ իշխանության կրողները հավանաբար կունենան այն հանդգնումը, որ բոլոր նրանք, ովքեր փորձում են հասնել իշխանության իրենցից ոչնչով

ավելի լավը չեն, եվ հետեվաբար իրենք պետք է պաշտպանեն իրենց եվ շարունակեն իշխանությունը պահել իրենց ձեռքում: Իսկ դրան հասնելու համար իշխանությունը դիմում է տարբեր միջոցների, որը հաճախ վերածվում է դաժանության եվ այլասերված ձեվերի, առավել եվս, որ իշխանության ձգտումները միջոցների ընտ-րության հարցում միշտ չէ, որ հետեվում են բարոյականության պահանջներին:

Այդպես եղել է մարդկության պատմության ողջ ընթացքում եվ բնականաբար բոլոր ժամանակներում մարդիկ պայքարել են անսահմանափակ իշխանության դեմ, դրանով փորձելով ապահովել իրենց ազատությունը: Արդի պատկերացումներին համապատասխան իշխանության սահմանափակումը հնարավոր է միայն ժողովրդավարական հասարակություններում: Ժողովրդավարությունը ենթադրում է իշխանության սահմանափակումն իրավունքի միջոցով եվ այդ պատճառով մարդու իրավունքների ու ազատությունների ապահովումը եվ դրանց պաշտպանության երաշխիքների հաստատումը ստանում են առաջնահերթ նշանակություն՝ ցանկացած ժողովրդավարական պետության եվ հասարակության համար:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մարդու իրավունքները զուտ իրավական խնդիր չէ, ինչպես կարծում են շատերը: Այն նախ եվ առաջ փիլիսոփայական հարցադրում է, որը փորձում է բացահայտել մարդու տեղը եվ դերը հասարակության մեջ, մարդ-մարդ, մարդ-հասարակություն հարաբերությունները: Պատահական չէ, որ փիլիսոփայական ամենատարբեր ուսմունքներ փորձել են եվ այսօր էլ փորձում են պարզել հասարակության բնականոն զարգացման համար չափազանց կարեվոր այդ հարաբերությունների բնույթը: Միաժամանակ, մարդու իրավունք-ներն ունեն նաեվ քաղաքագիտական նշանակություն, որքանով դրանք անմիջականորեն առնչվում են քաղաքական կարեվորագույն հարցադրումներին, պետության եվ քաղաքացու հարաբերություններին: Իհարկե՝ մարդու իրավունքներն ունեն նաեվ իրավական նշանակություն, որքանով իրավունքների պաշտպանության հիմնահարցերը, դրանց երաշխիքների հստակ մեխանիզմների սահմանումն իրենց լուծումն ստանում են իրավական հարթությունում: Մարդու իրավունքներն ունեն իհարկե նաեվ հոգեբանական, բարոյագիտական, սոցիոլոգիական եվ այլ նշանակություններ, եվ մարդու իրավունքների բացահայտումը ամբողջության մեջ ենթադրում է համալիր վերլուծություն:

Մարդու իրավունքներն ու ազատությունները դարձել են սեվեռուն ուշադրության առարկա հատկապես XX դարի երկրորդ կեսին, երբ միջազգային հանրությունը, լուրջ դասեր քաղելով դարի երկու աշխարհամարտերից եվ տարածաշրջանային մեծաթիվ բախումների դառը փորձից, որոնց ժամանակ զանգվածային մասշտաբներով անտեսվում եվ ոտնահարվում էին մարդու իրավունքները, նպատակադրվեց միջազգային իրավունքի նորմերով պաշտպանել այդ իրավունքներն ու ազատությունները, դրանք դիտելով որպես «ազատության, արդարության եվ համընդհանուր խաղաղության հիմք», ինչպես նշված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում:

Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության հիմնական միջոցը դարձավ ՄԱԿ-ի Կանոնադրությունը (1946 թ.), որի մարդու իրավունքներին վերաբերող դրույթները (հոդվածներ 1(3), 55, 56) նշմարեցին միջազգային հանրության հետագա գործողությունների հիմնական ուղղությունները: Կանոնադրությունից հետո մարդու իրավունքների վերաբերյալ առաջին համընդգրկուն փաստաթուղթը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է (1948 թ.), որի նախաբանում եվ երեսուն հոդվածներում թվարկվում են ինչպես քաղաքացիական (անձնական), այնպես էլ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքները: Չետագա տասնամյակներում ընդունվում են միջազգային եվ տարածաշրջանային բազմաթիվ պայմանագրեր: Շնորհիվ ՄԱԿ-ի Կանոնադրության եվ մյուս փաստաթղթերի մարդու իրավունքները՝ լինելով պետությունների ներքին հիմնախնդիր, աստիճանաբար ձեռք բերեցին միջազգային նշանակություն: Այս պարագայում մարդը դարձավ նաեվ միջազգային իրավունքի սուբյեկտ, իսկ միջազգային իրավունքի բնագավառում ձեվավորվեց մարդու իրավունքների միջազգային իրավունքը:

Վերջին տասնամյակում մարդու իրավունքների պաշտպանությունը կարեվոր նշանակություն է ստացել նաեվ Հայաստանի Հանրապետությունում, որն անկախության ձեռքբերման հետեվանք էր: Արդեն 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության խորհրդարանն ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որում ամրագրվեցին ինքնիշխան պետականության եվ ժողովրդավարության կառուցման ելակետային սկզբունքները: Հռչակագիրը, խնդիր դնելով ստեղծել իրավական հասարակարգ, որդեգրում է ժողովրդավարական պետություններին բնորոշ մի շարք արմատական սկզբունքներ, մասնավորապես, իշխանությունը պատկանում է ժողովրդին, քաղաքական եվ գաղափարախոսական պլուրալիզմը, սեփականության բազմաձեվությունը, իշխանության տարանջատումը եվ մի շարք այլ սկզբունքներ: Այդ սկզբունքների շարքում առաջնային նշանակություն է տրվում նաեվ մարդու իրավունքների պաշտպանությանը: Հռչակագրի նախաբանում, մասնավորապես, նշվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքների եվ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի հիմնարար նշանակությունը: Մարդու իրավունքների պաշտպանությունը ամրագրվեց նաեվ 1995 թ. հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրությունում, որի հոդված 4-ը ուղղակիորեն հռչակում է. «Պետությունն ապահովում է մարդու իրավունքների եվ ազատությունների

պաշտպանությունը Սահմանադրության եվ օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»։ Միաժամանակ ՀՀ Սահմանադրության երկրորդ գլուխը ամբողջությամբ նվիրված է մարդու իրավունքներին, եվ վերնագրված է «Մարդու եվ քաղաքացու հիմնական իրավունքները եվ ազատությունները»։ Անհրաժեշտ է նշել նաեվ, որ Հայաստանի Հանրապետությունը այս տարիներին միացել է բազմաթիվ միջազգային պայմանագրերի, ստանձնելով մի շարք կարեվորագույն պարտականություններ։ Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը եվ նրան կից Կանոնադրությունը (1991 թ. ապրիլի 1-ին), «Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (1993 թ. հունիսի 9-ին), «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան (1992 թ. հուլիսի 1-ին), «Ապարտհեյդի հանցագործության կանխման եվ դրա համար պատժի մասին» Ժնևյի կոնվենցիան (1993 թ. մարտի 31-ին), «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» Ժնևյի կոնվենցիան (1993 թ. մարտի 31-ին), «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» Ժնևյի կոնվենցիան (1993 թ. մարտի 31-ին), «Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին» կոնվենցիան (1993 թ. հունիսի 22-ին) եվ բազմաթիվ այլ միջազգային պայմանագրեր։

Հայաստանի Հանրապետությունը 2001 թվականին դառնալով Եվրախորհրդի անդամ, միացել է «Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների մասին» կոնվենցիային (Եվրոպական կոնվենցիա), որը ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 2002 թ. մարտի 20-ին։ Եվրոպական կոնվենցիային համապատասխան գործում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հետեվաբար, միանալով այդ կոնվենցիային Հայաստանի քաղաքացիներն իրենց խախտված իրավունքների վերականգման նպատակով կարող են դիմել նաեվ եվրոպական դատարան, որի որոշումները վերջնական են եվ ենթակա պարտադիր կատարման։

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթանալով մարդու իրավունքների վերաբերյալ գրականությանը, այդ իրավունքներին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերին, տարբեր պետությունների սահմանադրություններին, դժվար չէ նկատել, որ դրանցում օգտագործվում են մարդու իրավունքներին անմիջականորեն վերաբերող բազմաթիվ հասկացություններ. «մարդու իրավունքներ», «իրավունքներ» եվ «ազատություններ», «քաղաքացու իրավունքներ», «հիմնական իրավունքներ», «այլ իրավունքներ», «անհատի իրավունքներ», «կոլեկտիվի իրավունքներ», «իրավունքների սերունդներ» եվ այլն։ Բնականաբար հարց է առաջանում թե այդ հասկացություններից յուրաքանչյուրը ի՞նչ բովանդակություն, նշանակություն ունի, ինչո՞վ են տարբերվում մեկը մյուսից (այսինքն՝ «իրավունքները» ու «ազատությունները», «մարդու իրավունքներն» ու «քաղաքացու իրավունքները»), ի՞նչ ընդհանրություններ ունեն, ինչպե՞ս են կապված մեկը մյուսին, ի՞նչ հատկանիշներով կարելի է դրանք խմբավորել ու դասակարգել եվ այլն։

Նախ, ծանոթանանք *«ազատություն»* հասկացությանը, որն ամենահիմնական հասկացություններից մեկն է մարդու իրավունքների տեսությունում։ Հասկանալի է, որ «ազատություն» հասկացությունն ընդհանուր իմաստով նախ եվ առաջ փիլիսոփայական հասկացություն է, որը տարբեր դարաշրջաններում, տարբեր փիլիսոփայական ուսմունքներում ունեցել է տարբեր նշանակություններ։ Ընդհանուր առմամբ հասարակական մտքի պատմության ընթացքում ազատության հիմնախնդիրը ավանդաբար հանգեցվել է *կամքի ազատության* խնդրին, այսինքն՝ մարդն ունի՞ կամքի եվ ընտրության ազատություն եվ կարող է ազատորեն տնօրինել իր գործողությունները, թե՞ իր վարքը պայմանավորված է արտաքին գործոններով ու հանգամանքներով։

Մարդկության ողջ պատմության ընթացքում մարդիկ միշտ եվ ամենուր պայքարել են իրենց ազատության տարբեր տիպի սահմանափակումների դեմ, փորձել են ստեղծել այնպիսի հասարակություն, որ այդ սահմանափակումները, որքանով չեն կարող առհասարակ վերացվել, հասցվեն նվազագույնի։ Այլ կերպ ասած՝ ազատությունը եղել եվ մնում է հասարակական առաջընթացի հիմնական շարժիչ ուժը։

Բնական իրավունքի ուսմունքի շրջանակներում *ազատությունը ընկալվում է իբրեվ մարդու բնական վիճակ եվ այն հռչակվում է մարդու հիմնական բնական իրավունքներից մեկը*։ Ըստ եվրոպական լուսավորականության գաղափարախոսների, թեև մարդը ծնվում է ազատ, սակայն սոցիալ-քաղաքական, կրոնական եվ այլ գործոնների ազդեցության հետեվանքով մարդիկ կորցնում են իրենց բնական վիճակը (հիշենք մեծ մտածող Ժ.-Ժ. Ռուսոյի խոսքը՝ «մարդը ծնվում է ազատ, սակայն նա ամենուր կապանքների մեջ է»)։ Այդ դարաշրջանում ազատության գաղափարը հավասարության գաղափարի հետ մեկտեղ սկսվում է ընկալվել իբրեվ հասարակական առաջընթացի կռվան եվ դառնում է բուրժուական հեղափոխությունների հիմնական կարգախոսը (հիշենք ֆրանսիական մեծ

հեղափոխության կարգախոսը՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն»): Նշենք, որ ազատության եվ հավասարության պահանջները անմիջականորեն փոխկապակցված են միմյանց եվ փոխապայմանավորված: Այսինքն՝ եթե չկա հավասարություն, ապա դա նշանակում է, որ գոյություն ունի մարդկանց մի խումբ, որոնք մյուսների համեմատությամբ օժտված են որոշակի արտոնություններով, ինչը նրանց հնարավորություն է ընձեռում սահմանափակել (վտանգել) այլոց ազատությունը:

Ա. Սմիթի, Թ. Ջեֆերսոնի, Ջ. Ս. Միլի եվ այլոց ազատամտական հայեցակարգի շրջանակներում **ազատությունը հասկացվում է իբրեւ մարդկանց բարօրության բարձրացմանն ուղղված միջոց**: Նրանք գտնում էին, որ պետության գործունեության ոլորտի առավելագույն սահմանափակումը, մասնավոր սեփականության ազատ տնօրինումը, յուրաքանչյուր մարդու կողմից իր խելամիտ շահերին հետամուտ լինելը կապահովեն հասարակության բոլոր անդամների անհատական ազատության զարգացումը: Ազատության այսպիսի ըմբռնումը արեվմտյան հասարակությունների համար դարձավ ելակետային եվ մեծապես նպաստեց մարդու իրավունքների պաշտպանության իրատեսական երաշխիքների հաստատմանը:

Անհրաժեշտ է նշել նաեվ, որ **ազատության հասկացությունը գործածվում է այլ իմաստով եվ՝ ազատությունը որպես այս կամ այն գործողությունը կատարելու կամ չկատարելու սուբյեկտիվ հնարավորություն**: Այսինքն՝ «ազատություն» հասկացությունը օգտագործվում է ընդգծելու համար անհատական ընտրության ավելի մեծ հնարավորությունները անկախ արդյունքից, ինչպես օրինակ, «խղճի ազատությունը», «դավանանքի ազատությունը»: Ի տարբերություն դրա, «իրավունք» հասկացությունը բնորոշում է մարդու ավելի կոնկրետ գործողությունները, ինչպես օրինակ, «ընտրելու իրավունքը», «ընտրվելու իրավունքը»:

Ավհայտ է, որ **«ազատություն» հասկացությունը գործածվում է նաեվ «իրավունք» հասկացության առումով**: Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա է նշված հասկացությունների որոշակի նույնացում, ինչը բացատրվում է զուտ ավանդույթով, որը սկզբնավորվել է Լուսավորականության դարաշրջանում: Այս պատճառով գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել, երբ միեվնույն հասկացությունը բնորոշվում է եվ՝ որպես իրավունք, եվ՝ որպես ազատություն: Այս երեվույթը նկատվում է նաեվ արդի սահմանադրություններում: Օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրությունում նշվում է, որ «բոլոր գերմանացիները օգտվում են տեղաշարժման ազատությունից» (հոդված 11, մաս 1) եվ ապա՝ «այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով» (նույն հոդվածը, մաս 2): Այսինքն, ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում «տեղաշարժման ազատությունը» հասկացվում է նաեվ իբրեւ իրավունք: Նույնը նկատվում է, երբ համեմատում ենք տարբեր պետությունների սահմանադրությունները, որոնցից մեկում օգտագործվում է ազատության հասկացությունը, մյուսում՝ իրավունքի հասկացությունը: Առանձին դեպքերում երկու հասկացությունները օգտագործվում են միաժամանակ, ինչպես օրինակ, «խոսքի ազատության իրավունք» եվ այլն (տես օրինակ, ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 23, 24 եվ այլն): Այստեղ, տրամաբանական առումով, կարելի է ասել, որ գործ ունենք նույնաբանության (տավտոլոգիայի) հետ, սակայն նման դեպքերում, ավանդույթի ուժով, պահպանվում է «խոսքի ազատություն» բառակապակցությունը եվ միաժամանակ նշվում, որ դա մարդու իրավունք է, թեեւ «խոսքի ազատություն» արտահայտությունը ինքնին նշանակում է իրավունք:

Մյուս կարեվորագույն հասկացությունը, որի վերաբերյալ անհրաժեշտ է ունենալ հստակ պատկերացումներ, «իրավունք» հասկացությունն է: Այդ հասկացությունը բազմիմաստ է եվ բնականաբար օգտագործվում է տարբեր առումներով:

**Ազատամտական արժեքների համակարգում իրավունք ասելով հասկանում են ձեվական հավասարությունը**: Իրավունքի հասկացության այսպիսի ըմբռնումը իրավական հավասարության սկզբունքի բովանդակության կոնկրետ դրսեվորումն է եվ արտահայտում է իրավունքի բուն էությունը: Ընդ որում, այսպիսի ըմբռնումը թույլ է տալիս իրավունքի հասկացությանը տալ նաեվ այլ սահմանումներ, ինչպես օրինակ՝ «իրավունքը ազատության համընդհանուր եվ անհրաժեշտ ձեվն է մարդկանց հասարակական հարաբերություններում», «իրավունքը ազատության չափն է», «իրավունքը համընդհանուր արդարությունն է» եվ այլն: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նշված սահմանումներից յուրաքանչյուրը ենթադրում է մյուս սահմանումները այնքանով, որքանով դրանք բոլորն էլ իմաստավորվում են իրավական հավասարության սկզբունքի ընդհանուր բովանդակության համատեքստում: Վերլուծելով վերոհիշյալ սահմանումները եվ արձանագրելով նշված սահմանումների արտաքին տարբերությունները, միաժամանակ դժվար չէ համոզվել, որ դրանք համարժեք են ներքին իմաստային առումով, որովհետեւ «համընդհանուր ձեվական հավասարության չափը» նույնքան է ենթադրում ազատություն եվ արդարություն, որքան վերջինները մեկը մյուսին:

Իրավունքի հասկացության հիշատակված սահմանումները իրենց օբյեկտիվ եվ բնորոշ հատկություններով ընդհանուր առմամբ արտահայտում են իրավունքի բնույթը, իմաստը եվ առանձնահատկությունը, ամրագրում են իրավունքի՝ իբրեւ ինքնուրույն էության, ըմբռնումը: Այդ

հատկություններով եվ առանձնահատկություններով իրավունքը տարբերվում է մյուս, իրավական ցանկացած այլ երեվույթների էությունից: Իրավունքի այդ օբյեկտիվ-էական հատկությունները որքանով ներհատուկ են իրավունքին ի սկզբանե, անհրաժեշտաբար դառնում են նաեվ իրավական օրենքի (այսինքն՝ ձեվական հավասարության իրավական սկզբունքին համապատասխանող դրական իրավունքի) էլակետային էական բաղադրամասը: Այլ կերպ ասած, այդ օբյեկտիվ-էական հատկությունները իրավական օրենքներ ստեղծելիս չեն կարող պայմանավորված լինել օրենսդրի կամքով:

Խոսելով *օրենքի* մասին, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առհասարակ օրենքը, այսինքն այն, ինչը հաստատվում է իբրեվ դրական իրավունք, կարող է ինչպես համապատասխանել իրավունքին, այնպես էլ հակասել իրավունքին: **Օրենքը (դրական իրավունքը) իբրեվ իրավունքի արտահայտման ձեվ դառնում է իրավական երեվույթ եվ շնորհիվ այդ հանգամանքի՝ իրավական հավասարության սկզբունք եվ (դրա հետ մեկտեղ ազատության հավասար չափի հանընդհանրություն) ստանում է պետական-իշխանական, համապարտադիր ճանաչում եվ պաշտպանություն, ձեռք է բերում օրինական ուժ:** Լինելով միայն իրավունքի՝ օբյեկտիվորեն պայմանավորված հատկությունների արտահայտման ձեվ, օրենքը դառնում է իրավական օրենք: Այլ կերպ ասած՝ իրավական օրենքը հենց այն իրավունքն է, որն արժանացել է ճանաչման, կոնկրետացվել է, ստացել պաշտպանության պաշտոնական ձեվ՝ օրինական ուժ, այսինքն՝ դարձել է դրական իրավունք, որն ունի իրավունքի օբյեկտիվ հատկությունները:

Իրավունքի՝ օրենքի (դրական իրավունքի) վերածվելու գործընթացը, իրավունքի օբյեկտիվ հատկությունների եվ պահանջների հաշվառման անհրաժեշտության հետ մեկտեղ, կախված է նաեվ բազմաթիվ այլ օբյեկտիվ եվ սուբյեկտիվ գործոններից (քաղաքական, սոցիալական, տնտեսական, հոգեվոր-մշակութային եվ այլն): Իրավունքին չհամապատասխանող օրենքը կարող է ստեղծվել պետական կարգի իրավաբացառող բնույթի, օրենսդրի հակաիրավական դիրքորոշման, կամ տարբեր կարգի սխալների, բացթողումների հետեվանքով եվ այլն:

Ազատության, իրավունքի եվ պետականության պատմական զարգացման ընթացքում հակաիրավական օրենքների դեմ պայքարում ձեվավորվել եվ հաստատվել են հատուկ ինստիտուտներ եվ կանոններ ինչպես բուն օրինաստեղծ գործունեության համար, այնպես էլ իրավունքին օրենքի համապատասխանության արդյունավետ հսկողություն ապահովելու նպատակով (իշխանությունների տարբեր ճյուղերի միջեվ զսպումների եվ հակակշիռների համակարգը, ընդհանուր դատական, սահմանադրական-դատական վերահսկողությունը եվ այլն):

Օրենքի (դրական իրավունքի) համապարտադրականության սկզբունքն ունի երկու տարբեր, սակայն փոխկապակցված կողմ՝ պաշտոնական-իշխանական եվ իրավական: Օրենքի պաշտոնական-իշխանական կողմն այն է, որ օրենքն իբրեվ պաշտոնական իշխանության կամքի դրսեվորում, ստանում է նրա աջակցությունն ու պաշտպանությունը. օրենքի խախտման դեպքում ապահովվում է համապատասխան պետական սանկցիայով: Այս տեսակետից կարող է թվալ, թե օրենքի համապարտադրականությունը միայն իշխանության կամայական դիրքորոշման հետեվանք է: Օրենքի իրավական կողմն այն է, որ օրենքն օժտվում է համապարտադրականությամբ (հարկադրանքի ուժով) միայն ու միայն այն պատճառով, որ հանդես է գալիս իբրեվ իրավունք (այլ ոչ թե պարզապես մի ինչ-որ այլ համապարտադրանք): Այս առնչությամբ նշենք, որ իշխանությունները խոսում են ոչ միայն օրենքի համապարտադրականության մասին, այլեվ միաժամանակ պնդում են, որ դա հենց իրավունքն է: Այստեղից միանշանակ բխում է նաեվ, որ **օրենքի իրավունք լինելը արտահայտում է այն սկզբունքային հանգամանքը, որ օրենքը չունի իրավունքի էությունից տարբեր սեփական էություն:**

Այս տեսակետից պարզ է դառնում, որ համապարտադրական ուժով պետք է օժտված լինի միայն **իրավական օրենքը:** Հակառակ պարագայում պետք է համարել, որ ոչինչ իրավական չկա, որ ուժի եվ բռնության օգնությամբ ամեն մի կամայականություն կարելի է վերածել իրավունքի: Սակայն իրավունքի օբյեկտիվ բնույթը դրսեվորվում է նույնիսկ այն դեպքում, երբ իրավունքը ժխտվում է (անգամ բռնապետական, ամբողջատիրական ակտերի հեղինակները դրանք ներկայացնում են իբրեվ «իրավունք» եվ «արդարություն»):

Նշված հասկացությունից զատ մարդու իրավունքներին վերաբերող գրականությունում հաճախ օգտագործվում են նաեվ **«հիմնական իրավունքներ եվ ազատություններ»**, **«սահմանադրական իրավունքներ եվ ազատություններ»**, **«այլ իրավունքներ եվ ազատություններ»** հասկացությունները: Հարկ է նշել, որ ցայսօր այդ հասկացությունների հստակ ձեվակերպումը չեն ստացել, սակայն ծանոթանալով բազմաթիվ պետությունների սահմանադրություններում օգտագործվող «հիմնական իրավունքներ եվ ազատություններ» հասկացությանը կարելի է եզրակացնել, որ **«սահմանադրական իրավունքներ եվ ազատություններ» հասկացությունը ընդհանուր առմամբ նույնանում է «հիմնական իրավունքներ եվ ազատություններ» հասկացությանը:** Մասնավորապես ՀՀ Սահմանադրության երկրորդ գլուխը կոչվում է «Մարդու եվ քաղաքացու հիմնական իրավունքները եվ ազատությունները», որտեղ շարադրված են մի շարք իրավունքներ եվ ազատություններ, որոնք հիմնականում համընկնում են այլ

սահմանադրություններում առկա իրավունքներին ու ազատություններին: Բացի այդ հարկ է նշել, որ բազմաթիվ սահմանադրություններում ընդգծվում է այն միտքը, որ մարդու հիմնական իրավունքները եվ ազատությունները անօտարելի են եվ ունեն բնական բնույթ: Այսպես, ԳԴՅ Սահմանադրության «Հիմնական իրավունքներ» բաժնում (հոդված 1(2)) ամրագրված է, որ ճանաչվում են մարդու անխախտելի եվ անօտարելի իրավունքները, ապա նշվում է, որ սահմանադրությունում թվարկվող հիմնական իրավունքները պարտադիր են իշխանությունների համար եվ անմիջականորեն գործող իրավունք են (նույն հոդվածի երրորդ մասում): Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունում նույնպես ընդգծված է, որ «մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները անօտարելի են եվ պատկանում են յուրաքանչյուրին ի ծնե» (հոդված 17.2):

«Հիմնական իրավունքներ եվ ազատություններ» հասկացությունը օգտագործվում է նաեվ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային բազմաթիվ փաստաթղթերում՝ Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրում, Մարդու իրավունքների եվ հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում եվ այլն:

Նշված եվ մի շարք այլ միջազգային փաստաթղթերը արմատապես փոխեցին մարդու իրավասության տեսակետի մասին պատկերացումները: Մարդն ըստ այդ փաստաթղթերի համարվում է ոչ միայն ներպետական իրավունքի, այլև միջազգային իրավունքի սուբյեկտ: Միջազգային այդ փաստաթղթերը սահմանում են մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների այն ամբողջությունը, որը ապահովում է մարդու իբրեվ անհատի բնականոն կենսագործունեությունը:

Այսպիսով, ներկայումս գրականության մեջ օգտագործվող մարդու «հիմնական իրավունքներ եվ ազատություններ» հասկացությունը նշանակում է հենց այն իրավունքներն ու ազատությունները, որոնք ամրագրված են սահմանադրություններում եվ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերում: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ եթե որեվ պետության սահմանադրությունում իր ձեռնարկում չի ստացել որեվ կոնկրետ իրավունք եվ ազատություն, ապա դա ամենեվից չի նշանակում, որ տվյալ պետությունում այդ իրավունքը կարող է անտեսվել: Բանն այն է, որ ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում ընդունվում է միջազգային իրավունքի առաջնությունը, առավել եվս եթե դա վերաբերում է մարդու իրավունքներին, հետեվաբար միջազգային-իրավական փաստաթղթերում նշված բոլոր իրավունքներն ու ազատությունները ճանաչվում են նաեվ այդ պետությունում:

Մասնավորապես ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է, որ «պետությունն ապահովում է իրավունքների եվ ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության եվ օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան» (հոդված 4):

Նշելով «հիմնական իրավունքներ եվ ազատություններ» հասկացության արդի ըմբռնումը, անհրաժեշտ է անդրադառնալ նաեվ **«այլ իրավունքներ եվ ազատություններ» հասկացությանը**: «Այլ իրավունքներ» արտահայտությունը ամենեվից չի նշանակում, որ դրանք երկրորդական կամ անկարելի իրավունքներ են եվ կարիք ունեն ավելի նվազ պաշտպանության: Խոսքն այն մասին է, որ «հիմնական իրավունքները եվ ազատությունները» կազմում են մարդու իրավական կարգավիճակի կարեվորագույն բաղադրիչը, որն ամենեվից չի բացառում «այլ իրավունքները», որոնք նույնքան կարեվոր են անհատի բնական կենսագործունեության համար, որքան հիմնական իրավունքները: Ուստի պատահական չէ, որ սահմանադրությունները չեն անտեսում այդ հանգամանքը: Մասնավորապես ՀՀ Սահմանադրությունում նշվում է, որ «Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները եվ ազատությունները սպառնիչ չեն եվ չեն կարող մեկնաբանվել որպես մարդու եվ քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների եվ ազատությունների բացառում» (հոդված 43):

Հարկ ենք համարում նշել նաեվ, որ հիմնական իրավունքները եվ ազատությունները **սուբյեկտիվ իրավունքներ են**: Այս թեզը, որը ժամանակին եղել է վիճահարույց, սուբյեկտիվ իրավունքի հասկացության բովանդակության ճշգրտումից հետո, արժանացել է հանընդհանուր ճանաչման: Երբ իրավունքի հասկացությունը օգտագործում ենք իբրեվ հնարավոր վարքագիծ, իբրեվ անձին (ֆիզիկական կամ իրավաբանական) պատկանող եվ կարծես սուբյեկտին «կցված» իմաստով, ապա այս դեպքում գործ ունենք սուբյեկտիվ իրավունքի հասկացության հետ: Սուբյեկտիվ իրավունքի նախադրյալը իրավունակությունն է, այսինքն՝ անձի իրավունքներ ունենալու հատկությունը: Սուբյեկտիվ իրավունքը ներառում է ինչպես ինքնուրույնաբար որոշակի գործողություններ կատարելու (վարքագծի) հնարավորություն, այնպես էլ այլ անձից որոշակի գործողություններ կատարելու կամ (չկատարելու) պահանջի հնարավորություն, որքանով այդպիսի վարքագիծը պայմանավորում է սուբյեկտիվ իրավունքի իրականացումը:

Մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները եվ դրանցից բխող այլ իրավունքներն ու ազատությունները ապահովում են անհատի կենսագործունեության եվ հասարակական գործունեության անձնական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային ոլորտները եվ դրանց համապատասխան մարդու իրավունքներն ու ազատությունները համակարգվում եվ դասակարգվում են ըստ որոշակի կատեգորիաների: Այսպես, մարդու անձնական կյանքին վերաբերող իրավունքներն ու ազատությունները սովորաբար ընդգրկում են **քաղաքացիական (անձնական) իրավունքների ու ազատությունների** խմբում: Նույն կերպ քաղաքական ոլորտին վերաբերող իրավունքներն ու ազատություններն ընդգրկվում են **քաղաքական իրավունքների ու ազատությունների** խմբում, իսկ սոցիալական, տնտեսական ու մշակութային իրավունքները՝ **սոցիալական, տնտեսական, մշակութային իրավունքների ու ազատությունների** խմբում: Այսպիսի համակարգումը եվ ըստ այդ խմբերի դասակարգումն, իհարկե, ունի որոշակի պայմանականություն, որովհետեվ որեվե կոնկրետ իրավունք ու ազատություն կարող է ընդգրկվել տարբեր խմբերում: Այսպես, խոսքի ազատությունը կամ սեփականության իրավունքը կարող է դասվել ինչպես անձնական իրավունքների, այնպես էլ քաղաքական կամ տնտեսական իրավունքների շարքը: Չնայած այդպիսի պայմանականությանը, այնուամենայնիվ նման դասակարգումը ներկայումս ընդունված է եվ իր կոնկրետ դրսևվորումն է գտնում մարդու իրավունքներին ու ազատություններին վերաբերող բազմաթիվ փաստաթղթերում՝ սահմանադրություններում, միջազգային-իրավական փաստաթղթերում եվ այլուր:

### **ԱՆՁՆԱԿԱՆ (ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Մարդու անձնական իրավունքների ու ազատությունների** հիմնական խնդիրն է ապահովել անհատի իբրեվ հասարակության անդամի անկաշկանդ գարգացումը, նրա ինքնավարությունը, սեփական պատկերացումներին համապատասխան իր կենսակերպի կազմակերպումը, արտաքին ամեն տեսակի անօրինական գործոնների միջամտությունից պաշտպանվածությունը: Անձնական իրավունքները կոչվում են նաեվ **քաղաքացիական իրավունքներ**: Իրավունքների այս խումբը ձեվավորվել է դեռեվս XVII-XVIII դդ. եվ ի սկզբանե ըմբռնվել է իբրեվ պետության ոտնձգություններից անձի ազատությունը պաշտպանելու գլխավոր միջոց, ինչպես նաեվ այդ իրավունքներով պետական իշխանությունը սահմանափակելու գործոն: Իրավունքների այս խմբի հիմքում ընկած են բնաիրավական պատկերացումները, ըստ որոնց մարդու իրավունքները մարդուն տրված են ի ծնե, եվ ոչ թե դրանք շնորհված են պետական իշխանությանը եվ, հետեվաբար, դրանց պաշտպանությունը պետության անմիջական պարտականությունն է: Այս իրավունքները լինելով յուրաքանչյուր անհատի անօտարելի եվ անկապտելի իրավունքները, պետք է իրավաբանորեն պաշտպանվեն եվ յուրաքանչյուրի համար ստեղծվեն անհրաժեշտ պայմաններ եվ երաշխիքներ նրա ինքնուրույն գործողությունները չվտանգելու, անձի ինքնադրսևվորումները, մասնավոր շահերն ապահովելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել նաեվ, որ ավելի քան երկուհարյուրամյա պատմության ընթացքում աստիճանաբար պարզ դարձավ, որ խնդիրը ոչ միայն այն է, որ պետությունը չպետք է միջամտի մարդու ազատությանը եվ ունենա պասիվ դերակատարություն, այլեվ անհրաժեշտ է որպեսզի պետությունը ձեռնարկի լուրջ քայլեր այդ իրավունքների իրացման համար: Այսինքն՝ խնդիրն այն չէ, որ մարդու ազատությունը եվ մասնավոր կյանքը պահպանվի անօրինական գործողություններից եվ միջամտություններից միայն արգելքների միջոցով, այլեվ ստեղծվեն անհրաժեշտ մեխանիզմներ եվ պայմաններ մարդու իրավունքների եվ ազատությունների իրականացման համար:

Այդպիսի մոտեցումները որդեգրվեցին XX դարի երկրորդ կեսին, ինչը իր գործնական արտահայտությունը ստացավ մասնավորապես Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական դատարանի որոշումներում:

Մարդու անձնական (քաղաքացիական) իրավունքներն ու ազատություններն իբրեվ հիմնական իրավունքներ ու ազատություններ արձանագրվել են մի շարք փաստաթղթերում, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում եվ դրան կից կամընտիր երկու արձանագրությունում, Մարդու իրավունքների եվ հիմնական ազատությունների մասին պաշտպանության եվրոպական կոնվենցիայում եվ այլն, ինչպես նաեվ բազմաթիվ պետությունների սահմանադրություններում: Ըստ վերոհիշյալ փաստաթղթերի, հիմնական, անձնական (քաղաքացիական) իրավունքներն ու ազատություններն են՝



կյանքի իրավունքը եվ անձի արժանապատվությունը, ազատության իրավունքը եվ անձի անձեռնմխելիությունը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, տեղաշարժման եվ բնակության վայր ընտրելու ազատությունը, դավանանքի ազատությունը եվ այլն:

**Կյանքի իրավունքը** բոլոր մյուս իրավունքների ու ազատությունների հիմքն է եվ բացարձակ արժեք է, քանզի բոլոր իրավունքներն էլ կորցնում են իրենց իմաստը, եթե մարդը զրկվում է կյանքից: Կյանքի իրավունքը նշանակում է, որ մարդը կարող է իր ազատ կամքով տնօրինել իր կյանքը եվ միաժամանակ պաշտպանված լինել իր կյանքի դեմ ամեն տեսակ անօրինական ոտնձգություն-ներից՝ անկախ այն բանից թե ովքեր են դրանց հեղինակները՝ պետությունը կամ պետական պաշտոնյաները, թե այլ մասնավոր անձինք:

Կյանքի իրավունքը, լինելով այլ իրավունքների շարքում ամենահիմնականը, առանցքայինը, նշանակում է նաեվ, որ այդ իրավունքը ապահովելու եվ պաշտպանելու համար անհրաժեշտ են մի շարք այլ իրավունքներ, առանց որոնց հնարավոր չէ երաշխավորել կյանքի իրավունքը: Ըստ էության ցանկացած այլ իրավունք ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով, նպաստում է կյանքի իրավունքի ապահովմանը եվ դրանց ամբողջությունն է միայն երաշխավորում կյանքի իրավունքի իրականացումը: Յետեվաբար, միանշանակ է, որ պետությունը եվ հասարակությունը մարդկային կյանքը ճանաչելով իբրեվ բացարձակ արժեք, բոլոր հնարավոր միջոցներով պետք է պայմաններ ստեղծեն մարդու իրավունքների պաշտպանության համար:

Կյանքի իրավունքի հիմնախնդիրը քննարկելիս կարեվորվում է մահապատժի իբրեվ բացառիկ պատժամիջոցի խնդիրը: Այստեղ հարցը հետեվյալն է. կյանքի իրավունքը համարելով բացարձակ արժեք կարելի է՞ օրինականացնել կյանքից զրկելը: Մի շարք պետություններում (Ավստրալիա, Ավստրիա, Ֆրանսիա եվ ավելի քան 40 պետություններ), որտեղ մահապատժի վերացվել է, կյանքի իրավունքը նշանակում է, որ ոչ ոք, ոչ մի գործողության համար չի կարող զրկվել կյանքից (այսպես կոչված կյանքի **բացարձակ իրավունք**): Մի շարք այլ պետություններում, որտեղ պահպանված է մահապատժի, կյանքի իրավունքը նշանակում է, որ ոչ ոք չի կարող զրկվել կյանքից կամայականորեն, առանց համապատասխան իրավական ընթացակարգի (**կյանքի հարաբերական իրավունք**): Մի շարք երկրների սահմանադրություններում նշվում են այն հանցագործությունների շրջանակը, որոնց դեպքում կարող է կիրառվել մահապատժի եվ այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ չի կարող կիրառվել մահապատժի: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եվս ամրագրված է կյանքի իրավունքը (հոդված 17), սակայն միաժամանակ նշվում է, որ մահապատժի՝ մինչեվ դրա վերացումը որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար:

Կյանքի իրավունքի վերաբերյալ դրույթներ են սահմանվել նաեվ միջազգային իրավունքով: Դրա հետ մեկտեղ մի շարք միջազգային պայմանագրերով նախատեսվում է մահապատժի վերացումը: Այստեղ հարկ է նշել, որ Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1991թ.), որն ընդունել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը 1966թ. եվ ուժի մեջ է մտել 1976թ., դեռեվս չի արգելում մահապատժի, այլ ընդամենը սահմանում է, որ «մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենածանր հանցագործությունների համար» եվ օրենքով սահմանված կարգով: Սակայն այդ դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրությամբ (Հայաստանի Հանրապետությունը դեռեվս չի միացել), որն ընդունվել է 1989թ. եվ ուժի մեջ մտել 1991թ., արդեն նախատեսում է, որ ոչ մի անձ չի կարող ենթարկվել մահապատժի: Նույնը կարելի է նշել նաեվ Մարդու իրավունքների եվ հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետությունը միացել է 2002թ.) վերաբերյալ, որն ընդունվել է 1950թ. եվ ուժի մեջ մտել 1953թ.: Այդ կոնվենցիայի հոդված 2-ը սահմանում է կյանքի իրավունքը, սակայն չի բացառում մահապատժի: Միաժամանակ այդ կոնվենցիայի թիվ 6 Արձանագրությունը (ուժի մեջ է 1983թ., (Հայաստանի Հանրապետությունը դեռեվս չի միացել)) սահմանում է մահապատժի վերացումը: Ինչպես տեսնում ենք մահապատժի վերացման գաղափարին միջազգային հանրությունը հանգել է աստիճանաբար, երկարատեվ բանավեճերի արդյունքում: Այդ բանավեճերը շարունակվում են նաեվ այսօր եվ, մասնավորապես, Հայաստանում: Դրա վերաբերյալ արտահայտվող տեսակետները միանշանակ չեն եվ շատերը այսօր էլ դեմ են մահապատժի վերացմանը: Չնայած այդ հանգամանքին, Հայաստանի Հանրապետությունը դառնալով Եվրախորհրդի անդամ պարտավորություն է ստանձնել միանալ Մարդու իրավունքների եվ հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 6 Արձանագրությանը, որով Հայաստանում նույնպես խաղաղ ժամանակ կարգելի մարդկանց մահապատժի դատապարտելը: Նշենք նաեվ, որ սկսած 1990թ. Հայաստանում մահապատժի չի իրագործվել:

Իր կարեվորությամբ, կյանքի իրավունքից հետո, առանձնանում է **արժանապատվության իրավունքը**, որն ըստ էության, բոլոր այլ իրավունքների հիմնական նպատակն է: Այս տեսակետից արժանապատվության իրավունքը դառնում է մնացյալ իրավունքների աղբյուրը: Եվ ամենեվին պատահական չէ, որ մարդու

իրավունքներին վերաբերող բազմաթիվ փաստաթղթերում մարդու իրավունքները թվարկելիս արժանապատվության իրավունքը հաճախ դրվում է առաջին տեղում: Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրում նախ եվ առաջ նշվում է, որ «մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ եվ իրավունքներով» (հոդված 1): Այստեղից բնականաբար բխում է, որ արժանապատվությունն իր նշանակությամբ հավասարեցված է բոլոր մյուս իրավունքների ամբողջությանը: Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին դաշնագրի նախաբանում ուղղակիորեն նշվում է, որ «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան՝ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության եվ նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության եվ համընդհանուր խաղաղության հիմքն է», ապա՝ «այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Նույն սկզբունքը պահպանված է նաեվ Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին դաշնագրի նախաբանում:

Նույն մոտեցումն է նկատվում նաեվ մի շարք պետությունների սահմանադրություններում: Այսպես, Գերմանիայի Սահմանադրությունում (հոդված 1) այդ դրույթն ունի հետևյալ ձեվակերպումը՝ «Մարդկային արժանապատվությունը անձեռնմխելի է: Այն հարգելը եվ պաշտպանելը ամեն մի պետական իշխանության պարտականությունն է»: Արժանապատվության վերաբերյալ առանձնահատուկ դիրքորոշումը ամրագրված է նաեվ Իսպանիայի Սահմանադրությունում (հոդված 10), Պորտուգալիայի Սահմանադրությունում (հոդված 18), Ռուսաստանի Սահմանադրությունում (հոդված 18 եվ 21) եվ այլ պետությունների սահմանադրություններում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նույնպես կարելի է արժանապատվություն նշանակությունը, թեև այն, ի տարբերություն հիշատակված սահմանադրությունների հատուկ առանձնացված չէ: Այսպես, հոդված 19-ում նշվում է, որ «մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եվ պատժի: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել բժշկական կամ գիտական փորձերի»: Միաժամանակ հոդված 20-ում նշվում է, որ «յուրաքանչյուր ոք ունի... իր պատիվը եվ բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք», որն անշուշտ արժանապատվությունը պաշտպանելու կարելիոր հանգամանք է: Սահմանադրությունում ամրագրված է նաեվ, որ «յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը եվ օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները եվ արժանապատվությունը» (հոդված 48):

Ելնելով Աստվածաշնչյան պատկերացումներից, արժանապատվությանը հետաքրքիր մեկնաբանություն է տալիս ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Ռ. Պապայանը: Նա գտնում է, որ արժանապատվությունը մարդուն Աստծո շնորհած Աստծո հատկությունների ամբողջությունն է, որովհետև ինչպես հայտնի է Աստվածաշնչից, Աստված մարդուն ստեղծել է իր նմանությամբ եվ պատկերով, իսկ մարդու իրավունքները բխում են նրա արժանապատվությունից: Այստեղից հետևում է, որ բնական իրավունքի հիմքում ամենաառաջինը արժանապատվությունն է եվ եթե պաշտպանված է մարդու արժանապատվությունը, ապա նրա մյուս բոլոր իրավունքներն ինքնին պաշտպանված կլինեն:

Մարդու արժանապատվության նկատմամբ նման դիրքորոշումը միանշանակ ցույց է տալիս, որ այն հասարակությունը դիտում է իբրև սոցիալական բարձրագույն արժեք եվ միաժամանակ ճանաչվում է յուրաքանչյուր կոնկրետ անձնավորության անհատականությունն ու եզակիությունը: Այսպիսի ըմբռնումը մեզնից յուրաքանչյուրին պարտադրում է նաեվ հարգել ցանկացած մարդու արժանապատվությունը՝ անկախ այն բանից այդ մարդը չափահաս է, թե՛ անչափահաս, հոգեկան հիվանդ է, թե՛ առողջ, կրթված է, թե՛ ոչ:

Մարդու արժանապատվությունը հարգելը նշանակում է նաեվ, որ չի թույլատրվում հոգեֆիզիկական ճնշում գործադրել մարդկանց վրա, չի թույլատրվում խոշտանգել նրանց եվ առհասարակ գործադրել նրանց արժանապատվությունը նվաստացնող միջոցներ կամ առանց նրանց համաձայնության ենթարկել բժշկական կամ գիտական փորձերի: Մարդու արժանապատվությունը բացարձակ է եվ պետությունը պարտավոր է այն պաշտպանել ամեն տեսակի ոտնձգություններից, որտեղից էլ որ դրանք բխեն:

**Ազատության եվ անձնական անձեռնմխելիության իրավունքը** նույնպես դասվում է քաղաքացիական իրավունքների շարքը: Դա նշանակում է, որ անձն ազատ է տնօրինել իր գործողությունները, ազատ ժամանակը այնպես, ինչպես ինքն է ցանկանում, ինչպես իրեն հարմար է, սակայն այդ ազատությունը չպետք է վնասի այլ անձանց ազատությանը: Այդ իրավունքը միաժամանակ նշանակում է, որ որեվ այլ մեկն իրավունք չունի ցանկացած որեվ մեկի դեմ գործադրել ֆիզիկական, հոգեվոր ճնշում, բռնություն: Անձի անձեռնմխելիությունը ենթադրում է նաեվ կամայականության անթույլատրելիություն՝ ճնշամիջոցներ կիրառելիս: Անձի անձեռնմխելիության սահմանադրական, միջազգային-իրավական երաշխիքներն արտահայտվում են այն բանով, որ 1) հանցակազմը պետք է նախատեսված լինի օրենքով, 2) կալանքի որոշումը կարող է բողոքարկվել դատարան, եվ կալանքի առավելագույն ժամկետը

սահմանվում է օրենքով, 3) կալանավորումը կարող է որոշվել միայն դատական կարգով, 4) մարդը կարող է ազատագրվել միայն այն դեպքում, երբ նրա մեղավորությունը հաստատվել է օրենքով սահմանված կարգով իրականացված քննությանը եվ դատավարությամբ: Ազատության եվ անձնական անձեռնմխելիության իրավունքը սահմանված է միջազգային իրավունքի բազմաթիվ փաստաթղթերում: Այդ շարքում առանձնահատուկ նշանակություն ունի Մարդու իրավունքների եվ հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, որը միաժամանակ նշում է այն վեց հիմնական դեպքերը, երբ կարելի է ազատությունից զրկել (հոդված 5): Դրանց վրա է հենվում Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական դատարանը:

Հայաստանի Հանրապետությունում *անձի անձեռնմխելիությունը* երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ըստ որի մարդուն կարելի է ձերբակալել, խուզարկել միայն օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով (հոդված 41): Անձի անձեռնմխելիության երաշխիքներից է նաեվ անմեղության կանխավարկածը, ըստ որի հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով (հոդված 41): Ընդ որում «մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը», իսկ «չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի» (հոդված 18): Սահմանադրական կարելիոր երաշխիք է նաեվ այն դրույթը, որի համաձայն «արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը» դրույթը (հոդված 42): Ակնհայտ ապօրինի կալանավորման կամ ձերբակալման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է նաեվ քրեական պատասխանատվություն:

Անձի արժանապատվության, նրա ազատության իրավունքի պաշտպանության կարելիոր երաշխիքներից են նաեվ *մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը եվ բնակարանի անձեռնմխելիությունը*: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության, ինչպես եվ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը նշանակում է, որ պետության երաշխավորած այդ իրավունքով յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի հսկել իր մասին տեղեկատվությունը, արգելել անձնական, ինտիմ բնույթի տեղեկությունների տարածումը:

Անհատի մասնավոր կյանքը, այսինքն՝ այն ոլորտները, որոնք հսկում եվ տնօրինում է ինքը՝ անհատը, եվ որոնք պետք է ազատ լինեն արտաքին ներգործությունից, անհրաժեշտաբար ենթադրում է, որ դրանք պետք է պաշտպանված լինեն ցանկացած անօրինական միջամտությունից: Այսպիսի մոտեցումը պարտավորեցնում է, որ ժողովրդավարական պետությունն առավելապես պաշտպանի անհատի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, իսկ բացառիկ դեպքերում՝ անհրաժեշտ սահմանափակումները կատարվեն միմիայն օրենքի հիման վրա եվ դատարանի որոշումով:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ներառում է նաեվ անհատի անձնական կյանքի բոլոր այն կողմերի գաղտնիության պահպանումը, որոնց տարածումն այս կամ այն պատճառով համարվում է անցանկալի (օրինակ՝ կտակի գաղտնիությունը, որդեգրման գաղտնիությունը, օրագրային գրառումների գաղտնիությունը եվ այլն):

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության ոլորտն են ընդգրկվում նաեվ այն տեղեկությունների գաղտնիության ապահովումը, ովքեր անհատը վստահել է այն անձանց, որոնք իրենց մասնագիտության բերումով կոչված են պաշտպանելու մարդու օրինական շահերը (օրինակ՝ բժշկական գաղտնիքը, փաստաբանական գաղտնիքը եվ այլն): Մասնագիտական գաղտնիքների կրողներն այդպիսի տեղեկությունների հրապարակման, տարածման համար կրում են իրավաբանական կոնկրետ պատասխանատվություն:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովման հարցում կարելիոր նշանակություն ունի նաեվ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եվ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը: Ինչպես եվ մյուս դեպքերում, այս իրավունքի սահմանափակումը նույնպես կարող է կատարվել միայն օրենքի հիման վրա եվ դատարանի որոշումով:

Անձնական եվ ընտանեկան կյանքին չմիջամտելու սկզբունքից ելնելով, պետությունը պարտավորվում է հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն ընձեռել հսկելու իր մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության հավաքումն ու մշակումը: Այս սկզբունքի հիման վրա մշակվել է *«հստիս դատա»* հասկացությունը, ըստ որի յուրաքանչյուր մարդ կարող է դատական կարգով պահանջել ծանոթանալ իրեն վերաբերող տվյալներին, որոնք պահվում են ցանկացած արխիվներում եվ հաստատություններում (ներառյալ՝ հատուկ ծառայությունները): «Հաբեաս դատան» առաջին անգամ ամրագրվել է Բրազիլիայի Սահմանադրությունում, հետագայում նաեվ մի շարք այլ պետություններում:

Մասնավոր կյանքի եվ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքն ամրագրվել է միջազգային բազմաթիվ փաստաթղթերում եւ պետությունների գերակշիռ մասի սահմանադրություններում: Մասնավորապես, 33 Սահմանադրությունում մարդու եվ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների շարքում նշված է անձնական եվ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը, իր պատիվը եվ բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունքը, ինչպես նաեվ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եվ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ (հոդված 20): Այդ նույն հոդվածով արգելվում է մարդու անձնական եվ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը եվ տարածելը:

Ինչ վերաբերում է բնակարանի անձեռնմխելիության իրավունքին, ապա այս իրավունքը նույնպես կոչված է ապահովելու ինչպես անձի ազատությունն ու անձեռնմխելիությունը, այնպես էլ նրա մասնավոր եվ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Իր բուն իմաստով՝ բնակարանի անձեռնմխելիությունը նշանակում է, որ ոչ ոք չի կարող առանց օրինական հիմքի ներխուժել որեւէ մեկի բնակարանը առանց այդտեղ ապրողների թույլտվության: Այս իրավունքը եվս ներառված է մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների շարքում, ընդգրկված է բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերում եվ ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում: Մասնավորապես, այն ամրագրված է 33 Սահմանադրությամբ (հոդված 21): Ըստ սահմանադրական այդ դրույթի, բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ եվ օրենքով սահմանված կարգով: Յուրաքանչյուր պետության ներքին՝ ազգային օրենսդրությամբ սահմանվում են այն դեպքերը, երբ այդ անձեռնմխելիությունը կարող է սահմանափակվել (օրինակ, հանցագործությունը բացահայտելու, տարերային աղետների դեպքում եվ այլն) եվ միաժամանակ սահմանվում են սահմանափակման եղանակները եվ կարգը: Նշենք նաեվ, որ տվյալ դեպքում բնակարան ասելով նկատի է առնվում մարդու օրինական բնակության բոլոր վայրերը, առհասարակ կացարանը:

Անձի ազատության կարեւոր երաշխիքներից է նրա **ազատ տեղաշարժվելու եվ բնակավայր ընտրելու իրավունքը** հանրապետության տարածքում, ինչպես նաեվ հանրապետությունից դուրս գալու եվ հանրապետություն վերադառնալու իրավունքը: Այս իրավունքն անձի ինքնորոշման ազատության էական տարրն է, նրա մասնագիտական եվ հոգեվոր զարգացման, արժանապատիվ կյանքի անհրաժեշտ պայմանը: Միջազգային-իրավական փաստաթղթերում այս իրավունքը վերաբերում է յուրաքանչյուր մարդուն (օրինակ, Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրի հոդված 12, Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին դաշնագրի հոդված 12 եվ այլն), իսկ 33 Սահմանադրությամբ այդ իրավունքը վերաբերում է միայն 33 քաղաքացիներին (հոդված 22):

Ինչպես հայտնի է նախկին ՍՍՀՄ-ում գործող անձնագրային ռեժիմն իր գրանցման համակարգով փաստորեն յուրաքանչյուրին պահում էր պետական մարմինների հսկողության ներքո, ինչը էապես սահմանափակում էր նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը: Ի տարբերություն գրանցման համակարգի եվրոպական պետություններում, որպես կանոն, գործում է հաշվառման համակարգը, որը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք պետք է ոչ թե թույլտվություն ստանա տվյալ վայրում ապրելու համար, այլ կարող է իր ցանկությամբ ընտրի բնակավայրը եվ միայն տեղյակ պահի համապատասխան մարմիններին: Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ տեղաշարժման իրավունքը որոշակի դեպքերում կարող է սահմանափակվել, եթե այն վնասում է պետական եվ հասարակական անվտանգությանը, կամ այլ անձանց իրավունքներին ու ազատություններին: Սահմանափակումները կարող են վերաբերել սահմանային գոտիներին, բնապահպանական աղետների շրջաններին, այն տարածքներին, որտեղ սահմանվել են արտակարգ կամ ռազմական դրություն:

Անձի հոգեվոր ոլորտն անհարկի միջամտություններից պաշտպանելու նպատակով սահմանվում է **մտքի, խղճի եվ դավանանքի ազատության** իրավունքը: Մտքի ազատությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք կարող է ունենալ եվ յուրաքանչյուր ցանկացած գաղափարներ, իր պատկերացումներին համապատասխան նկարագրել, բացատրել եվ մեկնաբանել հասարակական ու բնական երեվոյթները, ընտրել իր համար ընդունելի արժեքների համակարգ եվ այլն: Մտքի ազատության հետ անմիջական աղերսներ ունի **կարծիք ունենալու եվ կարծիքը պնդելու իրավունքը**, ինչպես նաեվ **խոսքի ազատությունը**, որը ցանկացած տեղեկություն ու գաղափար փնտրելու, ստանալու եվ հրապարակայնորեն (բանավոր, գրավոր եվ այլն) տեղեկատվության ցանկացած միջոցով դրանք տարածելու հնարավորություն: Խղճի ազատությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է ընտրելու բարոյական արժեքներ եվ դրանցով իրականացնել բարոյական ինքնահսկողություն եվ ինքնուրույնաբար ձեւավորել իր բարոյական պարտականությունները եվ գնահատել սեփական վարքագիծն առանց արտաքին ներգործությունների: Դավանանքի ազատությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դավանել (կամ չդավանել) որեւէ կրոնական վարդապետություն, ազատորեն ընտրել եվ ունենալ կրոնական համոզմունքներ:

Դավանանքի ազատությունը հաճախ քննարկվում է պետության եվ եկեղեցու փոխհարաբերությունների հարթությունում, որքանով յուրաքանչյուր պետությունում այդ հարաբերությունները ձեւավորվել են դարերի ընթացքում եվ էական ազդեցություն ունեն հասարակական հարաբերությունների վրա առհասարակ: Պետության եվ եկեղեցու փոխհարաբերություններն ընդհանուր առմամբ արտահայտվում են երկու հիմնական ձեւով. մի դեպքում կրոնը հռչակվում է պետական (պաշտոնական) կրոն, մյուս դեպքում՝ եկեղեցին անջատվում է պետությունից (այս դեպքում պետությունը կոչվում է աշխարհիկ):

Պետական կրոնի ինստիտուտը նշանակում է, որ որոշակի կրոն (կրոնական վարդապետություն) ունի հատուկ կարգավիճակ՝ ստանալով պետության հովանավորությունն ու աջակցությունը: Պետության եվ եկեղեցու այսպիսի հարաբերությունն ամրագրված է բազմաթիվ պետությունների (Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Դանիա, Գերմանիա, Կիպրոս եվ այլն) սահմանադրություններում, ինչը վկայում է այդ պետություններում նման հարաբերությունների կարեւորությունը: Նշենք նաեւ, որ պետական կրոնի առավելությունն այդ պետությունում չի սահմանափակում դավանանքի ազատությունը, ինչը նույնպես ամրագրված է այդ պետությունների սահմանադրություններում:

Եվ այստեղ որեւէ հակասություն չկա, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Այստեղ չկա նաեւ ժողովրդավարական սկզբունքներից (մասնավորապես, գաղափարախոսական պլուրալիզմի սկզբունքից) շեղում: Բանն այն է, որ ժողովրդավարությունն առաջին հերթին նշանակում է հասարակության մեծամասնության շահերի պաշտպանություն՝ փոքրամասնության շահերը չանտեսելով: Տվյալ դեպքում այսպիսի մոտեցումից բխում է, որ հասարակության (ազգաբնակչության) մեծամասնության եվ առհասարակ ամբողջ հասարակության համար հասարակական ներդաշնակ եվ կայուն զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հատուկ հոգ տանել այդ մեծամասնության հոգեվոր արժեքները պահպանելու առումով: Հասկանալի է, որ պետական կրոնի ինստիտուտի ճանաչումը լուծում է հասարակության համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդիրը: Ինչ վերաբերում է փոքրամասնության իրավունքների պաշտպանությանը՝ այդ խնդիրը լուծում է դավանանքի (կամ ոչ մի կրոն չդավանելու) ազատության իրավունքը:

Աշխարհիկ պետություններում պետություն-եկեղեցի հարաբերակցությունը, բնականաբար, միանգամայն այլ է, սակայն պետությունից եկեղեցու անջատումն ամենեւին չի նշանակում մեկը մյուսից մեկուսացում: Իհարկէ, իրավական առումով այդ անջատումը միանշանակ հասկացվում է մեկը մյուսի գործունեությանը չմիջամտել, սակայն այլ առումներով ո՛չ եկեղեցին կարող է անտարբեր լինել պետության նկատմամբ, ո՛չ էլ պետությունը՝ եկեղեցու: Պետության եվ եկեղեցու փոխհարաբերությունն այս դեպքում պայմանավորված է մի շարք գործոններով՝ պատմական, հոգեվոր-մշակութային եվ այլն:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Քաղաքական իրավունքները եվ ազատությունները** քաղաքացու իրավունքների ու ազատությունների կարեւորագույն խումբն է, որոնց ամբողջությունն ապահովում է պետության քաղաքական կյանքին քաղաքացիների ակտիվ մասնակցությունը, դրանով իսկ նախապայմաններ ստեղծելով մարդկանց անձնական իրավունքների ու ազատությունների դրսեվորման համար: Պետության հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելն առաջին հերթին նշանակում է մասնակցել պետական իշխանության ձեւավորմանը եվ այդ իշխանության իրականացմանը: Որքանով ժողովրդավարական պետությունները որդեգրել են «իշխանությունը պատկանում է ժողովրդին» (տես օրինակ, ՀՀ Սահմանադրություն, հոդված 2), իշխանության աղբյուրը ժողովուրդն է սկզբունքը, արդեն այստեղից բխում է, որ ժողովուրդը, այսինքն՝ քաղաքացիների ամբողջությունը, պետք է ձեւավորի պետական իշխանությունը եվ իրականացնի այդ իշխանությունն ի շահ ժողովրդի: Այս խնդիրն իրականացնելու համար, բնականաբար, անհրաժեշտ է որպեսզի քաղաքացիները կարողանան ազատորեն արտահայտել իրենց կամքը, այլ կերպ ասած՝ ունենալ քաղաքական իրավունքներ ու ազատություններ եվ որոշակի կարգով դրանք գործադրելու հնարավորություն: Արդի ժողովրդավարությունը ճանաչում է պետական իշխանությունն իրականացնելու երկու հիմնական եղանակ՝ անմիջական (կամ ուղղակի) եվ միջնորդավորված (կամ անուղղակի): Առաջինի դեպքում քաղաքացիներն ազատ ընտրությունների եվ հանրաքվեների միջոցով արտահայտում են իրենց կամքն անմիջականորեն եվ ընտրությունների ու հանրաքվեի արդյունքների հիման վրա ձեւակերպվում են համապատասխան որոշումներ: Երկրորդ դեպքում՝ իշխանությունն իրականացնում են քաղաքացիների ընտրած ներկայացուցիչները՝ պետական եվ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Այս ամենը վերաբերում է իշխանության իրականացման մի կողմին: Մյուս կողմն այն է, որ քաղաքացիներն անձամբ իրենք կարող են մասնակցել պետական իշխանության մարմինների աշխատանքներին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ քաղաքական իրավունքների եվ ազատությունների հիմքը **պետության գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքն է**, որը բոլոր քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն ընդգրկվել քաղաքականության ոլորտը, ներառվել պետական խնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման եվ կատարման գործընթացի մեջ: Այս իրավունքը ձեւավորվել է դեռեւս Լուսավորականության դարաշրջանի հայեցակարգերում եվ ավանդաբար ու իրավացիորեն համարվում է մարդկանց բնական հավասարության եվ ազատության արտահայտություն: Հետագայում, ինչպես եվ մեր օրերում, այս իրավունքի իրականացման երաշխիք է համարվում հասարակության ժողովրդավարական կազմակերպումը, որը եվ հնարավորություն է տալիս քաղաքացիներին ակտիվորեն մասնակցել քաղաքական գործունեությանը:

Քաղաքական այս իրավունքի իրականացման համար բնականաբար հարկավոր է ապահովել եվ երաշխավորել մի շարք այլ իրավունքներ, ինչպիսիք են ընտրական իրավունքը (ընտրելու եվ ընտրվելու իրավունքը), հանրաքվեին մասնակցելու իրավունքը, միավորումներ կազմելու իրավունքը, կուսակցություններ կազմելու եվ դրանց անդամագրվելու իրավունքը, ժողովներ, հանրաքվեներ, երթեր, ցույցեր անցկացնելու իրավունքը, խոսքի ազատության իրավունքը, տեղեկատվության ազատության իրավունքը եվ այլն:

Քաղաքական իրավունքները եվ ազատություններն արձանագրված են մի շարք հիմնարար միջազգային իրավական փաստաթղթերում, ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում: Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իր երկրի կառավարմանը», ինչպես նաեվ «յուրաքանչյուր ոք իր երկրում ունի պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք» (հոդված 21): Նույնաբովանդակ դրույթ է սահմանված նաեվ Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին դաշնագրում (հոդված 25), սակայն Հռչակագրի հետ համեմատած կա մի էական տարբերություն: Հռչակագրում այդ իրավունքը վերապահված է բոլորին, անկախ քաղաքացիությունից, Դաշնագրում միայն քաղաքացիներին: Այս դրույթն իր արտահայտությունն է գտել նաեվ ՀՀ Սահմանադրությունում, ուր սահմանված է, որ ՀՀ չափահաս քաղաքացիներն անմիջականորեն կամ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցում են պետության կառավարմանը (հոդված 27): Այստեղ նշենք, որ առհասարակ քաղաքական իրավունքները սովորաբար վերապահվում են միայն քաղաքացիներին, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ պետության քաղաքական, տնտեսական, մշակութային, հոգեվոր զարգացման, բարգավաճման, ազգային անվտանգության եվ մյուս հիմնախնդիրների համալիր լուծումն առաջին հերթին այդ պետության քաղաքացիների պարտականությունն է, ուստի եվ պետության համար կենսական նշանակություն ունեցող ոլորտի՝ քաղաքականության, հիմնահարցերով բնականորեն պետք է զբաղվեն քաղաքացիները: Այս առնչությամբ նշենք, որ Մարդու իրավունքների եվ հիմնական ազատությունների եվրոպական կոնվենցիան արձանագրում է, որ Կոնվենցիայի Կողմերը (պետությունները) կարող են որոշակի դեպքերում սահմանափակումներ նախատեսել օտարերկրացիների քաղաքական գործունեության համար (հոդված 16): Նշենք նաեվ, որ առանձին կոնկրետ դեպքում առկա սահմանափակումները կարող են վերացվել, ինչպես օրինակ Հայաստանում. ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ վերացվեցին փախստականների ընտրական իրավունքի սահմանափակումները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում եվ նրանց հնարավորություն տրվեց մասնակցել այդ ընտրություններին, ինչպես եվ ընտրվել այդ մարմիններում:

Ինչպես արդեն նշեցինք, պետության կառավարման գործերին մասնակցելու իրավունքն ենթադրում է **ընտրական իրավունք**, որը թերեւս կարեւորագույններից է քաղաքական իրավունքների ու ազատությունների համակարգում: Ընտրական իրավունքը ժողովրդի կամքի ազատ արտահայտման եվ քաղաքական գործընթացներին մասնակցելու հիմնական ձեւն է եվ ժողովրդի (ազգի) ինքնիշխանության արտահայտությունը: Ընտրական իրավունքն իրականացվում է ընտրելու իրավունքով, որը կոչվում է նաեվ **ակտիվ ընտրական իրավունք**, եվ ընտրվելու իրավունքով, որը կոչվում է **պասիվ ընտրական իրավունք**: Ժողովրդավարական պետություններում ակտիվ ընտրական իրավունքից օգտվում են բոլոր չափահաս քաղաքացիները՝ անկախ սեռից, զբաղմունքի տեսակից, գույքային դրությունից, կրթությունից եվ այլ հանգամանքներից: Մասնավորապես, Հայաստանում ակտիվ ընտրական իրավունք վերապահված է 18 տարեկան դարձած բոլոր քաղաքացիներին՝ առանց որեւէ սահմանափակման: Ընտրական իրավունքից (եվ՝ ակտիվ, եվ՝ պասիվ) չեն կարող օգտվել միայն դատարանի վճռով անգործունակ ճանաչված եվ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված դատապարտված եվ պատիժը կրող քաղաքացիները (ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 3, 27):

Պասիվ ընտրական իրավունքը նշանակում է, որ ընտրովի պետական եվ տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական ընտրովի պաշտոններում քաղաքացիներն ունեն ընտրվելու իրավունք, այսինքն՝ կարող են իբրեւ թեկնածու գրանցվել, վարել քարոզչություն եվ այլն: Պասիվ ընտրական իրավունքը, ի տարբերություն ակտիվ ընտրական իրավունքի, սովորաբար ունենում է ավելի խիստ սահմանափակումներ (ընտրական ցենզեր), մասնավորապես, չափահասության պահանջից բացի, այս

դեպքում անհրաժեշտ է բավարարել նաեւ մի շարք այլ պահանջների՝ տարիքային, կրթական, գույքային, մշտական բնակության եւ այլն: Այսպես, համազգային ներկայացուցչական մարմիններում պատկերված ընտրական իրավունքից օգտվելու համար Կանադայում, Արգենտինայում, Բելգիայում սահմանված են գույքային ցենզեր, բազմաթիվ պետություններում տարածված են հատկապես տարիքային ցենզերը, իսկ երկպալատ խորհրդարանների վերին պալատների համար ավելի բարձր տարիքային սահմանափակումներ: Օրինակ՝ ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Չինաստանում ստորին պալատում ընտրվելու իրավունք ունեն 25 տարեկան դարձած քաղաքացիները, իսկ վերին պալատում՝ 30 տարեկան: Հայաստանում պատգամավորների համար սահմանված է 25 տարին, իսկ Հանրապետության Նախագահի համար 35 տարին: Այդ պաշտոնների համար սահմանված են նաեւ նստակեցության ցենզ, քաղաքացիության ցենզ եւ այլն:

Որոշ հեղինակներ ընտրական իրավունքի բաղկացուցիչ մաս են համարում նաեւ ընտրողների վստահությունը չարդարացրած անձանց, հատկապես պատգամավորների, **ետկանչման իրավունքը**: Ասկայն անհրաժեշտ է նշել, որ մինչեւ օրս մշակված չեն այնպիսի օբյեկտիվ չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր լինի տարբերակել ընտրված անձանց «լավ» եւ «վատ» աշխատանքը: Բացի այդ, դժվար է որոշել թե որքան ժամանակահատվածից հետո կարելի է խոսել կատարված աշխատանքի մասին եւ կատարել համապատասխան եզրակացություններ: Բացառված չէ նաեւ, որ չընտրված մրցակից թեկնածուները կարող են սուբյեկտիվ պատճառներով սկսել ետկանչման իրավունքի գործընթացը եւ դրանով իսկ խանգարել ընտրված անձի աշխատանքների կատարմանը: Արդյունքում տվյալ պաշտոնի լիազորությունների կատարման համար սահմանված ողջ ժամկետն ընդհանուր առմամբ կարող է վերածվել պերմանենտ ընտրական գործընթացի: Այստեղ թերեւս հարկ է նշել, որ ժողովրդավարական պետություններում բոլոր ընտրովի պաշտոնների համար սահմանված են որոշակի կոնկրետ ժամկետներ եւ ըստ էության դրանով իսկ այդ պաշտոններում ընտրվածները մնում են ընտրողների մշտական հսկողության ներքո, որովհետեւ այդ անձինք սահմանված ժամկետը լրանալուց հետո վերստին ենթակա են ընտրողների առջեւ «քննության»:

Ետկանչման իրավունքը վստահում է նաեւ ազատ մանդատի գաղափարի իրականացմանը, որովհետեւ եթե ըստ ազատ մանդատի ենթադրվում է, որ ընտրված անձը համազգային ներկայացուցչական մարմնում իր գործունեության մեջ չի ղեկավարվում ընտրողների պատվիրաններով եւ հաշվետու չէ նրանց, ապա ետկանչման իրավունքի առկայության դեպքում նա ստիպված կլինի իր գործունեությունը կենտրոնացնել կոնկրետ ընտրատարածքում վնասելով համապետական շահերին:

Այսպիսով, թեւ արտաքուստ թվում է, որ ետկանչման իրավունքը հնարավորություն է տալիս մշտական հսկողություն սահմանել պատգամավորների եւ մյուս ընտրված անձանց գործունեության նկատմամբ եւ թույլ չտալ, որ նրանք չարաշահեն իրենց դիրքը, սակայն օբյեկտիվորեն այդ իրավունքի կիրառումը կարող է հանգեցնել բացասական հետեւանքների: Նշված եւ մի շարք այլ պատճառներով արդի ժողովրդավարական պետություններում ետկանչման իրավունքը չի ընդունվում, որովհետեւ այն կարող է դառնալ քաղաքական շահարկումների լուրջ առարկա եւ ստեղծել ավելորդ քաղաքական լարվածություն:

Պատահական չէ, որ ետկանչման իրավունքը լայնորեն ընդունված է ամբողջատիրական պետություններում: Մասնավորապես, այդպիսի իրավունք սահմանված էր ՍՄԶ Սահմանադրությամբ եւ ՀՍՄՀ Սահմանադրությամբ: Այդ իրավունքն իրականում թույլ էր տալիս հսկել ոչ թե պատգամավորի գործունեությունը որքանով է համապատասխանում ընտրողների շահերին, այլ փաստորեն որքանով է արդարացրել իշխող կուսակցության՝ ՍՄԿԿ-ի վստահությունը, քանզի կուսակցությունն էր վերահսկում ողջ ընտրական գործընթացը, այդ թվում՝ ետկանչման իրավունքի գործադրումը:

Անդրադառնալով ընտրական իրավունքին, դժվար չէ համոզվել, որ ժողովրդավարական պետությունների համար այդ իրավունքն ունի չափազանց մեծ կարեւորություն, քանի որ ժողովրդավարությունն ըստ էության պայմանավորված է առաջին հերթին ընտրություններով, այսինքն՝ դրանց միջոցով է որոշվում թե որքանով է ժողովուրդն իսկապես մասնակցում իշխանության իրականացմանը: Այդ պատճառով քաղաքացիների ընտրական իրավունքի գործադրմանը մեծ տեղ է հատկացվում եւ բոլոր պետություններում մշտապես փորձում են որքան հնարավոր է բոլոր կարգի ընտրությունների ընթացքն ավելի կատարելագործել, ընտրությունները դարձնել թափանցիկ եւ վերահսկելի: Մշակվում են այնպիսի միջոցներ (այդ թվում՝ տեխնիկական), որոնք կբացառեն ամեն տեսակ կեղծիքները եւ ընտրակաշառքները:

Մեծ ուշադրություն է դարձվում ընտրական վեճերի արդարացի լուծմանը եւ այդ նպատակով կիրառվում են չափորոշված մեխանիզմներ եւ ընթացակարգեր: Առանձին երկրներում (Կոլումբիա, Նիկարագուա եւ այլն) գործում է անկախ եւ ինքնուրույն ընտրական իշխանություն (օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների հետ մեկտեղ), որն այդ նպատակով ստեղծված դատարանների միջոցով իրականացնում է ընտրական արդարադատություն:

Հասարակական-քաղաքական գործունեությանը ակտիվորեն մասնակցելու եվ քաղաքական իրավունքներն ու ազատություններն իրականացնելու համար կարելի է **մարդկանց միավորումներ կազմելու իրավունքը**, որը կոչվում է նաեվ **միություններ եվ միավորումներ ստեղծելու ազատություն**: Այս իրավունքի առկայությունը պայմանավորված է այն բանով, որ հասարակական-քաղաքական կյանքին մարդիկ մասնակցում են ոչ միայն անհատապես, այլև կոլեկտիվ ուժերով եվ այդ իրավունքը կոչված է նպաստելու տարբեր տիպի կազմակերպություններ ստեղծելուն՝ համատեղ ուժերով նպատակամղված գործողություններ կատարելու համար: Որպես կանոն, մարդիկ միավորվում են որոշակի գաղափարների շուրջը եվ իրենց նպատակներն իրագործելու համար ստեղծում են ինքնակառավարվող կազմակերպություններ: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր կազմակերպություն պետք է ունենա որոշակի գաղափարախոսություն, որի հիման վրա կազմվում է գործունեության ծրագիր, իսկ ներքին ինքնակառավարման հարցերը կարգավորելու նպատակով՝ կանոնադրություն:

Ըստ գործունեության ոլորտների, այդ միավորումներն ու միությունները բաժանվում են երկու խմբի՝ հասարակական կազմակերպությունների եվ հասարակական-քաղաքական կազմակերպությունների: Վերջինները կոչվում են նաեվ քաղաքական կուսակցություններ կամ պարզապես՝ կուսակցություններ: Ի դեպ, որպես կանոն, հասարակական կազմակերպությունների անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր ոք, իսկ կուսակցությունների անդամներ կարող են լինել միայն քաղաքացիները:

Միավորման իրավունքն իրականացվում է միայն օրենքով սահմանված շրջանակներում: Սովորաբար արգելվում է ստեղծել զաղտնի ընկերություններ, ռազմականացված կազմակերպություններ, հակահասարակական նպատակներ հետապնդող միավորումներ: Առանձին պետություններում արգելվում է քաղաքական գործունեությամբ զբաղվել որոշակի ոլորտներում (զինված ուժերում եվ այլն):

Այս իրավունքը նույնպես ամրագրված է միջազգային-իրավական փաստաթղթերում եվ ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությունում սահմանված է, որ «յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու եվ դրանց անդամագրվելու իրավունք» (հոդված 25): Միաժամանակ նույն հոդվածով սահմանվում է «կուսակցություններ ստեղծելու եվ դրանց անդամագրվելու» միայն քաղաքացիների իրավունքը, ինչպես նաեվ զինված ուժերում եվ իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ այդ իրավունքը սահմանափակելու դրույթը:

Քաղաքական իրավունքների ու ազատությունների շարքում կարելի է նաեվ քաղաքացիների **ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու իրավունքը**, որը հնարավորություն է ընձեռում նրանց ակտիվորեն մասնակցել հասարակական-քաղաքական իրադարձություններին: Այդ իրավունքն անվանվում է նաեվ **ժողովներ** եվ այլն **անցկացնելու ազատություն**: Այս իրավունքը քաղաքացիների անհատական եվ կոլեկտիվ կարծիքը հրապարակայնորեն արտահայտելու ձևերից է, որի միջոցով նրանք արտահայտում են իրենց վերաբերմունքն իրենց հուզող երեվույթների ու հարցերի նկատմամբ: Քաղաքացիներն այդ իրավունքներից օգտվում են ինչպես անհատական ինքնաարտահայտման եվ ինքնահաստատման, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքին համատեղ մասնակցելու համար:

Վերոնշյալ իրավունքների (ազատությունների) իրացման համար պահանջվում է հանրային միջոցառումների կազմակերպման եվ դրանց մասնակցելու իրավունք, միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ նյութական նախադրյալներ (հասարակական շենքեր, փողոցներ եվ այլն) պահանջելու իրավունք եվ անհրաժեշտության դեպքում պետական հարկադրման եվ պետական պաշտպանության օգնությանը դիմելու իրավական հնարավորություն:

Տարբեր պետություններում այդ իրավունքներն իրացվում են՝ ա) ծանուցման կարգով, երբ քաղաքացիները զանգվածային, հանրային միջոցառումների անցկացման մասին նախապես տեղեկացնում են իրավասու պետական մարմիններին, բ) թույլատվության կարգով, երբ քաղաքացիները միջոցառումների անցկացման համար համապատասխան պետական մարմիններից թույլտվություն են ստանում, գ) ներկայանալու կարգով, երբ քաղաքացիները կարող են անցկացնել միջոցառումը առանց պետական մարմիններին նախապես տեղյակ պահելու: Թույլտվության կարգը կիրառվում է ամբողջատիրական պետություններում, որտեղ իշխանություններն են որոշում տվյալ միջոցառման անցկացման նպատակահարմարությունը: Ժողովրդավարական պետություններում սովորաբար կիրառվում է ծանուցման կարգը, եվ ըստ այդմ իշխանությունները տեղյակ լինելով միջոցառման անցկացման մասին իրենց հերթին պարտավորվում են ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ապահովել հասարակական կարգը եվ անվտանգությունը: Ընդսին, պետական մարմինները միջոցառումը կարող են արգելել միայն այն դեպքում, եթե այդ միջոցառման նպատակները եվ պայմանները կարող են վտանգել հասարակական կարգուկանոնը, այլոց իրավունքներն ու ազատությունները: Այդ հարցում իշխանությունների կամայականությունները կանխելու նպատակով պահանջվում է, որ օրենսդրությամբ հստակորեն սահմանվի սահմանափակումների հիմքերի ցանկը: Հասկանալի է, որ զանգվածային միջոցառումների նպատակները չեն կարող հակասել սահմանադրությանն ու գործող օրենսդրությանը:



Այս իրավունքները նույնպես ամրագրված են միջազգայնիրավական փաստաթղթերում եվ ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում: ՀՀ Սահմանադրությունում եվ ամրագրված է, որ «քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր եվ ցույցեր անցկացնելու իրավունք» (հոդված 26):

Քաղաքական իրավունքների ու ազատությունների շարքում կարեվոր տեղ է զբաղեցնում **հանրագիր (պետիցիա) ներկայացնելու (դիմելու) իրավունքը** (կամ պարզապես **հանրագրի իրավունք**): Քաղաքացիների պետական մարմիններ եվ տեղական ինքնակառավարման մարմիններ դիմում (բողոք), պահանջներ ներկայացնելու իրավունքը պետության քաղաքական կյանքին մասնակցելու ակտիվ ձեւ է եվ միաժամանակ խախտված իրավունքները վերականգնելու եղանակ: Այդ ճանապարհով քաղաքացիներն անհատապես եվ համատեղ, ակտիվորեն միջամտում եվ մասնակցում են հանրային նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Այս իրավունքի առկայությունը միաժամանակ ենթադրում է, որ պետական եվ տեղական ինքնակառավարման մարմինները եվ պաշտոնատար անձինք պարտավոր են օրենսդրությամբ հաստատված կարգով եվ սահմանված ժամկետներում ընդունել առաջադրված հարցերի վերաբերյալ օրինական որոշումներ: Մի շարք պետություններում հանրագրի իրավունքը վերապահված է ոչ միայն քաղաքացիներին, այլեւ յուրաքանչյուրին (օրինակ, Հունգարիայում): ՀՀ Սահմանադրությունում հանրագրի իրավունք նախատեսված չէ, սակայն որքանով միջազգային-իրավական փաստաթղթերում այդ իրավունքն առկա է եվ մեր Հանրապետությունը միացել է այդ փաստաթղթերին, հետեւաբար ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթներով (հոդվածներ 4, 6, 43 եվ այլն) հանրագրի իրավունքն օրինական կարգով կարող է գործադրվել քաղաքացիների քաղաքական գործունեության մեջ:

Քաղաքական իրավունքների ու ազատությունների համակարգում առանձնահատուկ նշանակություն եվ դերակատարություն ունի **խոսքի ազատությունը**: Խոսքի ազատությունը, ինչպես արդեն նշել ենք, մարդու անձնական (քաղաքացիական) իրավունքների եվ ազատությունների մասն է կազմում, սակայն այն միաժամանակ քաղաքական իրավունք է: Իբրեւ մարդու անձնական իրավունք, խոսքի ազատությունն անձի ազատության, իսկ իբրեւ քաղաքական իրավունք այն քաղաքացիների քաղաքական ազատության դրսեվորումն է:

Խոսքի ազատությունն ընդհանուր առմամբ **մտքի, խղճի ազատության, կարծիքները պնդելու եվ համոզմունքներն արտահայտելու ազատության, գրական, գեղարվեստական, գիտական ստեղծագործության ազատության** եվ մի շարք այլ ազատությունների ընդհանրական դրսեվորումն է: Խոսքի ազատությունը միաժամանակ նշանակում է, որ ազատությամբ պետք է օժտված լինեն բոլոր այն միջոցները, որոնցով կարող են արտահայտվել, տարածել խոսքը, գաղափարները, գաղափարախոսական ուսմունքները եվ առհասարակ ցանկացած տեղեկատվություն: Սա իր հերթին նշանակում է, որ խոսքի ազատությունը հնարավոր է իրականացնել այն դեպքում, երբ առկա է **մամուլի ազատությունը** (արդի պայմաններում նաեւ զանգվածային լրատվության մյուս բոլոր միջոցները՝ հեռուստատեսությունը, էլեկտրոնային տեղեկատվության ժամանակակից այլ միջոցները): Այս առումով, ներկայումս ավելի հաճախ կարեվորվում է **տեղեկատվության ազատության հասկացությունը**, իբրեւ տեղեկատվություն ընդունելու, հաղորդելու, տարածելու ազատություն:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «խոսքի ազատություն», «մամուլի ազատություն», «տեղեկատվության ազատություն» հասկացությունները անխզելիորեն կապված են, եվ պատահական չէ, որ հաճախ դրանցից որեւէ մեկը օգտագործելիս նկատի ունեն նաեւ մյուս ազատությունները: Ավանդաբար, հատկապես Արեւմուտքում, առավել հաճախ օգտագործվում է խոսքի ազատության հասկացությունը, եթե մյուս հասկացությունների առանձնացման անհրաժեշտությունը չի առաջանում:

Խոսքի ազատության անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ դեռեւս գոյություն չունեն այնպիսի համապարփակ, գիտականորեն հիմնավորված, համընդգրկուն եվ բոլորի կողմից ճանաչված ուսմունքներ, որոնք միանշանակորեն կարող են բացատրել հասարակական երեւոյթների ու հարաբերությունների, իրադարձությունների պատճառահետեւանքային կապերը: Այդ պատճառով գոյություն չունեն նաեւ հստակ չափանիշներ, որոնք հնարավորություն ընձեռեին նախապատվությունը տալու որեւէ մեկին եվ որեւէ հիմքով ժխտել կամ մերժել մյուսները: Այս տեսակետից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր ոք ազատ է ունենալ այնպիսի գաղափարներ, դավանել այնպիսի ուսմունքներ, որոնք ինքը հարմար է գտնում: Հետեւաբար հասարակության մեջ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն յուրաքանչյուրի անհատականությունը, այս կամ այն հարցի սեփական ըմբռնումը եվ մեկնաբանությունը ունենալու եվ արտահայտելու հնարավորությունը:

Խոսքի ազատության վերաբերյալ այսպիսի պատկերացումը ժողովրդավարական հասարակարգերի համար դարձել է ապրելակերպ եվ իբրեւ սկզբունք կիրառվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Ըստ այդ սկզբունքի կյանքի հավասար իրավունք ունեն բոլոր կարծիքները, բոլոր գաղափարներն ու ուսմունքները, անկախ այն բանից, թե դրանք որ բնագավառին են վերաբերում՝

քաղաքականության, մշակույթի, կրոնի թե սոցիալական ոլորտի: Այս առումով ժողովրդավարական հասարակությունն անվանվում է նաեվ պլյուրալիստական, այսինքն այնպիսին, որտեղ առկա է ամեն ինչի բազմազանություն, հավասար հնարավորություններով: Ըստ այդմ տարբերում են՝ գաղափարական բազմազանություն, գաղափարախոսական բազմազանություն, քաղաքական բազմազանություն, մշակութային բազմազանություն, լեզվական բազմազանություն եվ այլն, եվ այլն:

Երկու խոսք հատուկ **գաղափարախոսական պլյուրալիզմի (բազմազանության)** մասին, քանզի հասարակության մեջ բազմազանության առկայությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպիսի գաղափարախոսություն է ընկած մեր պատկերացումների հիմքում: Բանն այն է, որ ամբողջատիրական հասարակարգերում ելնելով որոշակի գաղափարախոսական կաղապարներից ընդունվում է միայն մեկ գաղափարախոսություն, իսկ մյուս գաղափարախոսությունները մերժվում են եվ արգելվում: Այդպես էր, օրինակ, ՍՍՀՄ-ում, որտեղ ընդունվում էր միայն մեկ գաղափարախոսություն՝ մարքս-լենինյան, որը համարվում էր միակ ճիշտ, գիտական ուսմունքը, իսկ մյուսները՝ ոչ-գիտական եվ մերժվում եվ, ըստ էության, արգելված էին: Այսպիսի մոտեցումը հանգեցնում էր նաեվ առհասարակ ամեն տեսակի այլ տիպի բազմազանությունների մերժմանը, որովհետեվ տվյալ գաղափարախոսության շրջանակներում յուրաքանչյուր երեվույթ, իրադարձություն, գարգացում դիտարկվում է կոնկրետ տեսանկյունով եվ կարող է ստանալ մեկ բացատրություն:

Ազատամտական գաղափարախոսությունը նախ եվ առաջ ազատական է այն առումով, որ իր հիմքում, հայեցակարգի հիմնական սկզբունքների շարքում ընդունում է գաղափարախոսական բազմազանությունը:

Գաղափարախոսական պլյուրալիզմի հետ սերտ աղերսներ ունի **քաղաքական պլյուրալիզմը (բազմազանությունը)**, որը **նշանակում է** տարբեր քաղաքական ուժերի (եվ առաջին հերթին կուսակցությունների) գոյության հավասար հնարավորություններ: Որքանով կուսակցությունները միավորվում են որոշակի գաղափարների շուրջը եվ հետապնդում են միեվնույն նպատակները, այսինքն՝ դավանում են որոշակի գաղափարախոսություն, հետեվաբար գաղափարախոսական պլյուրալիզմի սկզբունքին համապատասխան կարող են լինել տարբեր գաղափարախոսություններ ունեցող կուսակցություններ: Այլ կերպ ասած՝ գաղափարախոսական բազմազանությունը պայմանավորում է նաեվ քաղաքական բազմազանություն՝ բազմակուսակցականություն: Իհարկե սա չի նշանակում, որ քաղաքական պլյուրալիզմը միանշանակ բխում է գաղափարախոսական պլյուրալիզմից, որովհետեվ միաժամանակ կարող են լինել միեվնույն գաղափարախոսությունը դավանող զանազան կուսակցություններ:

Խոսելով խոսքի ազատության մասին, անհրաժեշտ է նշել նաեվ, որ այդ ազատության ապահովման կարեվորագույն երաշխիք է **գրաքննության** բացակայությունը: Գրաքննությունը նշանակում է պաշտոնական իշխանությունների վերահսկողությունը տպագիր արտադրանքի, ներկայացումների, ռադիո եվ հեռուստահաղորդումների, կինոնկարների, երբեմն նաեվ մասնավոր գրագրության բովանդակության նկատմամբ, որի նպատակն է իշխանությունների տեսակետից անցանկալի կամ վնասակար համարվող գաղափարների ու տեղեկությունների տարածման արգելումը: Ժողովրդավարական պետություններում գրաքննությունն արգելվում է (բացառությամբ՝ ռազմական կամ արտակարգ դրությունների ժամանակ), որքանով հռչակված է մամուլի եվ տեղեկատվության ազատություն: Թեեվ գրաքննության արգելումը հռչակված է ժողովրդավարական պետությունների գերակշիռ մասի սահմանադրություններում, դա ամենեվին չի նշանակում, որ կարծիք արտահայտելու ազատությունը, խոսքի ազատությունը բացարձակ է: Բնականաբար արգելվում է ազատություններն օգտագործել լեզիտիմ իշխանությունները տապալելու կոչերը, օրենքով սահմանված պետական գաղտնիքների հրապարակումը, պատերազմի եվ ամեն տեսակի բռնության քարոզը, ազգային, ռասայական, կրոնական ատելության բորբոքումը, հանցագործությունների դրդումը, այլ անձանց վիրավորելը եվ զրպարտելը, ոտնձգությունները հասարակական բարոյականության նկատմամբ եվ այլն: Այլ կերպ ասած, խոսքի ազատությունը մեծ հնարավորություններ ընձեռելով մարդկանց ու քաղաքացիներին արտահայտելու իրենց կարծիքը եվ տեսակետները հասարակական երեվույթների ու անցուդարձերի վերաբերյալ եվ դրանով իսկ ակտիվորեն մասնակցել հասարակական-քաղաքական կյանքին, միաժամանակ լուրջ պարտականություններ ու պատասխանատվություն է առաջացնում: Պատասխանատվությունը նշանակում է հաղորդել ճիշտ եվ ստուգված տեղեկատվություն, չվնասել այլոց իրավունքները, հարգել մարդկանց արժանապատվությունը:

Խոսքի ազատության իրավունքը ամրագրվել է միջազգային-իրավական բազմաթիվ փաստաթղթերում եվ ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է, որ «յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եվ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից», ինչպես նաեվ «իր կարծիքը

պնդելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն» (հոդված 24):

Ինչպես արդեն նշել ենք, խոսքի ազատության հետ անմիջականորեն առնչվող իրավունքներից է կարծիք ունենալու եվ արտահայտելու իրավունքը, որը քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում ունի հետեվյալ ձևակերպումը. «1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքին: 2. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է անկախ պետական սահմաններից բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու եվ տարածելու ազատությունը: 3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ եվ հատուկ պատասխանատվություն: Հետեվաբար այն կապված է որոշ սահմանափակումների հետ, որոնք սակայն պետք է սահմանվեն օրենքով եվ լինեն անհրաժեշտ՝ ա) այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար. բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար» (հոդված 19):

## **ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մարդու իրավունքներն ու ազատությունները կլինեն թերի եվ չեն կարող ամբողջությամբ դրսևորվել առանց *տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների ու ազատությունների*: Ինչպես նշված է Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի նախաբանում «վախից ու կարիքից անկախ մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնցում յուրաքանչյուրը կարող է օգտվել իր տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքներից այնպես, ինչպես քաղաքացիական եվ քաղաքական իրավունքներից»: Այլ կերպ ասած, որքան կարելի է քաղաքացիական եվ քաղաքական իրավունքները, նույն աստիճանի կարելիություն ունեն նաեվ տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքները: Միաժամանակ հարկ է նշել, որ դրանց բոլորի համատեղ իրականացումն է ապահովում մարդու արժանապատիվ գոյությունը:

Յուրաքանչյուր պետություն, որը մարդու իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը համարում է իր գործունեության հիմնական խնդիրը, պարտավոր է տնտեսական, սոցիալական եվ մշակութային ոլորտներում իրականացնել այնպիսի բարեփոխումներ եվ վարել այնպիսի քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռի յուրաքանչյուրին օգտվել այդ իրավունքներից: Միաժամանակ, ինչպես նշվում է հիշյալ Դաշնագրում «յուրաքանչյուր պետություն պարտավոր է անհատական կարգով, մասնավորապես, տնտեսական եվ տեխնիկական բնագավառներում եղած ռեսուրսների առավելագույն սահմաններում միջոցներ ձեռնարկել, որ աստիճանաբար, բոլոր հարկ եղած եղանակներով, ներառյալ, մասնավորապես օրենսդրական միջոցների ընդունումը, ապահովի մարդու՝ սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լրիվ իրականացումը» (հոդված 2):

Տնտեսական իրավունքների շարքում սովորաբար ընդգրկվում են աշխատանքի իրավունքը, սեփականության իրավունքը, ձեռներեցության իրավունքը, գործադուլի իրավունքը, գործատուների եվ աշխատողների միջեվ կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը, աշխատողների շահերը պաշտպանող ազգային եվ միջազգային կազմակերպություններում միավորվելու իրավունքը եվ այլն:

Տնտեսական իրավունքների ցանկում առաջնահերթությունը թերեվս պատկանում է *աշխատանքի իրավունքին*, որը նշանակում է՝ յուրաքանչյուր ոք ունի իր ֆիզիկական գոյությունը, նյութական եվ հոգեվոր պահանջումները բավարարելու նպատակով սեփական աշխատանքով միջոցներ վաստակելու հնարավորություն: Ինչպես նշված է Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, յուրաքանչյուրն ազատ է ընտրելու իրեն հարմար աշխատանք, իսկ պետության խնդիրն է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր այդ իրավունքի իրացման համար (հոդված 6):

Ազատ աշխատանքի իրավունքն առհասարակ ենթադրում է մի շարք համալիր պայմանների առկայություն, առանց որոնց այդ իրավունքի իրականացումը կորվի հարցականի տակ եվ կստանա ձեվական բնույթ: Այդ պայմանների թվում են՝ *աշխատանք ընտրելու կամ չաշխատելու հնարավորության ազատություն, գործունեության կամ մասնագիտության ոլորտի ընտրություն, հարկադիր աշխատանքի արգելում, աշխատանքի անհրաժեշտ ու բավարար պայմաններ, վարձատրության որոշակի կարգ,*

**աշխատանքի անվտանգության ապահովում, հիգիենիկ եվ սանիտարական անհրաժեշտ պայմանների ապահովում, հանգստի իրավունք եվ այլն:**

Աշխատանքի իրավունքի ապահովման խնդիրը մեծապես կախված է բնակչության զբաղվածության հիմնախնդրի լուծման հետ: Այսինքն՝ անհրաժեշտ է ստեղծել այնքան աշխատատեղ, որպեսզի յուրաքանչյուրը, ով ցանկանում է աշխատել, կարողանա գտնել իր համար ցանկալի (իր մասնագիտությանը եվ որակավորմանը համապատասխանող) աշխատանք: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է ապահովել գործազրկությունից պաշտպանվելու իրավունքը:

Աշխատանքի իրավունքի ապահովման հարցում կարելի է հանգամանք է նաեվ մասնագիտական ուսուցումը, որի կազմակերպման համար պատասխանատու է պետությունը: Ինչպես ամրագրված է Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, դաշնագրի մասնակից-պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ աշխատանքի իրավունքի լիակատար իրականացման համար, որոնք ընդգրկում են «պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման եվ պատրաստության ծրագրեր տնտեսական, սոցիալական եվ մշակութային անշեղ զարգացման եվ արտադրական լրիվ զբաղվածության ձեռքբերման ուղիներ եվ մեթոդներ այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են մարդու հիմնական քաղաքական եվ տնտեսական ազատությունները» (հոդված 6):

Աշխատանքի իրավունքն ամրագրված է միջազգայինիրավական փաստաթղթերում եվ պետությունների գերակշիռ մասի սահմանադրություններում: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հատկապես սահմանադրությունների մի մասում (օրինակ, Ռուսաստանի Դաշնության) աշխատանքի իրավունքի փոխարեն օգտագործվում է **աշխատանքի ազատության հասկացությունը**, որն առաջին հերթին նշանակում է ազատորեն գործունեության եվ մասնագիտության տեսակ ընտրելու հնարավորություն եվ ազատորեն տնօրինել աշխատանքի նկատմամբ սեփական ընդունակությունները, ինչպես նաեվ արգելել հարկադիր աշխատանքը: ՀՀ Սահմանադրությամբ եվս ամրագրված է, որ քաղաքացիներն ունեն աշխատանքի ազատ ընտրության իրավունք (հոդված 29): Միաժամանակ Սահմանադրությամբ ամրագրված է, որ «յուրաքանչյուր ոք ունի արդարացի եվ պետության կողմից սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Քաղաքացիներն իրենց տնտեսական, սոցիալական եվ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունք ունեն» (հոդված 29): Այդ նույն հոդվածով ամրագրվում է, որ գործադուլի իրականացման կարգը եվ սահմանափակումները սահմանվում են օրենքով: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է նաեվ հանգստի իրավունքը (հոդված 30), ընդ որում այդ նույն հոդվածով նշվում է, որ առավելագույն աշխատաժամանակը, հանգրստյան օրերը եվ ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տեվոդությունը սահմանվում են օրենքով:

Նշենք նաեվ, որ ինչպես երեվում է Հայաստանի Հանրապետության եվ մի շարք այլ երկրների սահմանադրություններից, աշխատանքի իրավունքը կամ աշխատանքի ազատությունը վերաբերում է միայն քաղաքացիներին: Միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերում այդ իրավունքը կամ ազատությունը վերաբերում է նաեվ ոչ-քաղաքացիներին՝ օտարերկրացիներին եվ քաղաքացիություն չունեցող անձանց: Ի դեպ, այս առնչությամբ նշենք, որ Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին համապատասխան «զարգացող երկրները կարող են մարդու իրավունքների եվ իրենց ժողովրդավարական տնտեսության հարկը եղած հաշվառմամբ որոշել, թե նրանք որ չափով պետք է երաշխավորեն սույն դաշնագրի մեջ ճանաչվող տնտեսական իրավունքներն այն անձանց համար, ովքեր չեն հանդիսանում նրանց քաղաքացիները» (հոդված 2. 3):

Տնտեսական կարեվորագույն իրավունքներից է **սեփականության իրավունքը**, ըստ որի յուրաքանչյուր ոք կարող է ունենալ տարբեր բնույթի (արտադրական, մշակութային եվ այլ նշանակության) գույք, որը նա կարող է տիրապետել, օգտագործել եվ տնօրինել: Ըստ այդմ՝ տիրապետման իրավունքը նշանակում է օրենքով սահմանված հնարավորություն տվյալ օբյեկտը փաստացի ունենալու եվ այն պահելու սեփական տիրապետման ներքո, օգտագործման իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով գույքը շահագործելու, նրանից օգտակար հատկություններ եվ եկամուտներ ստանալու հնարավորությունն է, իսկ տնօրինման իրավունքը՝ սեփականատիրոջը տրամադրվող հնարավորությունն է իր հայեցողությամբ եվ իր շահի համար կատարել գույքի իրավաբանական ճակատագիրը որոշող գործողություններ: Գույքի նկատմամբ ունեցած տիրապետման, օգտագործման եվ տնօրինման իրավազորությունների ամբողջությամբ է միայն որոշվում սեփականության իրավունքի իրավաբանական բովանդակությունը: XVIII-XIXդդ. սեփականության իրավունքը դասվում էր անձնական իրավունքների թվին, սակայն XXդ. երկրորդ կեսից այդ իրավունքը սովորաբար ընդգրկում են տնտեսական իրավունքների շարքը:

Սեփականությունն առհասարակ կարող է լինել ինչպես անհատական մասնավոր սեփականություն, այնպես էլ կոլեկտիվ սեփականություն եվ պետական սեփականություն: Ժողովրդավարական պետություններում սահմանվում է սեփականության բոլոր ձեվերի հավասարություն, ի տարբերություն

սոցիալիստական պետությունների, որտեղ մերժվում էր մասնավոր սեփականությունը եվ կարող էր գոյություն ունենալ միայն պետական (համաժողովրդական) սեփականություն, կոլեկտիվ (կոոպերատիվ), սեփականություն եվ անձնական սեփականություն: Ներկայումս Հայաստանում համաձայն Հայաստանի անկախության մասին հռչակագրի (1990 թ.) եվ ՀՀ Սահմանադրությամբ հաստատված է սեփականության բոլոր ձևերի հավասարությունը, եվ սեփականության իրավունքը պաշտպանվում է ՀՀ ողջ օրենսդրությամբ: ՀՀ Սահմանադրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եվ պաշտպանվում է սեփականության իրավունքը: Սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում եվ տնօրինում է իրեն պատկանող գույքը» (հոդված 8): Նույն հոդվածում նշվում է նաեվ, որ «պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը եվ հավասար իրավական պաշտպանությունը», ինչպես նաեվ «յուրաքանչյուր ոք ունի սեփականության եվ ժառանգման իրավունք» (հոդված 28): Առանձնահատուկ վերաբերմունք է դրսևորված հողի սեփականության նկատմամբ, որի իրավունքը վերապահված է միայն ՀՀ քաղաքացիներին: Օտարերկրացիները եվ քաղաքացիություն չունեցող անձինք այդ իրավունքից չեն կարող օգտվել, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Սեփականության իրավունքի պաշտպանությանն է ուղղված սահմանադրական այն դրույթը, որը այդ իրավունքից զրկումը վերապահել է միայն դատարանին՝ օրենքով սահմանված դեպքերում: Նույն հոդվածով նախատեսվում է, որ հասարակության եվ պետության կարիքների համար սեփականությունը կարելի է օտարել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է նաեվ, որ «սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եվ պետության իրավունքներն ու օրինական շահերը» (հոդված 8):

Սեփականության իրավունքը ամրագրված է միջազգային-իրավական բազմաթիվ փաստաթղթերում, մասնավորապես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 17), Մարդու իրավունքների եվ հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային կից թիվ 1 արձանագրությունում (հոդված 1):

Տնտեսական իրավունքների շարքում կարեվորվում է նաեվ **տնտեսական գործունեության ազատությունը**, որը մարդկանց անձնական ազատության դրսևորումն է տնտեսական գործունեության, ձեռներեցության ոլորտում: Տնտեսական գործունեության ազատությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք կարող է վարել ցանկացած՝ օրենքով չարգելված տնտեսական գործունեություն: Միաժամանակ այդ ազատությունը նշանակում է, որ պետությունը պարտավորվում է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն այդ իրավունքի իրականացմանը, ցանկացած անօրինական միջամտության բացառումը: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ «պետությունը երաշխավորում է... տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը» (հոդված 8): Այսպիսի սահմանադրական դիրքորոշումից բխում է նաեվ, որ տնտեսավարող բոլոր սուբյեկտների համար անհրաժեշտ է ստեղծել միանման, հավասար պայմաններ, որն իր հերթին նշանակում է, որ պետությունը պետք է բացառի մենաշնորհի ունեցող տնտեսավարող սուբյեկտների առկայությունը, որն էլ կարող է ապահովել Սահմանադրությամբ ամրագրված ազատ տնտեսական մրցակցությունը:

**Սոցիալական իրավունքները** ապահովում են կյանքի համար արժանավայել կենսապայմաններ եվ սոցիալական պաշտպանվածություն: Այս տեսակետից սոցիալական իրավունքների խմբում կարեվորագույնը **սոցիալական ապահովությունն է**, որը ներառում է սոցիալական ապահովագրությունը, կենսաթոշակային ապահովումը եվ առողջապահությունը: Սոցիալական ապահովության իրավունքը նշանակում է, որ պետությունը որոշակի դեպքերում (ծերություն, հիվանդություն, հաշմանդանություն, կերակրողի կորուստ, երեխաների դաստիարակություն եվ օրենքով սահմանված այլ դեպքեր) տրամադրում է բավարար միջոցներ այն քաղաքացիներին, որոնք օբյեկտիվ հանգամանքների բերումով չեն կարող իրենց աշխատանքով ստանալ անհրաժեշտ եկամուտներ: Սոցիալական ապահովության հետ առնչվող իրավունքների համախումբն ամրագրված է բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերում եվ ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում: Մասնավորապես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվածներ 22, 25), Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին դաշնագրում (հոդվածներ 9-12), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում (հոդվածներ 25-27) նշվում են ինչպես պետության, այնպես էլ միջազգային հանրության պարտավորություններն այդ ոլորտում: Սոցիալական ապահովության իրավունքի իրականացումն անմիջականորեն պայմանավորված է մի շարք այլ իրավունքների (բավարար կենսապայմաններ, աջակցություն ընտանիքին, մասնավորապես նոր ձեվավորվող ընտանիքին, մայրությանը եվ մանկությանը, հոգեվոր եվ ֆիզիկական առողջության պահպանմանը եվ այլն) առկայությամբ: Այս առնչությամբ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշվում է, որ «յուրաքանչյուր ոք ունի իր ու իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի ու առողջապահության եվ սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաեվ ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության,

հաշմանդանության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության այլ միջոցներից զրկվելու դեպքում: Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության եվ օժանդակության իրավունք ունեն: Ամուսնության մեջ կամ դրանից դուրս ծնված բոլոր երեխաներն օգտվում են սոցիալական միեվնույն պաշտպանությունից» (հոդված 25):

Այստեղից միանշանակ բխում է, որ պետություններն իրենց ուշադրության կենտրոնում պետք է պահեն **մայրությունն ու մանկությունը**, եվ առհասարակ **ընտանիքի պաշտպանությունը**, եվ պարտավոր են ամենաբազմազան սոցիալական աջակցություն ցուցաբերել ընտանիքի նկատմամբ: Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով նախատեսվում է ընտանիքի, մայրության, երեխաների ու դեռահասների սոցիալական պաշտպանություն: Մասնավորապես պետությունը պետք է հոգ տանի վերջիններիս ֆիզիկական եվ բարոյական առողջության մասին, արգելի նրանց տնտեսական եվ սոցիալական շահագործումը, սահմանի նրանց աշխատանքի տարիքային սահմանափակումները եվ այլն (հոդված 10):

Մարդու արժանավայել կյանքը եվ ազատ զարգացումն ապահովող պայմաններն ամրագրված են **բավարար կենսամակարդակի եվ կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքով**: Այդ իրավունքն ընդգրկված է վերոհիշյալ միջազգային դաշնագրում, որտեղ բավարար կենսամակարդակի հասկացության մեջ ներառված են բավարար սննդի, հագուստի եվ բնակարանի իրավունքները եվ խնդիր է դրվում պետությունների առջև պատշաճ միջոցառումներ ձեռնարկել այդ իրավունքների իրականացումն ապահովելու համար (հոդված 11): Կարեվորվում է նաեվ յուրաքանչյուրի **ֆիզիկական եվ հոգեկան առողջության առավելագույն հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը**, որն իրագործելու համար պահանջվում է իրականացնել մի շարք միջոցառումներ (մանկական մահացության կրճատում, շրջակա միջավայրի եվ արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բարելավում, համաճարակային եվ այլ հիվանդությունների կանխարգելում, բժշկական օգնության եվ խնամքի ապահովում եվ այլն): Այս իրավունքն ամրագրված է հիշյալ միջազգային դաշնագրում (հոդված 12):

Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակելով սոցիալական պետություն (ՀՀ Սահմանադրություն, հոդված 1) ստանձնում է սոցիալական որոշակի քաղաքականություն վարելու պարտավորություն: Այդ քաղաքականությունը պետք է նպատակամղված լինի Հանրապետության քաղաքացիների սոցիալական նվազագույն կարիքների բավարարմանը: Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները պետությունը պարտավոր է ձեռնարկել ելնելով պետության ներկա հնարավորություններից եվ այն հաշվով, որ սոցիալական ոլորտում ներդրվող միջոցներն ունենան անընդհատ աճող միտում: Այսինքն՝ նվազագույն կարիքների մակարդակը պետք է ունենա իր ժամանակին համապատասխանող մակարդակ եվ բնականաբար այն պետք է նախորդ ժամանակի համեմատ ավելի բարձր լինի եվ, ինչպես նշված է ՀՀ Սահմանադրությունում, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր եվ իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաեվ կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն իր հերթին պետք է միջոցներ ձեռնարկի այդ իրավունքների իրականացման համար (հոդված 31):

Բացի սոցիալական պետություն հռչակելու դրույթից ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվել են նաեվ մի շարք սոցիալական իրավունքներ եվ ազատություններ, որոնք ըստ էության սոցիալական պետության դրույթի լրացում են եվ կոչված են կոնկրետացնելու այդ հիմնադրույթի բովանդակությունը: ՀՀ Սահմանադրությամբ սոցիալական իրավունքների շարքում են ինչպես արդեն նշեցինք՝ բավարար կենսամակարդակի իրավունքը, կենսապայմանների բարելավման իրավունքը, բնակարանի իրավունքը (հոդված 31), սոցիալական ապահովության իրավունքը (հոդված 34), իսկ ընտանիքը, մայրությունը եվ մանկությունը գտնվում են հասարակության եվ պետության պաշտպանության ներքո (հոդված 32): Բացի նշված իրավունքներից, մի շարք այլ իրավունքներ, որոնք ամրագրված են միջազգային-իրավական փաստաթղթերում, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, ըստ ՀՀ Սահմանադրության (հոդվածներ 4, 6) համարվում են գործող իրավունքներ նաեվ մեր Հանրապետությունում:

Մարդու իրավունքների ու ազատությունների այս խմբում կարեվոր դերակատարություն է նախատեսվում **մշակութային իրավունքներին ու ազատություններին**, որոնք կոչված են նպաստելու մարդու հոգեվոր զարգացմանը, օգնում են անհատին ակտիվորեն մասնակցել քաղաքական, սոցիալական, հոգեվոր-մշակութային ոլորտներում կատարվող գործընթացներին եվ դրանով իսկ դառնալ հասարակական առաջընթացն ապահովող լուրջ գործոն: Մշակութային իրավունքների ու ազատությունների շարքին են դասվում **կրթության իրավունքը, հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, ստեղծագործության ազատությունը, գիտական նվաճումներից օգտվելու իրավունքը** եվ այլն:

Կրթության իրավունքին ներկայացվող հիմնական պահանջները սահմանվել են Մարդու իրավունքների հանրնդհանուր հռչակագրում (հոդված 26) եվ ավելի մանրամասն Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 13), ինչպես նաեվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք կոնվենցիաներում (Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին կոնվենցիա, Տեխնիկական եվ մասնագիտական կրթության մասին կոնվենցիա) եվ այլն:

Ըստ նշված դաշնագրի «կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի եվ նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը եվ պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների նկատմամբ» եվ ապա, «կրթությունը պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալ ազատ հասարակությանը, նպաստելու բոլոր խմբերի միջեվ փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը եվ աջակցելու խաղաղության պահպանման ուղղությամբ Միավորված ազգերի կազմակերպության գործունեությանը»:

Միաժամանակ Դաշնագրով սահմանվում են կրթության իրավունքի լիարժեք իրականացման նպատակով պետությունների պարտականությունները՝ ապահովել տարրական կրթության պարտադիր եվ անվճար լինելը բոլորի համար, միջնակարգ կրթության (այդ թվում՝ միջնակարգ մասնագիտական կրթության) մատչելիությունը, բարձրագույն կրթություն ստանալն ըստ ընդունակությունների: Դաշնագրով սահմանվում է նաեվ, որ պետությունները պարտավոր են անընդհատ կատարելագործել բոլոր մակարդակների դպրոցների համակարգը, սահմանել կրթաթոշակների բավարար մակարդակ եվ բարելավել ուսուցիչների նյութական պայ-մանները: Միաժամանակ նախատեսվում է, որ ծնողները (կամ խնամա-կալները) իրենց երեխաների անհրաժեշտ դաստիարակությունն ապահովելու առումով իրավունք ունեն ազատորեն ընտրել ուսումնական այնպիսի հաստատություն, որը համապատասխանում է սեփական հանգձունքներին: Ընդ որում, ուսումնական հաստատությունները կարող են լինել ինչպես պետական, այնպես էլ ոչ-պետական: Ոչ-պետական հաստատությունները, սակայն, պարտավոր են ապահովել պետական նվազագույն կրթական չափորոշիչները: Այստեղ նկատենք, որ ոչ-պետական կրթօջախների առկայությունը մեծապես նպաստում է կրթության իրավունքի իրականացմանը, որովհետեվ դրանց միջոցով կրթության բնագավառում ստեղծվում է մրցակցություն, որն էլ կարող է ապահովել համապատասխան որակ: Պետությունն այս դեպքում պետք է ապահովի հավասար իրավական դաշտ բոլոր կրթօջախների համար, եթե իհարկե դրանք համապատասխանում են պետության հաստատած պայմաններին եվ չափորոշիչներին:

ՀՀ Սահմանադրությամբ եվս ամրագրվել է կրթության իրավունքը, ըստ որի «յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն եվ այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման եվ գործունեության կարգը սահմանվում է օրենքով» (հոդված 35):

Մշակութային իրավունքների եվ ազատությունների շարքում չափազանց կարեվոր է **հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը**, ինչպես նաեվ այդ իրավունքին անմիջականորեն աղերսվող **գրական, գեղարվեստական, գիտական եվ տեխնիկական ստեղծագործության ազատությունը եվ գիտական նվաճումներից օգտվելու իրավունքը**: Այս իրավունքներն ամրագրված են Մարդու իրավունքների հանրնդհանուր հռչակագրում (հոդված 27), ինչպես նաեվ ավելի մանրամասն ձեվով Տնտեսական, սոցիալական եվ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 15): Դաշնագրում մասնավորապես նշվում է, որ այդ իրավունքների լիարժեք իրականացման համար կարեվոր է կրթության եվ մշակույթի նվաճումների պահպանումը, զարգացումը եվ տարածումը: Ինչ վերաբերում է մարդկանց գիտական հետազոտություններին եվ ստեղծագործական գործունեությանը, Դաշնագիրը պետություններին պարտավորեցնում է այդ ոլորտում ապահովել անհրաժեշտ ազատություն:

ՀՀ Սահմանադրությունը նույնպես ամրագրել է այս ոլորտի մի շարք իրավունքներ եվ ազատություններ. «յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական եվ տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու եվ հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով» (հոդված 36):

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է նաեվ ազգային փոքրամասնություններին վերաբերող իրավունքներն ու ազատությունները, որոնք ըստ էության հասարակության մշակութային կյանքի անբաժանելի բաղադրամասերն են: Մասնավորապես այդ առնչությամբ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է, որ «ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի եվ մշակույթի զարգացման իրավունք» (հոդված 37): Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մեջբերված սահմանադրական դրույթից միարժեքորեն բխում է, որ մեր Հանրապետությունում երաշխավորվում է **մշակութային պլուրալիզմը (բազմազանությունը)**: Այլ կերպ ասած, որեվ մշակույթ մյուսների համեմատ չունի որեվ առավելություն կամ արտոնություն, ինչպես եվ

որեվ մշակույթի նկատմամբ չի ցուցաբերվում որեվ խտրականություն. բոլոր մշակույթներն էլ իրավական առումով հավասար են եվ ունեն գարգացման միեվնույն հնարավորությունները: Իհարկե մեր Յանրապետության պարագայում, որքանով բնակչության գերակշռող մասը հայերն են, բնական է, որ հայ մշակույթն ավելի մեծ չափով է դառնում ուշադրության առարկա, որը սակայն ամենեվին չի նշանակում, որ խոչընդոտներ են հարուցվում մյուս մշակույթների զարգացմանը, ընդհակառակը՝ դրանք մեկը մյուսի վրա ունեցած ազդեցություններով փոխհարստանում են: Պատահական չէ, որ միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերում սահմանվում է, որ սեփական մշակույթի զարգացումը յուրաքանչյուր ժողովրդի իրավունքն է եվ պարտքը, բոլոր ազգերը, ազգային փոքրամասնությունները, էթնիկական խմբերը ունեն մշակութային արժեքները, ավանդույթները, սովորույթները պահպանելու եվ զարգացնելու միեվնույն իրավունքը: Այս եվ մի շարք այլ սկզբունքներ իրենց զարգացումն են ստացել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո ստեղծված միջազգային-իրավական փաստաթղթերում:

## ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բնական իրավունք ասելով սովորաբար հասկանում ենք այն իրավունքը, որը մարդուն տրված է ի ծնե՝ «բնությունից», համարվում է անկախ ամեն տեսակի իշխանությունից, անփոփոխ է ու հաստատուն: Մարդու բնական իրավունքների շարքին են դասվում կյանքի իրավունքը, սեփականության իրավունքը, ընտանիք կազմելու իրավունքը, անձի անձեռնմխելիությունը եվ այլն: Բնական իրավունքների վերաբերյալ պատկերացումները ձեւավորվել են դեռեւս հին աշխարհում: Բնական իրավունքի գաղափարը օգտագործել են հունական սոփեստները, Արիստոտելը, ստոյիկները եվ այլք: Դեռեւս հին հռոմեական մտածող Կիկերոնը (Ք.ա.Լդ.) գտնում էր, որ բնական իրավունքին հակասող պետության օրենքը չի կարող դիտարկվել իբրեւ օրենք, իսկ ինչպես նշում է Ուլպիանոսը (II-IIIդդ.), «ըստ բնական իրավունքի բոլորը ծնվում են ազատ»: Բնական իրավունքը արտացոլվել է նաեւ քրիստոնեական ուսմունքում եվ Աստվածաշնչում մարդու իրավունքները ներկայացված են հենց բնական իրավունքի դիրքերից եվ ըստ էության առաջադրված են այդ իրավունքների հետ առնչվող բոլոր հիմնահարցերը<sup>1</sup>: Քրիստոնեության մեջ բնական իրավունքը հանդես է գալիս իբրեւ աստվածային իրավունք:

Յայ իրականությունում, ինչպես եվ այլ ժողովուրդների պատկերացումներում, բնական իրավունքը մշտապես եղել է շրջա-նառության մեջ: Մասնավորապես քրիստոնեության տարածումից հետո բնական իրավունքն իր այլազան դրսեվորումներով արտացոլվել է հայ մտածողների ստեղծագործություններում: Այն բավական ամբողջական տեսքով արտահայտվել է հատկապես Մխիթար Գոշի աշխարհայացքում եվ ըստ էության ստացել է մեթոդաբանական նշանակություն: Մխիթար Գոշը «Գիրք Դատաստանի» հանրահայտ աշխատասիրությունը կազմել է ելնելով հենց բնական իրավունքի («բնավորական իրավունք») աստվածաշնչյան ըմբռնումից: Ըստ նրա, «արդար ընտրելն ի սկզբանե բնական հատկանիշ է մեզանում»<sup>2</sup>, այսինքն՝ իրավունքը արդարության որոնումն է եվ Աստված մարդկանց իրավունք շնորհել է նրանց բնությանց ելնելով եվ, այդ իրավունքը հենց «բնական օրենքներն են, որ ունեին Աբրահամը եվ մյուս նահապետները»<sup>3</sup>: Չխորանալով մանրամասների մեջ նշենք, որ Մխիթար Գոշը, ի տարբերություն նախորդ մտածողների, անչափ կարեվորելով բնական իրավունքը փորձում էր դրա սկզբունքները դարձնել նաեւ դրական իրավունքի նորմեր եվ բնական ու դրական իրավունքների հակասությունը (կոլիզիան) լուծել հօգուտ բնական իրավունքի գերակայության<sup>4</sup>: Ի դեպ նշենք, որ այսպիսի մոտեցումը հետագա դարերում դարձավ ինչպես առհասարակ իրավունքի զարգացման, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության հիմնական միտումը:

Բնական իրավունքը իբրեւ քաղաքական եվ իրավական մտքի հասկացություն իր սոցիալական առավելագույն հնչեղությունը ստացավ XVII-XVIII դդ., շնորհիվ Լուսավորականության դարաշրջանի մի շարք մտածողների՝ Ջ.Լոկի, Ժ.-ժ. Ռուսոյի, Շ.Լ.Մոնտեսքիոյի եվ այլոց: Այդ շրջանում բնական իրավունքը դիտվում էր ոչ միայն մարդուն ի ծնե շնորհված եվ նրա բնույթին (բնությանը) համապատասխանող իրավունք, այլեւ մարդու բնական բնույթով պայմանավորված սկզբունքների, իրավունքների ամբողջություն, որն ունի նաեւ արժեքային նշանակություն: Այլ կերպ ասած, բնական իրավունքը դիտվում է ոչ միայն որպես մարդու սուբյեկտիվ իրավունքներ, այլեւ արժեքներ, որոնք մարդը ստանում է բնականորեն, «ի սկզբանե», «ի բնությունե» (Մխիթար Գոշի արտահայտությամբ) եվ դրանք այլեւս անօտարելի եվ անկապտելի են:

Ի տարբերություն նախորդ դարաշրջանների, Եվրոպական Լուսավորականությունը բնական իրավունքը վերածեց նաեւ քաղաքական գործոնի: Կենտրոնական խնդիրը ազատության եվ իշխանության փոխհարաբերության հարցն էր: Այդ դարաշրջանի բոլոր մտածողներին միավորողը այն գաղափարն է, որ մարդու բնական վիճակն ազատությունն է: Ազատության սահմանափակման անբնականությունն էլ հենց դառնում է հումանիստ մտածողների թիրախը: Այդ պատճառով էլ առաջադրելով բնական իրավունքի տեսությունը լուսավորիչներն այն դարձրեցին ավատատիրական միապետությունների բացարձակ



իշխանության սահմանափակման անհրաժեշտության գաղափարախոսական հիմնավորում, իբրեւ բնական արդարությունը հաստատելու հուսալի միջոց: Այդ հայեցակարգում բնական իրավունքին տրվում էր մարդու բնույթի (բնության) անփոփոխելի սկզբունքների դերակատարություն, ուստի եւ այդտեղից բխում էր, որ դրանք պետք է արտահայտվեն ամեն մի պետության գործող օրենքներում: Աստիճանաբար ձեւավորվում է մի սկզբունք, ըստ որի օրենքը պետք է պաշտպանի մարդու իրավունքները իշխանության չարաշահումներից: Այդ գաղափարը արտահայտել է դեռելս անգլիացի մտածող Ջ.Լոկը՝ «Երկու տրակտատ կառավարման մասին» (1690թ.) աշխատությունում: Ըստ նրա, իրերի կարգի բնական պահպանման առաջին տեղում պետք է լինեն մարդու իրավունքները, ոչ թե կառավարության իրավունքները. «Եթե մարդը բնական վիճակում այնքան ազատ է..., եթե նա սեփական անձի եւ տիրությունների բացարձակ տերն է, հավասար է ամենամեծ մարդկանց եւ ոչ ոքի ենթակա չէ, ապա ինչու՞ է նա բաժանվում իր ազատությունից, ինչու՞ է նա հրաժարվում այդ կայսրությունից եւ ենթարկվում որեւէ այլ ուժի իշխանությանը եւ ղեկավարությանը: Այդ հարցի ակնհայտ պատասխանը ծնվում է ինքնաբերաբար, որ թեեւ բնական վիճակում նա ունի նման իրավունք, այնուամենայնիվ դրանից օգտվելը չափազանց անհուսալի է եւ նրան մշտապես սպառնում են մյուսների չարամիտ ոտնձգությունները: Որքանով մյուս բոլորը տերեր են, այն չափով, ինչքան ինքը, որքանով յուրաքանչյուր ոք հավասար է իրեն, իսկ մարդկանց մեծ մասը առանձնապես խստորեն չի պահպանում հավասարությունն ու արդարությունը, այդքանով այդ վիճակում իր ունեցած սեփականությունից օգտվելը բավականին վտանգավոր է, բավականին անհուսալի է: Այս հանգամանքը նրան մղում է պատրաստակամությամբ հրաժարվել այդ վիճակից, որը թեեւ ազատ է, բայց հագեցած է վախերով եւ անընդհատ վտանգներով. ոչ առանց պատճառի նա փնտրում է եւ պատրաստ է միանալ բոլոր նրանց հասարակությանը, ովքեր արդեն միավորվել են կամ պատրաստվում են միավորվել հանուն իրենց կյանքի, ազատության եւ տիրապետության (այն ամենի, ինչը ես անվանում եմ «սեփականություն») պահպանմանը»<sup>5</sup>:

Ընդհանուր առմամբ Ջ.Լոկը պետական իշխանության անհրաժեշտությունը նկարագրում է բնական իրավունքի եւ «հասարակական դաշինքի» տեսության տեսանկյունից եւ գտնում, որ կառավարությանը տրվում է միայն բնական իրավունքի մի մասը (արդարադատության իրականացումը, արտաքին հարաբերությունները եւ այլն), մնացյալների՝ խոսքի ազատության, դավանանքի եւ ամենից առաջ՝ սեփականության արդյունավետ պաշտպանության նպատակով: Ըստ Լոկի, «Բացարձակ բռնակալական իշխանությունը կամ կառավարումը առանց հաստատված մշտական օրենքի ոչ մի պարագայում չեն կարող համապատասխանել հասարակության եւ կառավարության նպատակներին»<sup>6</sup>, իսկ օրենքների ընդունումը եւ կիրառումը պետք է միմյանցից բաժանվեն, այսինքն՝ օրենսդիր իշխանությունը պետք է տարանջատվի գործադիր իշխանությունից (ներառյալ՝ դատական իշխանությունը) եւ «դաշնայինից» (արտաքին հարաբերությունները): Ընդ որում, Լոկը հատուկ ընդգծում է, որ կառավարությունը նույնպես պետք է ենթարկվի օրենքին: Իշխանությունների տարանջատման սկզբունքը, ըստ Լոկի, պետք է ապահովի մարդկանց բնական վիճակի՝ ազատության պաշտպանությունը: Ընդ որում, բնական վիճակի մակարդակը եւ աստիճանը պետք է դառնա մարդու պահանջմունքներին իշխանության համապատասխանության չափանիշ: Միաժամանակ Լոկը հանդգնած է, որ ժողովուրդը միշտ պետք է լինի ինքնիշխան եւ իրավունք ունի չաջակցել եւ անգամ իշխանությունից զրկել անպատասխանատու կառավարությանը:

Իշխանության օրենսդիր, գործադիր եւ դատական ճյուղերի տարանջատման եւ հավասարակշռվածության կոնկրետ դրսեվորումները հետեւիդոկականորեն բացահայտել եւ հիմնավորել է Շ.-Լ. Մոնտեսքիոն «Օրենքների ոգու մասին» (1748) աշխատության մեջ: Նա իշխանությունների տարանջատման տեսությանը տվեց ավարտուն եւ ամբողջական տեսք եւ այդ տեսությունը դարձավ իշխանությունների սահմանափակման ու մարդու իրավունքների պաշտպանության հզոր միջոց: Մոնտեսքիոն գտնում էր, որ աշխարհում ամեն ինչ ենթարկվում է որոշակի օրենքների ներգործությանը, սակայն, եթե ֆիզիկական աշխարհում տիրում է կատարելիությունը, ապա բնական էակների աշխարհը հեռու է այդ կատարելությունից, որովհետեւ մարդիկ հակված են մոլորության եւ ունեն կրքեր:

Մոնտեսքիոն, վերլուծելով հասարակական կարգը, պետությունների փոխհարաբերությունները, պետության եւ մարդկանց, մարդկանց միջեւ հարաբերությունները, կառավարման տարբեր եղանակներն ու սկզբունքները, քննարկում է քաղաքական ազատության հիմնախնդիրը եւ դրա հիման վրա իշխանության կազմակերպման հարցը: Եվ զուգահեռաբար, ելնելով այն հանգամանքից, որ իշխանությամբ օժտված ամեն մի մարդ ի վերջո հակված է չարաշահել այդ իշխանությունը, նա գտնում է, որ այդպիսի չարաշահումներից խուսափելու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի կարգ, որի պայմաններում տարբեր իշխանությունները կարողանան մեկը մյուսին զսպել: Ըստ նրա «հնարավոր է այնպիսի պետական կարգ, որի դեպքում ոչ մեկին չեն ստիպի կատարել այն, ինչը չի պարտադրում օրենքը, եւ անել այն, ինչը օրենքը նրան թույլատրում է»<sup>7</sup>:

Իշխանությունների տարանջատման գաղափարը Մոնտեսքիոն օգտագործում է իշխանության չարաշահումներից երաշխավորելու համար, ինչն էլ ապահովում է մարդկանց ազատությունը: Այսինքն՝

իշխանությունների տարանջատումը ուղղված է այն բանին, որ ապահովվի իրավաչափ կառավարումը եվ հետեվաբար ապահովվի ազատությունը:

Մոնտեսքիոն ազատության պահպանման համար առանձնապես կարեվորում է դատական իշխանությունը: Ըստ նրա, եթե օրենսդիր եվ գործադիր իշխանությունները կենտրոնացված են մեկ մարդու (կամ խմբի) ձեռքում, ապա հնարավորություն է ստեղծվում իշխանության չարաշահման համար, այնինչ դատական իշխանության հետ մյուս իշխանությունների միաձուլումը անխուսափելիորեն հանգեցնում է բռնատիրության եվ վտանգավոր հետեվանքների. «Ազատություն չի լինի..., եթե դատական իշխանությունը անջատված չէ օրենսդիր եվ գործադիր իշխանություններից: Եթե դատական իշխանությունը միավորվել է օրենսդիր իշխանության հետ, ապա քաղաքացիների կյանքը եվ ազատությունը կհայտնվեն կամայականության իշխանության ներքո, քանզի դատավորը կլինի օրենսդիր: Եթե դատական իշխանությունը միավորված է գործադիրի հետ, ապա դատավորը հնարավորություն է ստանում դառնալ կեղեքիչ»<sup>8</sup>:

Այստեղից Մոնտեսքիոն միանշանակ եզրակացնում է, որ եթե միավորվեն երեք իշխանությունները, ապա դա անխուսափելիորեն հանգեցնում է ամենադաժան բռնակալության եվ ազատության վերջնական ու ամբողջական վախճանին:

Իշխանությունների տարանջատումը արդյոք չի<sup>9</sup> հանգեցնի իշխանության կաթվածի, անիշխանության, որի դեպքում նույնպես անխուսափելի է պետության կործանումը եվ ազատության վախճանը: Այսպիսի հարցադրմանը ի պատասխան Մոնտեսքիոն գրտնում է, որ յուրաքանչյուր իշխանություն մյուսներից ոչ թե պետք է մեկուսացվի, այլ դրանց միջեվ պետք է ստեղծվի հավասարակշռություն, փոխներգործություն:

Պատահական չէ, որ նրա գաղափարները հետագայում ամրագրվեցին բազմաթիվ պետությունների սահմանադրական ակտերում, որոնցից շատերն իրենց ուժը չեն կորցրել մինչեվ մեր օրերը: Այս ճանապարհով իշխանությունների տարանջատման տեսությունը հնարավոր դարձրեց մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունը ապահովել իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքով: Այսպիսի սահմանադրական սկզբունքը թույլ չի տալիս իշխանության չափազանց կենտրոնացում, որի պայմաններում իրական հնարավորություն է ստեղծվում մասնակիորեն կամ ամբողջությամբ անտեսել ինչպես մարդու իրավունքները, այնպես էլ իրավական կանխադրույթներն առհասարակ:

Արդի իրավագիտությունում իշխանությունների տարանջատման սկզբունքը համարվում է ժողովրդավարական պետությունների սահմանադրական կարգի հիմքերից մեկը: Այսինքն՝ իբրեվ սահմանադրական դրույթ այն սահմանադրական այլ սկզբունքների համակարգում դարձել է պետական մեխանիզմի կառուցման կարեվորագույն սկզբունք: Այստեղ հարկ է նշել, որ պետության եվ իրավունքի փոխադարձ կապի պարագայում, որն անվիճելի է, իրավունքը նախկինում դիտվել է միայն որպես պետության իրավաստեղծ գործունեության արդյունք: Սակայն իրավական պետության գաղափարի ի հայտ գալուց հետո պետության եվ իրավունքի նշված փոխհարաբերությունը ամբողջապես հակադարձվեց: Այսինքն՝ խնդիրն այն չէ, թե ով է ստեղծում օրենքները, այլ այն, որ պետությունը պայմանավորված է իրավունքով եվ իր գործունեության ողջ ընթացքում պետք է հետեվի իրավական կանխադրույթներին: Իսկ իրավունքի հիմքը կազմում են մարդու իրավական եվ անօտարելի իրավունքներն ու ազատությունները: Ահա թե ինչու իրավական պետությունում ցանկացած օրենք, ողջ օրենսդրությունը, այդ թվում եվ սահմանադրությունը պետք է ելնեն բնական իրավունքից:

Այստեղ մի քանի խոսք լայն տարածում գտած մի դրույթի՝ օրենքի գերակայության վերաբերյալ: Դժբախտաբար, այդ դրույթը օգտագործելիս սովորաբար նկատի է առնվում այն հանգամանքը, որ օրենքը ընդունող մարմինը՝ խորհրդարանը, պետական մարմինների համակարգում ունի գերակայություն, առաջնայնություն եվ մյուս բոլոր մարմինները եվ մարդիկ ու քաղաքացիները պետք է ենթարկվեն օրենքներին, անկախ այն բանից այդ օրենքները իրավական են, թե ոչ: Բնական իրավունքի ըմբռնման ոգին հենց այն է, թե որքանով են օրենքները ապահովում մարդու անօտարելի իրավունքները: Ի վերջո չնոռանանք, որ խորհրդարաններում օրենքներն ընդունում են քաղաքական ուժերը, քաղաքական որոշակի շահերից ելնելով: Չնոռանանք նաեվ, որ ամբողջատիրական պետությունները, որոնք ամենից շատն են ոտնահարել մարդու իրավունքները, իրենց քաղաքականությունը իրականացրել են օրենքների (տվյալ դեպքում անիրավական օրենքների) միջոցով: **Յտեվաբար օրենքի գերակայության դրույթը պետք է անհրաժեշտաբար հասկացվի իբրեվ իրավական օրենքի գերակայություն:** Այդ պատճառով օրենքի ձեվով իրականացվող կամայականությունները սանձելու համար ժողովրդավարական պետություններում ստեղծվեցին սահմանադրական վերահսկողության մարմիններ:

Բնական իրավունքի ջատագով էր նաեվ ֆրանսիացի մեծ մտածող Ժ.-ժ.Ռուսոն, որը նույնպես պաշտպանում էր մարդկանց բնական վիճակի մասին գաղափարը, այն չպայմանավորելով որեվէ

կոնկրետ ժամանակահատվածով: Այդ բնական իրավունքը ազատությունն է եվ, ինչպես ազդարարում էր Ժ.-Ժ.Ռուսոն իր հանրահայտ «Յասարակական դաշինքի մասին» (1762թ.) աշխատությունում, «մարդը ծնվում է ազատ, այնինչ ամենուր նա կապանքների մեջ է»<sup>9</sup>: Այս դրույթից միանշանակ բխում էր, որ կապանքներով շղթայվածը պետք է ամեն ինչ անի ազատությունը վերականգնելու համար, չէ՞ որ ազատությունից հրաժարումը «անհամատեղելի է մարդկային բնույթի հետ»: Նա գտնում էր նաեվ, որ բնական վիճակը միշտ կարող է գտնվել հենց մեր մեջ եվ այդ կերպարի փնտրտությունը մեր ինքնուրույն փնտրտությունն են: Ըստ Ռուսոյի մարդիկ ազատ (բնական) վիճակում չեն ունեցել օրինականացված մասնավոր սեփականություն եվ ապրել են մեկը մյուսից անկախ, անգամ մեկուսացված<sup>10</sup>, ինչը հակադրվում էր Թ.Յոսֆի «բոլորի պատերազմը բոլորի դեմ» բանաձեվին: Յետագայում այդ բնական վիճակը քայքայվում է եվ մարդիկ անցում են կատարում հասարակական վիճակին, որում արդեն սկսում է գործել հոբսայն բանաձեվը: Սակայն «բոլորի դեմ բոլորի պատերազմից» խուսափելու համար մարդիկ հասարակական դաշինքի շնորհիվ ստեղծում են պետություն, որի հիմնական նպատակն է յուրաքանչյուրի համար ապահովել իրեն պատկանող սեփականությունից անկաշկանդ օգտվել:

Ռուսոյի կարծիքով «ուժը իրավունք չի ստեղծում», իսկ քաղաքացիները պահպանում են իրենց իրավունքը հանդես գալ այն կառավարության դեմ, որը բացահայտել է իր այլասերվածությունը: Քաղաքացիների կամքը նշանակում է ոչ թե բոլորի կամքը, այլ «ընդհանուր կամք», որն արտահայտում է նրանց բոլորի շահերը եվ այդ կամքը անփոփոխ է: Եվ այդ կամքը ժողովրդի ինքնիշխանությունն է, որն անբաժան է եվ անօտարելի: Ըստ Ռուսոյի, իշխանությունը պետության մեջ միշտ եվ ամենուր պետք է պատկանի ժողովրդին եվ միայն ժողովրդին: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է ստեղծել մարդկանց միավորման այնպիսի ձեվ, որն ընդհանուր ջանքերով կպաշտպանի անձնավորությանը եվ յուրաքանչյուրի ունեցվածքը, ինչպես նաեվ՝ յուրաքանչյուրը միավորվելով մյուսների հետ կարող է ենթարկվել միայն ինքն իրեն եվ կնճա ազատ, ինչպիսին նա եղել է ի սկզբանե՝ իր բնությանը համապատասխան:

Ջ.Լոկի, Շ.-Լ.Մոնեսքիոյի, Ժ.-Ժ.Ռուսոյի լուսավորական փիլիսոփայության բնահրավակական տեսությունների հիման վրա եվ դրանց ազդեցությամբ բնական իրավունքի տեսությունը զարգացրեց գերմանացի փիլիսոփա Ի.Կանտը<sup>11</sup>: Յամաձայն Կանտի բնական իրավունքը ստեղծվում է մարդկանց ամենօրյա գործունեության ընթացքում եվ աստիճանաբար նրանց գիտակցության մեջ հաստատվում իբրեվ վարքագծի հանրաճանաչ սկզբունքներ: Այդ սկզբունքները մշակելիս Կանտը հետեվում էր հռոմեական իրավունքի ընդհանուր սկզբունքներին, ինչպես օրինակ, հռոմեական հռետոր եվ իրավաբան Ուլպիանոսի հայտնի դրույթին՝ «ապրիր օրենքին համապատասխան, եվ մյուս մարդկանց հետ վարվիր այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքը»: Այլ կերպ ասած, Կանտի տեսակետով, անհատական բարոյական պահանջները, որոնք ունեն կատեգորիկ իմպերատիվի տեսք, հանգեցնում են իրավական սկզբունքների ձեվավորմանը, որոնց ամբողջությունը հենց բնական իրավունքն է: Բնական իրավունքի ստեղծման այս ընթացքը պայմանավորված է այն հանգամանքով, որ ինչպես կատեգորիկ իմպերատիվները, այնպես էլ բնական իրավունքի սկզբունքներն ունեն նորմատիվային բնույթ եվ այդ պատճառով անհատական բարոյական գործողությունները մարդկանց պրակտիկ գործունեության ընթացքում աստիճանաբար եվ աննկատելիորեն դառնում են հասարակական գիտակցության նորմեր: Բնական իրավունքի այսպիսի պատկերացումներից բխում է, որ այդ իրավունքը ներագրում է դրական իրավունքի վրա եվ վերջինիս վերափոխման եվ զարգացման աղբյուրն է: Իբրեվ այդպիսի ազդեցություն Կանտը օրինակ է բերում բնական իրավունքի՝ օրենքի առջեվ քաղաքացիների հավասարության դրույթի վերածվելը դրական իրավունքի:

Կանտը իր աշխատություններում առհասարակ մեծ տեղ է հատկացնում մարդու իրավունքներին, մասնավորապես նա գտնում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է օգտվի թագավորի այս կամ այն կարգադրության առիթով՝ իր կարծիքը ազատորեն արտահայտելու իրավունքից, իսկ մամուլի ազատությունը անվանում է ժողովրդի իրավունքների անվտանգության միակ գրավականը եվ հենարանը<sup>12</sup>: Նա կարեվորում է նաեվ ժողովրդի ինքնիշխանության սկզբունքը, այսինքն՝ օրենսդիր իշխանությունը կարող է իրականացնել ժողովրդի միասնական կամքը եվ գտնում, որ այն պետք է դրվի քաղաքակիրթ պետության պետական կարգի հիմքում<sup>13</sup>:

Քննադատելով ավատատիրական կարգերը, Կանտը հիմնավորում է օրինականության եվ իրավակարգի անհրաժեշտությունը, որի հիմքում պետք է ընկած լինի քաղաքացիների հավասարության եվ ազատ ձեռնարկատիրության սկզբունքները: Կանտը հետեվելով Մոնեսքիոյին պնդում է, որ քաղաքացիների իրավունքները եվ օրինականությունը կարելի է ապահովել իշխանությունների տարանջատման սկզբունքի իրականացման միջոցով: Օրինականության ամրապնդումը համարելով յուրաքանչյուր քաղաքակիրթ պետության կարեվորագույն խնդիրը, Կանտը առաջադրում է իդեալական պետության, այն է՝ իրավական պետության, գաղափարը, ինչի հիմքում այլ հատկանիշների հետ մեկտեղ, դրված է նաեվ դրական իրավունքի նկատմամբ բնական իրավունքի գերակայության սկզբունքը:

Կանտոր մարդու էության մասին իր ուսմունքում անդրադարձել է նաեւ հասարակական դաշինքի տեսությանը, գտնելով, որ դա հիմնված է մարդու բնական հատկություններից մեկի՝ ինքնապահպանման վրա: Այս առնչությամբ նա գտնում է, որ չի կարելի հասարակության ծագումը պայմանավորել բնական «չարի» պաշտպանության անհրաժեշտությամբ: Ըստ Կանտի, սխալ է այն տեսակետը, որ մարդը հասարակության մեջ կորցնում է իրեն հատուկ «բարությունը»: Այլ կերպ ասած, ըստ Կանտի, բնությունը չէ պատճառը, որ մարդը «չար» է, ոչ էլ այն, որ մարդը «բարի» է: Հետեւաբար բարությունը չի կարելի բխեցնել բնությունից, բնական վիճակից: Ազատությունը միակ հիմքն է, որով կարելի է տարբերել մարդկայինը բնականից: Ուստի հասարակական դաշինքը սկզբունքորեն չի կարելի դիտել իբրեւ բնական վիճակից հասարակականին (բարոյականին) անցնելու միջոց: Հասարակական դաշինքը «ընդամենը սոսկ բանականության գաղափարն է»<sup>14</sup> եւ հետեւաբար մարդու «սոցիալականությունը» (հասարակական էակ դառնալը) հանդես է գալիս իբրեւ մարդու եւ մարդկության գործունեության ցանկացած տեսակին բարոյականի ձեւական նախորդումը:

Եվրոպական Լուսավորականության մեծ մտածողները՝ առաջադրելով բնական իրավունքի տեսությունը իբրեւ բացարձակ իշխանության սահմանափակման արդյունավետ միջոց, իբրեւ դրական իրավունքի նկատմամբ բնական իրավունքի գերակայության սկզբունք եւ դրանով իսկ պաշտպանելով մարդու անօտարելի իրավունքները գաղափարապես հիմնավորեցին եւ նախապատրաստեցին արեւմտյան քաղաքակրթության հետագա զարգացման ուղին: Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում այդ շրջանում ձեւավորվեցին արդի արեւմտյան քաղաքականության տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման ուղեցիտները՝ հիմնված բնական իրավունքի առաջնայնության հիմնագաղափարի վրա:

Առաջին քաղաքական փաստաթուղթը, որը բնական իրավունքը հանդիսավորապես ազդարարեց իբրեւ պետական իշխանության հոգածության առարկա եւ դրա պաշտպանությունը իբրեւ պետական իշխանության սահմանափակում ու իշխանության անմիջական պարտականություն, դա Անկախության ամերիկյան հռչակագիրն է (1776թ): Այդ հռչակագրում մասնավորապես նշված է. «Երբ մարդկության պատմության ընթացքում մի ժողովրդի համար անհրաժեշտ է դառնում խզել ուրիշին շղթայող քաղաքական կապանքները, եւ աշխարհի ազգերի շարքում զբաղեցնել ինքնուրույն եւ հավասար դիրք, որի իրավունքը նրան տալիս են բնական իրավունքը եւ բնության ու նրա Արարչի օրենքները, ապա մարդկության կարծիքի նկատմամբ հարգանքը պահանջում է հռչակել այն պատճառները, որոնք նրան ստիպում են անջատվել:

Մենք ակնհայտ ենք համարում հետեւյալ ճշմարտությունները.

որ բոլոր մարդիկ ստեղծվել են հավասար, որ Արարիչը նրանց օժտել է որոշակի անօտարելի իրավունքներով, որոնց թվում են կյանքի, ազատության եւ երջանկության ձգտելու իրավունքը.

որ այդ իրավունքներն ապահովելու համար գոյություն ունեն կառավարություններ, որոնք իրենց իշխանությունը իրականացնում են կառավարվող մարդկանց համաձայնությամբ.

որ, եթե կառավարության ձեւը դառնում է կործանարար իր իսկ գոյության նպատակի համար, ժողովուրդն իրավունք ունի այն փոխել կամ չեղյալ դարձնել, հիմնել այնպիսի նոր կառավարություն, որը գործում է այդ սկզբունքներով եւ հաստատել իշխանության այնպիսի ձեւ, որ նրա կարծիքով լավագույնս ապահովում է իր անվտանգությունը եւ բարեկեցությունը: Խոհեմությունն, իհարկե պահանջում է, որ վաղուց գոյություն ունեցող կառավարություններն աննշան եւ անցողիկ պատճառներով չենթարկվեն փոփոխությունների եւ անցյալի փորձը, համապատասխանաբար, ցույց է տալիս, որ մարդիկ ավելի շուտ հակված են տառապել այն դեպքերում, երբ տառապանքները տանելի են, քան օգտագործել իրենց իրավունքը եւ հրաժարվել արմատավորված ձեւերից: Սակայն երբ մի շարք վիրավորանքներն ու բռնությունները մշտապես ուղղվելով միեւնույն նպատակին դրսեվորում են կառավարության ժողովրդին բացարձակ բռնատիրության ենթարկելու մտադրությունները, ժողովրդի իրավունքն ու պարտականությունն է դառնում տապալել նման կառավարությունը եւ իրավակարգը ապագայում ապահովելու համար ստեղծել նոր համակարգ:

Հենց դրանով է հարուցվել մեր գաղութների լռելյայն համբերությունը եւ հենց այդ անհրաժեշտությունն է ստիպում նրանց փոխել կառավարման նախկին համակարգը: Մեծ Բրիտանիայի ներկայիս թագավորի գահակալության պատմությունը կրկնվող անարդարությունների եւ այդ նահանգներում բացարձակ բռնատիրության հաստատվելուն ուղղված իշխանության վերազանցման պատմությունն է»:

Այս փաստաթղթին արդեն հպանցիկ ծանոթությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բնական իրավունքի շարքին է դասվում նախ՝ ժողովրդի անկախության հաստատվելու իրավունքը, տվյալ դեպքում՝ գաղութային լուծը թոթափելու իրավունքը, երկրորդ՝ կառավարման տիրապետող կարգերը փոփոխելու,

այն է՝ կառավարման գոյություն ունեցող համակարգը նոր համակարգով փոխարինելու ժողովրդի իրավունքը եվ երրորդ՝ բոլոր մարդիկ հավասար են եվ յուրաքանչյուրն ունի անօտարելի իրավունքներ՝ կյանքի իրավունք, ազատության իրավունք եվ երջանկության ձգտելու իրավունք:

Հաջորդ հանրահայտ փաստաթուղթը, ուր բնական իրավունքին վերապահված է հիմնարար նշանակություն եվ, ինչպես նախորդը, կազմված է Լոկի, Ռուսոյի, Մոնտեսքիոյի եվ Լուսավորականության մյուս մտածողների գաղափարների ոգով դա «Մարդու եվ քաղաքացու իրավունքների հռչակագիրն» է (ընդունվել է Ֆրանսիայում՝ 1789թ.): Հռչակագիրը պաշտպանում է մարդու բնական ու անօտարելի իրավունքները եվ սահմանում է «քաղաքական միությունների» (այսինքն՝ իշխանությունների) պարտականությունները Հռչակագիրը մասնավորապես ազդարարում է.

«Ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչները, որոնք կազմում են Ազգային ժողովը, գտնելով, որ մարդու իրավունքների չիմացությունը, դրանք մոռացության տակը կամ դրանց արհամարհումը հասարակական աղետների եվ կառավարությունների անբարոյականության միակ պատճառներն են, որոշեցին հանդիսավոր Հռչակագրով շարադրել մարդու բնական, անօտարելի եվ սուրբ իրավունքները, որպեսզի այս Հռչակագիրը ի տես լինելով հասարակական միության բոլոր անդամներին, մշտապես նրանց հիշեցնի այդ իրավունքների եվ պարտականությունների մասին, որպեսզի օրենսդիր եվ գործադիր իշխանության գործողությունները, որոնք յուրաքանչյուր պահին հնարավոր լինի համեմատել ամեն մի քաղաքական հաստատության նպատակի հետ, դառնան ավելի հարգելի, որպեսզի պարզ եվ անվիճելի սկզբունքների վրա հիմնված պահանջները այսուհետեվ սեվեմվեն Սահմանադրության պահպանման եվ համընդհանուր բարօրության վրա: Այդ պատճառով Ազգային ժողովը Գերագույն էակի առջեվ եվ հովանավորությամբ ճանաչում եվ հռչակում է մարդու եվ քաղաքացու իրավունքները:

Հոդված 1. Մարդիկ ծնվում եվ մնում են իրավունքներով ազատ եվ հավասար: Սոցիալական տարբերությունները կարող են հիմնված լինել միայն ընդհանուր օգտակարության նկատառումների վրա:

Հոդված 2. Յուրաքանչյուր քաղաքական Միության նպատակը մարդու բնական եվ անօտարելի իրավունքների ապահովումն է: Այդ իրավունքներն են՝ ազատությունը, սեփականությունը եվ դիմադրությունը՝ կեղեքմանը:

Հոդված 3. Ամեն մի ինքնիշխանության աղբյուրը, ըստ էության, ամեն մի ազգի մեջ է: Անձերի ոչ մի հանրույթ, ոչ մի անձ չի կարող իրականացնել իշխանություն, որը բացահայտորեն չբխի ազգից:

Հոդված 4. Ազատությունը ամեն ինչ անելու այն հնարավորությունն է, որը չի վնասում ուրիշին, այսպիսով՝ յուրաքանչյուր մարդու իրավունքների իրագործումն ունի միայն այն սահմանները, որոնք ապահովում են հասարակության մյուս անդամներին օգտվելու այդ նույն իրավունքներից: Այդ սահմանները կարող են հաստատվել միայն օրենքով:

Հոդված 5. Օրենքն իրավունք ունի արգելել միայն հասարակությանը վնաս հասցնող արարքները: Այն, ինչը արգելված չէ օրենքով՝ թույլատրվում է. ոչ ոք չի կարող հարկադրվել կատարել այն, ինչը նախատեսված չէ օրենքով:

Հոդված 6. Օրենքը ընդհանուր կամքի արտահայտությունն է: Բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցել օրենքի ստեղծմանը: Օրենքը պաշտպանում է, թե պատժում, բոլորի համար պետք է լինի միատեսակ: Բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առջեվ, ուստի բոլորը հավասարաչափ թույլատրվում են բոլոր հանրային պաշտոններին, դիրքերին՝ իրենց ընդունակություններին համապատասխան եվ առանց որեվէ տարբերությունների, բացառությամբ այն տարբերությունների, որոնք պայմանավորված են նրանց առաքինություններով եվ ձիրքերով»:

Ինչպես տեսնում ենք, Մարդու եվ քաղաքացու իրավունքների հռչակագրից բերված այս հատվածներում եվս ամրագրվել են բնական իրավունքի սկզբունքները, սակայն Անկախության ամերիկյան հռչակագրի համեմատությամբ, դրանք բավականին ընդարձակվել են եվ, պատահական չէ, որ այդ Հռչակագիրը հետագայում դառնում է օրինակելի բազմաթիվ այլ ժողովուրդների համար:

XVIII դ. մյուս փաստաթուղթը, որում արտացոլվել են մարդու հիմնական իրավունքները, դա «Իրավունքների մասին բիլլն» է, որն իբրեվ ԱՄՆ Սահմանադրության առաջին տասը փոփոխություններ ուժի մեջ է մտել 1791թ. (Տես Հավելվածը):

Անհրաժեշտ է նշել, որ նշված երեք փաստաթղթի հիմնական ոգին՝ բնական իրավունքների պաշտպանությունը, դրական իրավունքի նկատմամբ բնական իրավունքի գերակայությունը եվ պետական իշխանության ենթարկումը իրավունքին, իր նշմարելի հետքը թողեց յուրաքանչյուր պետության համար չափազանց կարեւոր այնպիսի փաստաթղթում, ինչպիսին է պետության հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Մասնավորապես Անկախության ամերիկյան հռչակագիրը դարձավ ԱՄՆ Սահմանադրության հիմքերից մեկը, իսկ Իրավունքների մասին բիլլը, ինչպես նշեցինք, ԱՄՆ Սահմանադրության առաջին տասը փոփոխություններն են: Նույնը վերաբերում է նաեվ Մարդու եվ քաղաքացու իրավունքների Հռչակագրին, որը նույնպես դարձավ Ֆրանսիայի տարբեր Սահմանադրությունների ստեղծման հիմքը (այդ Հռչակագիրը ներկայումս համարվում է գործող Սահմանադրության բաղկացուցիչ մասը): Անհրաժեշտ է նշել նաեվ, որ Մոնտեսքիոյի առաջադրած իշխանությունների տարանջատման սկզբունքը, որը ինչպես նշել ենք, համարվում է մարդու իրավունքների պաշտպանության կարեւորագույն երաշխիքներից մեկը, նույնպես դարձել է հիշյալ սահմանադրությունների հիմնական սկզբունքներից մեկը:

Անդրադառնալով XVII-XVIII դդ. բնական իրավունքի մասին արեվմտյան մտածողների վերաբերմունքին, բնականաբար հարց է հղանում՝ ի՞նչպիսի վերաբերմունք է ձեւավորվել հայ իրականությունում բնական իրավունքի վերաբերյալ: Բանն այն է, որ այդ դարաշրջանում Հայաստանը չի ունեցել անկախ պետականություն եվ հետեվաբար խնդիրը հանգում էր ոչ թե պետական իշխանության սահմանափակմանը, այլ նախ եվ առաջ այդ իշխանության ստեղծմանը: Այս դեպքում բնականաբար, խոսքը վերաբերում է մարդու իրավունքների եվ ազգային-ազատագրական շարժման փոխհարաբերությանը, կամ այլ կերպ ասած, ո՞րն է ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը եվ ի՞նչ տեղ է նրանում զբաղեցնում մարդու իրավունքը առհասարակ եվ բնական իրավունքը մասնավորապես: Իսկ ազգային-ազատագրական շարժմանը ավելի գործնական բնույթ հաղորդելու եվ այն նպատակասլաց դարձնելու համար անհրաժեշտ էր հասկանալ թե ինչ ուղղվածություն այն պետք է ունենար եվ հանուն ինչպիսի պետականության պայքար ծավալել եվ ստեղծվելիք պետությունն ինչ վերաբերմունք պետք է ունենա մարդու եվ քաղաքացու նկատմամբ: Այս եվ նմանատիպ այլ հարցերի պատասխանը գտնում ենք, մասնավորապես, Շ.Շահամիրյանի՝ հիրավի հանճարեղ «Որոգայթ փառաց» աշխատությունում (ըստ տիտղոսաթերթի՝ գիրքը հրատարակվել է 1773թ. Մադրասում):

Շ.Շահամիրյանը այդ աշխատությունում շարադրել է ստեղծվելիք պետության Հայաստանի Հանրապետության հասարակական-պետական կարգը (ըստ էության սահմանադրական կարգը), պետություն-անհատ հարաբերությունը եվ այլն: Այլ կերպ ասած, այդ աշխատությունը նորաստեղծ պետության սահմանադրության նախագիծն է: Ըստ այդ նախագծի, օրենքը պետք է դառնա գերագույն իշխանություն եվ բոլորն անխտիր պետք է ենթարկվեն օրենքին, այդ թվում՝ իրենք օրենսդիրները եվ առհասարակ բոլոր իշխանավորները. «Օրենքը պիտի լինի Հայոց եվ Հայաստանյայց աշխարհի թագավորը», - գրում է Շ.Շահամիրյանը<sup>15</sup>: Սակայն օրենքը, ըստ Շ.Շահամիրյանի, պետք է ենթարկվի բնական իրավունքին: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Շ.Շահամիրյանը զարգացնելով բնական իրավունքի (ինչպես եվ դրական իրավունքի վրա բնական իրավունքի ազդեցությունը) վերաբերյալ պատկերացումները հետեվում էր ոչ միայն եվրոպական Լուսավորականության մտածողների հանրահայտ հայեցակարգերին, այլեվ, առաջին հերթին, միջնադարյան հայ մտածողների՝ Մխիթար Գոշի, Գրիգոր Տաթևացու եվ այլոց ուսմունքներին: Մասնավորապես Շ.Շահամիրյանը գտնում էր, որ «հասարակական ու պետական կյանքում գործող օրենքները պետք է հաշվի առնեն մարդու բնականությունը» եվ «հասարակության մեջ գործող կարգն ու օրենքները պետք է համապատասխանեն մարդու բնական բնությանը եվ բանական բնությանը»<sup>16</sup>: Այստեղից միանշանակ բխում է, որ գործող օրենքները (այսինքն՝ դրական իրավունքը) պետք է համապատասխանեն բնական իրավունքին: Շ.Շահամիրյանը գտնում էր նաեվ, որ դրական իրավունքի նորմերը պետք է բխեցվեն բնական իրավունքի սկզբունքներից, հակառակ պարագայում դրական իրավունքը կդառնա հակաբնական եվ հակաբանական:

Շ.Շահամիրյանը մարդու իրավունքների հետ մեկտեղ մեծ ուշադրություն է դարձնում նաեվ ազգի (ժողովրդի) բնական իրավունքներին ու ազատություններին եվ գտնում, որ օտար իշխանությունների տիրապետության տակ գտնվող ժողովուրդը ոչ միայն իրավունք ունի, այլեվ պարտավոր է պայքարել բնական իրավունքների վերականգման համար (համեմատիր Անկախության ամերիկյան հռչակագրի հետ): Ուստի պատահական չէ, որ Շահամիրյանը ողջունում էր Ջ.Վաշինգտոնի գլխավորած զինված պայքարը հանուն ազատության. «Ամերիկացիների սրտի ցանկությունը բնական է՝ մարդու բնության մեջ է, քանզի...չկա ոչինչ ավելի քաղցր..., քան ազատությունը»<sup>17</sup>: Նա համարում էր, որ պետականության հաստատման պարագայում ժողովրդի իրավունքները կարող են ապահովվել միայն այն դեպքում, եթե իշխանության աղբյուրը լինի ժողովուրդը:

Այսպիսով, հպանցիկ ծանոթանալով Շ.Շահամիրյանի ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր ծրագրի որոշակի դրույթներին, դժվար չէ նկատել, որ այդ ծրագրում ուրույն տեղ է զբաղեցնում բնական

իրավունքը՝ «անձի եվ ունեցվածքի ապահովությունը», «գործողությունների ազատությունը», «մտածողության, խոսքի եվ հավատի ազատությունը», օրենքի առջեվ բոլորի հավասարությունը եվ այլն, որն ըստ նրա անփոփոխ է, հավերժ եվ պետք է հիմք դառնա դրական իրավունքի համար:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք XVII-XVIIIդդ, մարդու իրավունքների ապահովման եվ պաշտպանության ասպարեզում մեծ առաջընթաց է նկատվում, որը կարելի է համարել արմատական, բեկունճային փոփոխություններ: Այդ հեղափոխության հիմքը սոցիալական ու քաղաքական այն գործընթացներն են, որոնց համապատասխան մարդն իբրեվ անձնավորություն սկսում է ձերբազատվել իշխանության շղթաներից եվ այդ կապանքները հիմնավորող գաղափարախոսություններից: Հենց այդ շրջանում է, որ մեծ մտածողները առաջադրեցին մի շարք գաղափարներ, որոնք օրենքը, իրավունքը, արդարությունը պայմանավորում էին ընդհանուր բարոյական սկզբունքներով եվ, որ պակաս կարելվոր չէ, բնական իրավունքի գաղափարով, մարդկային կեցության ամենահիմնական գործոնով՝ ազատությամբ: Այսպիսի ըմբռնումը ի վերջո հանգեցրեց այն բանին, որ քաղաքական ազատությունն այնուհետեվ հասկացվում էր իբրեվ մարդու ազատություն:

Սակայն այսպիսի միտումները ընդհանուր առմամբ հետագա զարգացում չստացան, մանավանդ երբ աշխարհը, մասնավորապես, Եվրոպական աշխարհամասը XXդ. առաջին կեսում դարձավ երկու համաշխարհային պատերազմների թատերաբեմ, ֆաշիստական ու կոմունիստական քաղաքական ռեժիմների խաղալիք, մի շարք տնտեսական եվ քաղաքական խորը ճգնաժամների էպիկենտրոն, որոնց պայմաններում մարդու իրավունքների մասին խոսելը վերածվում էր ծաղրի:

Սակայն այդ սարսափները, ցնցումները, դժբախտություններն ու ողբերգությունները ստիպեցին մարդկանց եվ առաջին հերթին քաղաքական գործիչներին կրկին անդրադառնալ Եվրոպական Լուսավորականության մտածողների գաղափարների ժառանգությանը եվ նորովի վերագնահատել մարդու անօտարելի իրավունքների տեղը հասարակության ժողովրդավարական արժեքների համակարգում: Թերեվս այս հանգամանքներով կարելի է բացատրել այն նոր վերաբերմունքը, որ դրսեվորվեց երկրորդ աշխարհամարտից հետո՝ XX-րդ դարի 50-60-ական թվականներին բնական իրավունքի եվ առհասարակ մարդու իրավունքների նկատմամբ:

Բնական իրավունքի նորագույն պատմությունը բացահայտեց այդ իրավունքի դրսեվորման սկզբունքորեն նոր որակներ, որոնք նախկինում միայն ուրվագծվել էին, բայց ամբողջությամբ չէին բացահայտվել իրենց խորությամբ: Բնական իրավունքի այդ որակներն ընդգրկում էին հիմնականում՝ պետական իշխանության կամայականության սահմանափակումը՝ անթույլատրելիությունը եվ, որ ավելի կարելվոր է, մարդու անօտարելի իրավունքները դարձան բուն մարդկային էության՝ ազատության ամենաուղղակի արտահայտիչները: Ազատությունն այս առումով ընկալվում էր իր ամենաբազմազան կենսական դրսեվորումներով՝ խոսքի ազատություն, անձի անձեռնամխելիություն, պետության կառավարմանը մասնակցելու իրավունք եվ այլն:

Կարելվոր է նշել ոչ միայն այն հանգամանքը, որ իրավական կարգավորումը կողմնորոշվում էր դեպի առանձին, ինքնավար մարդը, այլեվ այն, որ դրա անմիջական հիմքը դարձավ ազատության բնահրավական պահանջը, ինչը արտահայտվում էր մարդու անօտարելի իրավունքների ձեվով: Ընդ որում, էական էր դառնում այն պարագան, որ մարդու անօտարելի իրավունքները հասկացվում էին մի կողմից իբրեվ մշակույթի երեվույթներ եվ, մյուս կողմից, իբրեվ սուբյեկտիվ իրավունքներ: Մասնավորապես շեշտադրվում էր ո՛չ միայն հարցի տեսական կողմը, այլեվ դրա գործնական իրականացման հնարավորությունները: Ետպատերազմյան առաջին իսկ տասնամյակում այս մոտեցումը դարձավ աշխարհայացքային այն հենքը, որը վերածնված բնական իրավունքը բնութագրում էր իբրեվ անմիջական իրավական կարգավորիչ: Այլ կերպ ասած, վերածնված բնական իրավունքը դառնում է դրական իրավունքի ձեվափոխման հիմքը, այնպիսի հիմք, որ պետք է բացառի բռնության եվ անօրինականության բուն հնարավորությունը: Եվ միայն այս դեպքում հռչակագրային բնույթ ունեցող մարդու իրավունքների գաղափարները ձեռք են բերում իրավական սահմանակարգի (ինստիտուցիայի) նշանակություն, հանդես են գալիս իբրեվ իրավական կարգավորիչ սկզբունքներ:

Բնական իրավունքի հայեցակարգի այսպիսի ընկալումը դառնում է ոչ թե ինքնաբավ մի երեվույթ, որը գնահատվում է իբրեվ չափազանց կարելվոր, այլեվ դառնում է արդի հասարակության ժողովրդավարական սկզբունքների հոգեվոր նախահիմքը, որով պայմանավորվում է ոչ թե վերացական ժողովրդավարությունը, այլ հասարակական հարաբերությունների ժողովրդավարական կարգավորման ամենօրյա ընթացքը: Այլ կերպ ասած, մարդու անօտարելի իրավունքները ժողովրդավարության հետ մեկտեղ պետք է դիտել իբրեվ արդի քաղաքացիական հասարակության, իրավական, սահմանադրական պետության հիմք եվ, ինչպես նշում է հանրահայտ սոցիոլոգ Յու. Հաբերմասը «ժողովրդավարությունը եվ մարդու իրավունքները կազմում են սահմանադրական պետության համապարփակ հիմքը»<sup>18</sup>:

Այս ոլորտում առաջին կարեվորագույն քայլը կատարեց Միավորված ազգերի կազմակերպությունը, որը 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը իրավաբանորեն, միջազգային-իրավական մակարդակով ամրագրեց մարդու իրավունքները: Այդ հռչակագրի առաջին հոդվածը ազդարարում է. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ եվ իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով եվ պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:» Միաժամանակ հռչակագրի նախաբանում մասնավորապես նշվում է, որ մարդու իրավունքները մի խնդիր է, որի իրագործմանը պիտի ձգտեն բոլոր ժողովուրդներն ու պետությունները, այն առումով, որ, յուրաքանչյուր անհատ եվ հասարակության անեն մի մարմին, ձգտեն լուսավորության ու կրթության միջոցով նպաստել այդ իրավունքների եվ ազատությունների հարգմանը եվ ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով նպաստեն դրանց համընդհանուր եվ արդյունավետ ճանաչմանն ու իրականացմանը ինչպես Կազմակերպության անդամ պետությունների ժողովուրդների մեջ, այնպես էլ նրանց իրավասության տակ գտնվող տարածքների ժողովուրդների մեջ:

Նշելով բնական իրավունքի դերը իշխանությունների սահմանափակման, ինչպես նաեվ բնական իրավունքի եվ դրական իրավունքի փոխհարաբերության մասին, անհրաժեշտություն է առաջանում որոշակի ճշգրտություն մտցնել այդ հարցերում: Բանն այն է, որ կարեվորելով բնական իրավունքի դերը իշխանության սահմանափակման հարցում, չափազանց էական է, որ այդ սահմանափակումը չվերածվի իշխանության անտեսմանը, նրա նշանակության բացասմանը, այլ հասնել այն բանին, որ դրանց միջեվ ստեղծվի որոշակի հավասարակշռություն յուրաքանչյուրի դերակատարությունը պահպանելու համար: Առհասարակ, վտանգավոր է ամեն մի ծայրահեղություն, այսինքն՝ ինչպես բնական իրավունքի անտեսումը հանգեցնում է բռնատիրության եվ իշխանության բացարձակեցման, այնպես էլ իշխանության անտեսումը կարող է հանգեցնել անիշխանության, հասարակական քաոսի: Երկու դեպքում էլ, ըստ էության, վտանգվում են մարդու իրավունքները, որոնց պաշտպանության հարցում էական նշանակություն ունի պետական իշխանությունը, որը դրանց հաղորդում է օրենսդրական համապարտադիր ձեով: Այլ կերպ ասած, սխալ է մարդու իրավունքները հակադրել պետական իշխանությանը, այլ անհրաժեշտ է մշակել նշված հավասարակշռությունը ապահովող մեխանիզմներ ու ընթացակարգեր: Այդպիսի հավասարակշռություն ստեղծելուն մեծապես նպաստում են պետությունների սահմանադրությունները եվ միջազգային իրավունքը:

Ինչպես արդեն նշել ենք, բնաիրավական ուսմունքը մարդու իրավունքները դիտում է իբրև մարդու անօտարելի եվ անկապտելի հատկություններ, որոնք պետությունից վեր են եվ կոչված են սահմանափակելու պետության բռնատիրական նկրտումները: Սակայն դրանք չստանալով օրենսդրական ձեվակերպումներ, այսինքն՝ չվերածվելով դրական (պոզիտիվ) իրավունքի, չեն ստանում հստակ բնորոշումներ ու ձեվակերպումներ, մնում են անորոշ եվ, հետեվաբար, չեն կարող դառնալ հասարակական հարաբերությունների կարգավորիչ: Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է դրական իրավունքի ոլորտը ընդգրկել համընդհանուր բարօրության, բարու, արժանապատվության, արդարության բարոյական հասկացությունները, ինչը հնարավորություն է ընձեռում օրենսդրականորեն ձեվակերպել մարդու իրավունքները: Այդ իրավունքները, ստանալով օրենսդրական արտահայտություն, ձեռք են բերում պաշտպանության հավելյալ միջոցներ, այսինքն՝ բարոյական ոլորտից անցում է կատարվում իրավական ոլորտ, իսկ պետությունը դառնում է դրանց պաշտպանը, երաշխավորը, որքանով դրանք ունենալով համապարտադիր բնույթ, վերածվում են նաեվ պետության պարտականության: Ավելի ստույգ, բարոյականը եվ իրավականը միաձուլվում են մի ամբողջության մեջ՝ փոխլրացնելով միմյանց: Ահա այս ճանապարհով՝ բնաիրավական սկզբունքներով, գա-դափարներով առաջնորդվող պետությունները սահմանադրությունների եվ միջազգային իրավունքի միջոցով լուծեցին բնաիրավական եվ պոզիտիվիստական ուսմունքների ծայրահեղական դրսեվորումները: Ջարգացած պետությունների սահմանադրություններում եվ միջազգային-իրավական փաստաթղթերում ամրագրելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ փաստորեն բնաիրավական հիմքի վրա ձեվակերպելով պոզիտիվիստական դրույթները, դրանով իսկ միավորելով այդ մոտեցումները եվ շրջանցելով դրանց առկա հակասությունները:

Ասվածից միաժամանակ բխում է, որ բնական իրավունքը սահմանադրություններում եվ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերում հանդես է գալիս որպես պոզիտիվ իրավունքի աղբյուր: Ինչպես նշում է Բուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վ.Ս.Ներսեսյանը՝ «բնական իրավունքը՝ որպես պոզիտիվ իրավունքի աղբյուր, պետության կողմից պաշտոնապես ճանաչված եվ նրա Սահմանադրություններում ու օրենքներում ամրագրված՝ մարդու բնական, ի ծնե եվ անօտարելի իրավունքներն ու ժողովրդի իրավունքներն են<sup>19</sup>»:

Բնական իրավունքը ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում եվ միջազգային իրավունքում պաշտոնական ճանաչում ստացավ եվ ամրագրվեց իբրև գերակայություն ունեցող եվ պետության համար պարտադիր:



## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱՎԱՐԳՆ

Մարդու եվ քաղաքացու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ արդի պատկերացումները սկզբնավորվել են հիմնականում եվրոպական Վերածննդի հումանիստական գաղափարների հիման վրա: Հումանիզմը մարդուն արժեվորում էր իբրև անձնավորություն, ընդունում նրա երջանկության, ազատության իրավունքը, իսկ հավասարության, արդարության, մարդկայնության սկզբունքները մարդկանց միջեվ հարաբերությունների անհրաժեշտ հիմք: Հումանիզմը մարդուն հռչակեց տիեզերքի կենտրոն եվ բնության կատարյալ ստեղծագործություն, քարոզելով մարդկանց ազատության ու երջանկության իդեալները, իսկ մարդու բարօրությունը եվ բարեկեցությունը համարեց սոցիալական ինստիտուտների գործունեության գնահատման չափանիշ: Եվրոպայում այդ գաղափարների տարածմանը մեծապես նպաստեց նաեվ կաթոլիկ եկեղեցու գերիշխանության դեմ ծավալված սոցիալ-քաղաքական եվ գաղափարախոսական շարժումը՝ Ռեֆորմացիան, նրա ընդերքում ձևավորված բողոքականությունը, որը մի շարք կրոնական սկզբունքների հետ մեկտեղ կարեվորվում էր մարդու առ Աստված անհատական վերաբերմունքը, անձնական մեղքը եվ անձնական պատասխանատվությունը, մերժում էր եկեղեցու միջնորդական դերը եվ առաջադրում անձնական հավատով փրկության հասնելու սկզբունքը: Միաժամանակ Ռեֆորմացիան նպաստում էր իրավական պետության գաղափարի, իսկ գործնական կյանքում՝ անձնական նախաձեռնողական կողմնորոշման ձևավորմանը: Նշենք նաեվ, որ Ռեֆորմացիայի գաղափարախոսությունը, ուղղված լինելով Հռոմի պապի գերիշխանության դեմ, եկեղեցու հեղինակությունը փոխարինեց պետության հեղինակությամբ, մեծապես նպաստելով ազգային պետությունների առաջացմանը:

Հումանիզմի գաղափարները եվ մասնավորապես մարդու ազատության եվ երջանկության մասին պատկերացումները ժառանգեցին եվ զարգացրեցին XVII-XVIII դդ. մտածողները: Նրանք մշակեցին բնական իրավունքի տեսությունը՝ հասարակության սոցիալական զարգացումը գնահատելով մարդու բնությանը համապատասխանության տեսակետից, փորձելով գտնել անձի եվ հասարակության շահերի ներդաշնակ զարգացման ուղիները: Ի. Կանտը ձևակերպեց հումանիզմի էությունը՝ մարդը կարող է այլ մարդկանց համար լինել միայն նպատակ, այլ ոչ թե միջոց, որը հետագայում դարձավ մարդու իրավունքների ու ազատությունների ըմբռնման բանալին:

Այդ շրջանում վերոհիշյալ գաղափարների հիման վրա աստիճանաբար ձևավորվում են ազատամտական եվ ուտոպիական-սոցիալիստական պատկերացումները, որոնք հետագայում դարձան մարդու եվ քաղաքացու իրավունքների ու ազատությունների ըմբռնման ելակետային մեթոդաբանական մոտեցումները: Ազատամտականության հայեցակարգը, որն իր ժամանակի առաջադիմական գաղափարական եվ գաղափարախոսական հենքն էր եվ պայմանավորեց Արեվմուտքի առաջընթաց զարգացումը (եվրոպական ըմբռնմամբ), այլ սկզբունքների հետ մեկտեղ խարսխվում էր մարդու ազատության, մասնավոր սեփականության անձեռնմխելիության սկզբունքների վրա: Ազատամտականությունն ընդհանուր առմամբ էապես խթանեց մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը եվ պաշտպանությունը, պայմաններ ստեղծելով անհատի նախաձեռնողականության, ձեռներեցության զարգացմանը, շուկայական մրցակցությանը հարմարվելուն եվ որպես հետեվամբ աստիճանաբար ձևավորվում է այնպիսի համակարգ, որը նպաստում է մասնավոր սեփականության աճին, իսկ մարդը դառնում է իր իսկ ստեղծած հարստության գերին, կտրվում են բոլոր այն կապերը (եվ առաջին հերթին՝ հոգեվոր-բարոյական), որոնք չեն նպաստում հարստության կուտակմանը: Այս ամենը պայմաններ է ստեղծում անհատապաշտության ձևավորման համար:

Ի տարբերություն ազատամտականների, ուտոպիական սոցիալիստները, իսկ հետագայում սոցիալիստներն ու մարքսիստները սահմանափակում էին մասնավոր սեփականության նշանակությունը, այն դիտելով իբրև իսկական ազատությունը, հավասարությունը սահմանափակող գործոն, նախապատվությունը տալով հանրային, կոլեկտիվ սեփականությանը եվ ընդհանուր շահերի պաշտպանությանը, եվ որպես հետեվամբ ձևավորվում են կոլեկտիվիստական մոտեցումները: Այս երկու անհատապաշտական եվ կոլեկտիվիստական մոտեցումների հակամարտության վերածված տարբերությունը դրսևավորվում է հատկապես XX դարում, երբ Արեվմուտքում տիրող ազատամտական պատկերացումներին հակառակ Արեվելքում (ՍՄՀՄ-ում եվ մի շարք այլ պետություններում) տիրապետող են դառնում կոմունիստական- կոլեկտիվիստական պատկերացումները:

Հայ իրականությունում մարդու հոգեվոր ազատության եվ դրա հետ կապված մարդու վսեմ առաքելության, երկրային կյանքի ջատագովության, երջանկության եվ արդարության մասին պատկերացումները ձևավորվել եվ զարգացել են ազգային-ազատագրական պայքարի

գաղափարախոսության շրջանակներում եվ ծառայեցվել են այդ գաղափարախոսությանը: Հայ մտածողները հունանիստական այս իդեալների իրականացումը պայմանավորում էին ազգային եվ հոգեվոր ազատագրման հետ: Հունանիստական գաղափարների ձեկավորման խնդրում կարեվոր դեր են խաղացել նաեվ Պավլիկյան եվ Թոնդրակյան շարժումները՝ հավասարության, երջանկության, արդարության իրենց ուրույն մարդասիրական գաղափարախոսությամբ: XVIII դարի վերջում հայ իրականություն են փոխադրվում մարդու իրավունքների եվ ազատությունների եվրոպական գաղափարները (Հ. Էմին, Մ. Բաղրամյան, Շ. Շահամիրյան): XIX դ. հայ մտածողներն ազգային-ազատագրական պայքարի տրամաբանությանը համապատասխան առաջնությունը տալիս էին ազգի ընդհանրական իրավունքներին, մերժելով կամ շրջանցելով դասակարգային եվ սոցիալիստական մոտեցումները՝ ազգի տարածքային բաժանումը նաեվ դասակարգային բաժանմամբ չխորացնելու համար, առավել եվս, որ այդ վերագային, ինտերնացիոնալիստական մոտեցումներն անտեսում էին ազգային առանձնահատկությունները:

Հայ իրականությունում ձեկավորվող հիշյալ պատկերացումներն արմատապես տարբերվում էին եվրոպական պատկերացումներից: Բանն այն է, որ եվրոպայում հիշյալ պատկերացումները ձեկավորվում եվ զարգանում էին հիմնականում պետականության պայմաններում եվ եվրոպական ազգերի խնդիրը բոլորովին այլ բնույթի էր, նրանք պայքարում էին հանուն տնտեսական զարգացման (եվ այդ զարգացմանը խոչընդոտող գործոնների վերացման համար), որը նախ եվ առաջ պահանջում էր հոգեվոր ազատություն: Այս պայմաններում եվրոպական մտածողներն առաջադրեցին մի շարք գաղափարներ եվ հայեցակարգեր, այդ թվում՝ մարդու հոգեվոր ազատության, բնական իրավունքների անօտարելիության գաղափարները, որոնք էլ դարձան արեվմտաեվրոպական քաղաքակրթության վերջին հարյուրամյակների զարգացման կռվանը:

Հայ իրականությունում, ինչպես եվ ազգային-ազատագրական պայքարի ուղին բռնած ժողովուրդների գերխնդիրը պետականության վերականգնումն էր, ուստի ամեն ինչ ծառայեցվում էր ազգային ինքնության պահպանմանը եվ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությանը: Դա միաժամանակ պայքար էր հանուն հոգեվոր ազատության, անհատի անկաշկանդ զարգացման, սակայն այդ ամենը պետք է ենթարկվեր ազգի ընդհանրական շահերին:

Այսպիսով, մարդու իրավունքների ու ազատությունների արդի ըմբռնման հիմքում ընկած են երկու հիմնական մոտեցումներ, որոնցից մեկը խարսխված է ազատամտականության, մյուսը՝ կոմունիստական գաղափարախոսության վրա: Երկուսն էլ ըստ էության ծայրահեղական են եվ ի վերջո հանգեցնում են անհատապաշտության կամ կոլեկտիվիզմի, իրենց բնույթով ի սկզբանե ունիվերսալիստական էին ու հավակնում են համաշխարհային տիրապետության եվ, բնականաբար, մշտական պայքարի մեջ են եղել: Այդ պայքարում կոմունիստական-կոլեկտիվիստական դիրքորոշումն իրեն սպառեց, տեղը զիջելով արեվմտյան-ազատամտականին: Այդ անկման հիմնական պատճառը ոչ թե դիմակայությանը չդիմանալն էր (իհարկե այն իր դերը խաղաց), այլ այն ծայրահեղականությունը, որն ի սկզբանե դրված էր կոմունիստական գաղափարախոսության հիմքում: Այս տեսակետից կարելի է եզրակացնել, որ ազատամտականության գաղափարախոսությունը եվս դատապարտված է, որքանով այն նույնպես կառուցված է ծայրահեղականության վրա: Խնդիրը միայն ժամանակն է, եթե իհարկե Արեվմտությունը չձեռնարկվեն ծայրահեղականությունը զրսպող անհրաժեշտ միջոցառումներ: Այս առումով հասկանալի է, թե ինչու է տարածում ստացել այն տեսակետը, որ կոլեկտիվիստական սկզբունքի գերակայությունը հանգեցնում է հասարակության կազմակերպման ամբողջատիրական ձեկվերին, իսկ անհատապաշտական սկզբունքի գերակայությունը՝ պետականության քայքայմանը եվ մարդկային համակեցության ընդունված նորների անտեսմանը<sup>1</sup>:

Ամենեվին պատահական չէ, որ յուրաքանչյուր խորը ճգնաժամից (տնտեսական, քաղաքական եվ այլն) հետո Արեվմտությունը վերստին անդրադարձել են անցած ճանապարհին եվ փորձել նոր լուծումներ գտնել հետագա զարգացումը ցնցումներից ապահովագրելու համար: Հատկապես XX դարում, երբ արդեն համատեղ գոյություն ունեին կապիտալիստական եվ կոմունիստական ճամբարները եվ համագոյակցում էին համապատասխանաբար ազատամտական եվ կոլեկտիվիստական գաղափարախոսությունները, այդ փնտրտուքներն Արեվմտությունը վերածվեցին «Երրորդ ուղու հայտնաբերմանը»:

Ինչ վերաբերում է հայ իրականությունում (ինչպես եվ առհասարակ այլ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին) ձեկավորված մոտեցումներին, ապա դժվար չէ համոզվել, որ դրանք չեն ներառում ծայրահեղական դրսեվորումներ (վերոհիշյալ առումով), հետեվաբար չունեն այն բացասական կողմերը, որոնք հատուկ են ազատամտական ու կոմունիստական գաղափարախոսություններին եվ հասարակության ու անհատի հարաբերությունները կառուցվում են ավելի ներդաշնակ հիմքի վրա:

Այդ ներդաշնակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ազգային-ազատագրական պայքարում ազգի ու անձնավորության փոխհարաբերությունները խարսխվում են հոգեվոր

ընդհանրությունների, ընդհանրական շահերի վրա: Պետության բացակայության պայմաններում ազգի ու անձնավորության հարաբերություններն իրավունքների ու պարտականությունների հարաբերություն չեն, այլ զուտ հոգեվոր-բարոյական հարաբերություններ, որոնց մակարդակը պայմանավորված է ազգի հոգեվոր-մշակութային զարգացման մակարդակով:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետականության վերականգնումից եվ անկախ պետության ստեղծումից հետո ներդաշնակությունը պետական իշխանության առկայության դեպքում խաթարվում է՝ հոգեվոր-բարոյական փոխհարաբերություններն իրենց տեղն աստիճանաբար զիջում են իրավունք-պարտականության հարաբերություններին: Հետեվաբար, պետության ստեղծման առաջին իսկ պահից պետք է կարողանալ պետական իշխանության կառուցման հիմքում դնել ինչպես ծայրահեղականությունները զսպող, այնպես էլ հոգեվոր-բարոյական հարաբերությունները պահպանող եվ ամրապնդող սկզբունքները: Ի դեպ նշենք, որ հոգեվոր-բարոյական հարաբերությունները շարունակվում են առավելագույնս պահպանվել ներընտանեկան հարաբերություններում եվ այս հանգամանքը նկատի ունենալով, անհրաժեշտ է մեծապես նպաստել ընտանեկան հարաբերությունների ամրապնդմանը:

Առհասարակ այս կամ այն հասարակության կայունությունը եվ բնականոն զարգացումը մեծապես պայմանավորված է անհատի ու հասարակության փոխհավասարակշռված հարաբերություններով: Այսինքն՝ անձի իրավունքների ու ազատությունների իրականացումը, հոգեվոր ազատության ամեն տեսակի դրսեվորումները ոչ միայն չպետք է խաթարեն հասարակության ամբողջականությունը, այլևս նպաստեն հասարակության առաջընթացին եվ միաժամանակ հասարակությունը պետք է անհրաժեշտ պայմաններ ապահովի յուրաքանչյուր մարդու ազատ զարգացման համար:

Որքանով անձի ու հասարակության փոխհարաբերությունները կարգավորում է մեծամասամբ պետությունը, վերոհիշյալ հարաբերակցությունը վերածվում է ազգի (ժողովրդի) ինքնիշխանության, պետության ինքնիշխանության եվ անհատի իրավունքների հարաբերակցության հարցին:

Կապված ազգի ինքնիշխանության եվ պետության ինքնիշխանության փոխպայմանավորվածությունից, այսինքն՝ ազգի ինքնիշխանությունն է ստեղծում պետության ինքնիշխանությունը, թե հակառակը՝ խնդիրը համապատասխան լուծում է ստանում: Առաջին դեպքում ստանում ենք ժողովրդավարության մոդելը, որտեղ գերակայում են մարդու իրավունքները, որովհետեվ ինքը հասարակությունը փաստորեն դիտվում է իբրեվ ազատ մարդկանց ամբողջություն եվ, հետեվաբար, ինչպես պետության ինքնիշխանությունը սահմանափակված է ազգի ինքնիշխանությամբ, այնպես էլ անհատների իրավունքները ենթարկվում են պետության ինքնիշխանությանը:

Ինչպես տեսնում ենք երկու մոդելն էլ անտեսում են ազգի ինքնիշխանության եվ անհատի իրավունքների միջեվ հարաբերակցությունը, այսինքն՝ անտեսվում են փոխադարձ պարտականությունները:

Իսկ դա նշանակում է, որ ժողովրդավարական մոդելի պարագայում ազգն իր ինքնիշխանությամբ ստեղծում է պետություն, որի խնդիրն է ապահովել հասարակության զարգացման որոշակի պայմաններ եվ, մասնավորապես, մարդու եվ քաղաքացու իրավունքների ու ազատությունների անկաշկանդ իրականացման համար, այնինչ մարդը եվ քաղաքացին հասարակության (ազգի) նկատմամբ որեվ պարտականություն չունի: Իհարկե, մարդը եվ քաղաքացին որոշակի պարտականություններ ունեն պետության առջեվ (պաշտպանել հայրենիքը եվ վճարել հարկեր), որոնց մի մասն անշուշտ ծառայեցվում է հասարակությանը (ազգին), այն էլ միջնորդավորված ձեվով, սակայն ընդհանուր առմամբ հասարակության հանդեպ անմիջական պարտականություններ այնուամենայնիվ չունեն: Ամբողջատիրական մոդելի դեպքում պետությունը նույնանում է հասարակության հետ, պետությունն է որոշում մարդու եվ քաղաքացու իրավունքների ու ազատությունների շրջանակը եվ բացարձակացվում է պետության ինքնիշխանությունը եվ ամեն ինչ, այդ թվում՝ մարդու եվ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ենթարկվում են պետական ընդհանրական շահերին, ընդ որում այդ ամենը կատարվում է հարկադրաբար, օրենքի (ավելացնենք՝ անիրավական օրենքի) ուժով: Այս դեպքում եվս մարդը եվ քաղաքացին հասարակության հանդեպ պարտականություններ չունեն, դրանք միայն պետության հանդեպ են:

Հասարակության եվ անձնավորության հավասարակշռված հարաբերություններն ապահովում են, մի կողմից, հասարակության կայուն վիճակը եվ ներդաշնակ զարգացումը, մյուս կողմից՝ անձի ինքնավարությունը եվ ազատությունը, իրատեսական պայմաններ ստեղծելով մարդու եվ քաղաքացու իրավունքների ու ազատությունների անկաշկանդ կենսագործման համար: Այս առանցքային գաղափարն իր արտահայտությունն է ստացել ժողովրդավարական արդի պետությունների գործող սահմանադրություններում, ուր իրավական լուծում է ստացել հասարակության, պետության եվ անձնավորության (պետության եվ անհատի) փոխհարաբերությունների հարցը: Այդ հարաբերությունները

խարսխված են մարդու եվ քաղաքացու անօտարելի իրավունքների ու ազատությունների վրա եվ համարվում են սահմանադրությունների հիմքերից մեկը: Այդ հարցն, ըստ էության, լուծվում է ժողովրդի (ազգի) ինքնիշխանության, պետության ինքնիշխանության եվ մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների փոխհարաբերության միջոցով:

Այս առնչությամբ, անհրաժեշտ է անդրադառնալ ոչ միայն մարդու եվ քաղաքացու իրավունքներին ու ազատություններին, այլևս դրանց սահմանափակմանը: Ինչպես հայտնի է, մարդու եվ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները եվ՝ սահմանադրություններում, եվ՝ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում ենթակա են որոշակի սահմանափակումների: Մասնավորապես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված է, որ «իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս, յուրաքանչյուր ոք պարտավոր է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են մյուսների իրավունքների ու ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգումն ապահովելու եվ ժողովրդավարական հասարակարգում բարոյականության, հասարակական կարգի եվ ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջները բավարարելու նպատակով» (հոդված 29, կետ 2): Ինչպես տեսնում ենք, մարդու իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս դրանք սահմանափակված են՝ ա) այլ անձանց իրավունքներով ու ազատություններով, բ) բարոյականության նորմերով, գ) հասարակական կարգի պահպանման անհրաժեշտությամբ եվ դ) ընդհանուր բարեկեցության պահանջներով: Բանն այն է, որ գոյություն ունեն բարոյականության այնպիսի նորմեր, որոնք հատուկ են միայն տվյալ ազգին եվ իմաստավորվում են միայն այդ ազգի միջավայրում, լինելով անհասկանալի այլազգիների համար:

Չետեվաբար, մարդու իրավունքներն ու ազատությունները, որքան էլ լինեն համընդհանուր, սահմանափակվում են նաեվ զուտ ազգային բարոյականության նորմերով: Այստեղից էլ մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման եվ իրավական երաշխիքների օրենսդրական կարգավորման անմիջական կապը: Այսինքն՝ իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորումը ենթադրում է միշտ նկատի ունենալ որոշակի բարոյական արժեքներ: Այսպես, գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր հայի համար ընտանիքը մեծագույն արժեք է, եվ եթե ընտանիքի անդամներից մեկը (առավել եվս՝ ընտանիքի հայրը) որոշում է ընտանիքի ընդհանուր սեփականությունը, ասենք բնակարանը, գրավ դնել որոշակի գործարք կատարելու համար (անգամ ընտանիքի բոլոր չափահաս անդամների համաձայնությամբ), ապա կարծում ենք, որ օրենսդրությամբ դա պետք է արգելվի, եթե այդ բնակարանից բացի որեվէ այլ գույք չունեն, այսինքն՝ ընտանիքի անդամի իրավունքները պետք է իրենց տեղը զիջեն ընտանիքի (հետեվաբար նաեվ ազգի եվ պետության) ընդհանրական շահերին եվ իրավունքներին: Նույն կերպ մարդու իրավունքներն ու ազատությունները պետք է իրենց տեղը զիջեն ազգի եվ պետության ընդհանրական շահերին ու իրավունքներին, սակայն սա չպետք է հասկանալ ամբողջատիրության ոգով, այլ այն առումով, թե որքանով են հասարակության եվ պետության իրավունքների կենսագործումն անմիջականորեն նպաստում մարդու եվ քաղաքացու իրավունքների ու ազատությունների կենսագործմանն ու պաշտպանությանը:

Չարկ ենք համարում նշել նաեվ, որ, մեր կարծիքով, իրավունքների նշված սահմանափակումները պետք է լինեն հասարակության, այլ մարդկանց, ընդհանուրի բարեկեցության հանդեպ պարտականություններ: Այսինքն՝ անհրաժեշտ է, ոչ թե վնասել, այլ հարգել, պահպանել այլոց իրավունքները, բարոյականության պահանջները եվ այլն:

Ընդհանրապես, երբ խոսքը վերաբերում է իրավունքների ու ազատությունների վերը նշված իմաստով սահմանափակումներին, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ խնդիրն առաջանում է առաջին հերթին տարբեր սուբյեկտների իրավունքների ու ազատությունների բախման դեպքում, հետեվաբար, օրենքը պետք է կարգավորի այդ բախումների լուծումը որոշակի բարոյական առաջնայնություններից ելնելով, ընդ որում, այդ առաջնայնությունները պետք է ունենան որոշակի աստիճանակարգում (հիերարխիա): Առաջին աստիճանում, կարծում ենք, պետք է լինեն հասարակության շահերը, հասարակության անվտանգությունը, իսկ հաջորդ աստիճանում հավանաբար ընտանեկան շահերը: Ինչ վերաբերում է պետությանը եվ անհատին, ապա պետական շահերը եվ մարդու իրավունքները պետք է ենթարկվեն հասարակական շահերին, իսկ պետությունը պետք է ծառայի հասարակությանը եվ անհատին, պայմաններ ստեղծի եվ ապահովի ինչպես մարդու իրավունքների ու ազատությունների ազատ դրսեվորման, այնպես էլ հասարակության զարգացման համար:

Նշենք նաեվ, որ մարդու իրավունքների ու ազատությունների ընդունված սահմանափակումներն ունեն չվնասելու ուղղվածություն, այլ ոչ թե ի շահ հասարակության: Եթե այս տեսակետից ուսումնասիրենք գործող սահմանադրությունները, ապա դժվար չէ հանդիպել, որ դրանցում, չնչին բացառություններով, անհատի իրավունքների ու ազատությունների իրագործումը բացարձակացվում է (նշված սահմանափակումների շրջանակում) եվ նա ոչ մի պարտականություն չունի հասարակության հանդեպ (պարտականությունները, ինչպես արդեն նշել ենք, միայն պետության հանդեպ են): Անհատի պարտականությունները հասարակության, ազգի նկատմամբ, հետաքրքիր լուծում է ստացել Արեվմտյան

Հայաստանում գործող «Ազգային Սահմանադրությունում», ուր ամրագրված է «Ա. Ազգին ամեն մեկ անհատը առ Ազգը պարտավորություններ ունի...» եվ ապա «Բ. Ազգայնոց պարտականությունն է՝ ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւր իր կարողութեան չափով, ազգին խնդրած ծառայութեանցը յոժարական յանձնառու ըլլալ, եվ անոր ըրած տնօրէնութեանցը սիրով հնազանդիլ:

Ազգայնոց այս պարտավորութիւնքը ազգին իրավունքն են»:

Անհատի այս պարտականություններն ազգի հանդէպ իհարկէ հիշյալ սահմանադրությունում պատահական չէ, քանի որ այն գործում էր պետության բացակայության պայմաններում: Սակայն կարծում ենք, որ պետության առկայության պայմաններում եվս փոխադարձ պարտականությունները («մեկին պարտավորութիւնքը միւսին իրավունքն էն») նույնպէս անհրաժեշտ են եվ այդ փոխադարձությունն այսօր տեսնում ենք միայն մի քանի «նորագույն» սահմանադրություններում: Այսպէս, Լեհաստանի Սահմանադրությունում ամրագրված է՝ «Լեհ քաղաքացու պարտականությունն է հավատարմությունը Լեհաստանի Հանրապետությանը, ինչպէս նաեվ հօգածությունն ընդհանուր բարօրության նկատմամբ» (հոդված 82): Ի տարբերություն «Ազգային Սահմանադրության», վերջին մեջբերման մեջ նշվում է ոչ թէ հասարակությունը (ազգը), այլ հանրապետությունը, որը բնական է, որովհետեւ պետության առկայության պայմաններում պարտականությունը վերաբերում է արդեն քաղաքացուն, այլ ոչ թէ ազգի անդամին, եվ պետությանը, այլ ոչ թէ հասարակությանը:

Չափազանց հետաքրքիր եվ առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերվել ճապոնիայի Սահմանադրությունում, ուր մարդու եվ քաղաքացու իրավունքների ու ազատությունների փոխարեն (համեմատած ժողովրդավարական պետությունների սահմանադրությունների հետ) տեղ է գտել «ժողովրդի իրավունքները եվ պարտականությունները» բաժինը (գլուխ III): Այդ գլխում մասնավորապէս նշվում է, որ «ժողովուրդն անարգել օգտվում է մարդու բոլոր հիմնական իրավունքներից» (հոդված 11) եվ «սահմանադրությամբ ժողովրդին երաշխավորված ազատություններն ու իրավունքները պետք է պահպանվեն ժողովրդի մշտական ջանքերով: Ժողովուրդը պետք է ձեռնպահ մնա այդ ազատությունների եվ իրավունքների ամեն տեսակ չարաշահումներից եվ մշտական պատասխանատվություն կրի դրանք հասարակական բարեկեցության շահերին ծառայեցնելու համար» (հոդված 12), ինչպէս նաեվ «ժողովուրդն օժտված է հանրային պաշտոնատար անձանց ընտրելու եվ դրանց պաշտոնագրկելու անկապտելի իրավունքով» (հոդված 15): Այսպիսի յուրահատուկ մոտեցմամբ ընդգծվում է հասարակության կարեվորությունը հասարակական հարաբերությունների կարգավորման խնդրում եվ մարդու իրավունքներն ու ազատությունները դառնում են ոչ թէ պետության, այլ հասարակության հոգածության առարկա, իսկ պետությունը վերածվում է հասարակությունը սպասարկողի, մարդու իրավունքները պաշտպանողի՝ «մարդկանց կյանքի իրավունքը, ազատությունը եվ երջանկության ձգտումը... օրենսդրության ոլորտում եվ պետական այլ գործերում հոգածության բարձրագույն արժեքն է» (հոդված 13): Ինչպէս տեսնում ենք, ճապոնիայում հասարակություն-պետություն-անհատ (անձնավորություն) հարաբերությունների հիմքը համարվում է ժողովուրդը, այլ ոչ թէ անհատը, ինչպէս ընդունված է արեւմտյան արժեքների համակարգում: Դա ամենեվին չի նշանակում, որ ճապոնիայում անտեսվում են մարդու իրավունքները, դրանք Արեւմուտքի համեմատ պակաս չեն պաշտպանված (տես ճապոնիայի Սահմանադրություն, հոդվածներ 13-40), այլ դրանք ներդաշնակված են հասարակական շահերին: Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքները բացարձակացված չեն, բայց եվ ստորադասված չեն, դրանք համահունչ են հասարակական հարաբերությունների ամբողջությանը:

Ծանոթանալով հասարակություն-պետություն, պետություն-անհատ փոխհարաբերությունների ազատամտական, մարքսիստական ըմբռնումներին, դժվար չէ նկատել, որ այդ երկու ըմբռնումներին էլ ներհատուկ են որոշակի ծայրահեղություններ, մի դեպքում բացարձակացվում են մարդու իրավունքները, մյուս դեպքում՝ հասարակության եվ պետության շահերը, մի դեպքում կարեվորվում է նյութական կողմը, մյուս դեպքում՝ հոգեվոր-բարոյականը եվ այս հակադրությունների թվարկումը կարող է շարունակվել: Նկատենք նաեվ, որ այս երկու մոտեցումներից յուրաքանչյուրը միշտ փորձել է հաղթահարել ծայրահեղությունները, որոշակի դերակատարություններ նախատեսելով հակոտնյա կողմերի համար, սակայն այդ փորձերը բնականաբար ի սկզբանէ դատապարտված էին, որովհետեւ ծայրահեղությունները, ըստ էության, դրված են այդ ուսմունքների բուն հիմքում:

Այդ ծայրահեղություններից խուսափելու հնարավոր ձեւը նոր մոտեցում ունենալն է, որի հիմքում պետք է դնել ոչ թէ մարդուն (իր իրավունքներով) կամ պետությունը (իր պետական, հասարակական շահերով), այլ՝ եվ մարդը, եվ պետությունը: Այդպիսի մոտեցման համար հիմք կարող է դառնալ ընտանիքը, որը միջանկյալ օղակ է պետության եվ անհատի միջեւ: Այսինքն՝ պետությունը պետք է դիտել ոչ թէ քաղաքացիների ամբողջություն, այլ ընտանիքների ամբողջություն, որովհետեւ մի կողմից՝ «ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է», մյուս կողմից՝ ընտանիքը քաղաքացիների բնական միություն է: Ընդ որում, եթէ քաղաքացիների միջեւ հարաբերությունները, այսինքն՝ պետության մեջ առկա հարաբերությունները, կառուցվում են ընդհանուր առմամբ շահերի հիման վրա, ապա ընտանիքում

հարաբերությունները հիմնված են սիրո եվ հարգանքի վրա: Ինչ վերաբերում է մարդու իրավունքներին, որը ետին պլան է մղվում ընտանիքի իրավունքների համեմատ, ապա դա ամենեվին չի նշանակում մարդու իրավունքների անտեսում, պարզապես ընտանիքի անդամների միջեվ բախումների դեպքում անհրաժեշտ է հակասությունները լուծել ելնելով ընտանիքի շահերից, այնպես, ինչպես ծնողների միջեվ հակասությունները լուծվում են երեխաների շահերից ելնելով: Այսպիսի հարաբերություններից դուրս մնացյալ հարաբերություններում մարդու իրավունքները մնում են այնպիսին, ինչպիսին դրանք գոյություն ունեն գործող սահմանադրություններում եվ միջազգային-իրավական փաստաթղթերում:

Ասվածը վերաբերում է նաեվ պետական եվ հասարակական շահերին եվ ըստ էության դրանք մնում են անփոփոխ: Պարզապես այս դեպքում պետությունն իր ուշադրության կենտրոնում պետք է պահի առաջին հերթին ընտանիքը, որովհետեվ ամուր ընտանիքը, ընտանեկան դրական հարաբերությունները նպաստում են հասարակության համախմբմանը, պետության ամրապնդման եվ կայունության ապահովմանը:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Մենք ծանոթացանք մարդու իրավունքների տեսության մի շարք հիմնական հասկացությունների, ինչպիսիք են արժանապատվությունը, ազատությունը, իրավունքը եվ այլն, սկզբունքների, ինչպիսիք են զաղափարախոսական պլյուրալիզմը, քաղաքական պլյուրալիզմը եվ այլն, մարդ-պետություն փոխհարաբերությունների կոլեկտիվիստական եվ ազատամտական մոտեցումներին, բնական իրավունքի եվ դրական իրավունքի հարաբերակցությունը եվ այլն, որոնք հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում կազմել մարդու իրավունքների վերաբերյալ: Հասկանալի է, սակայն, որ դրանք դեռեվս բավարար չեն ամբողջական պատկերացում ունենալու համար: Այս առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ մի քանի հարցերի, որոնք կարող են դառնալ հիմնական մեկնակետեր մարդու իրավունքների վերաբերյալ համեմատաբար ընդհանուր պատկերացում կազմելու համար:

Նախ եվ առաջ ցանկանում ենք նշել, որ մարդու իրավունքներ ասելով պետք է նկատի ունենալ անհատի իրավունքները եվ ոչ թե ինչ-ինչ վերացական, այլ կոնկրետ, գործնական առումով եվ պաշտպանել դրանք: Սովորաբար ժողովրդավարության մասին խոսելիս ենթադրվում է, որ այն մեծամասնության իշխանությունն է, մոռանալով փոքրամասնության եվ առանձին անհատի իրավունքները: Այս դեպքում արդյունքում ստացվում է ժողովրդավարության հակոտնյան՝ տիպիկ ամբողջատիրություն: Հետեվաբար խնդիրն այն է, որ մեծամասնությունն ապահովի ինչպես փոքրամասնության, այնպես էլ անհատի իրավունքները եվ ազատությունները, իսկ դա իր հերթին նշանակում է, որ այդ նույն մեծամասնությունը չի կարող գործադրել այնպիսի կառավարում, որն անտեսում է փոքրամասնության եվ անհատի շահերը: Այլ կերպ ասած՝ մեծամասնության իշխանությունը պետք է սահմանափակված լինի իրավունքով: Այսինքն՝ այդ իշխանությունը բացարձակ չէ, այն սահմանափակված է առանձին անձանց իրավունքներով եվ ազատություններով:

Մյուս հանգամանքը, որ անհրաժեշտ է նկատի ունենալ, դա այն է, որ մարդու իրավունքները վերաբերում են ոչ թե առհասարակ ամեն կարգի, այլ միայն մարդ-պետություն փոխհարաբերություններին: Այսինքն, եթե նշում ենք մարդու որեվէ իրավունք, ապա դա նշանակում է պետության պարտականություն: Այսպես, եթե ասում ենք, որ յուրաքանչյուրն ունի առողջության պահպանման իրավունք, ուրեմն պետությունը պարտավոր է ապահովել մարդու այդ իրավունքի իրականացումը, տվյալ դեպքում՝ ստեղծել առողջապահական հիմնարկների անհրաժեշտ համակարգ եւ դրանց գործունեության համապատասխան պայմաններ: Ինչ վերաբերում է ազատություններին, ապա այս դեպքում այն ոլորտը, որտեղ մարդը պետք է ազատ լինի որեվէ միջամտությունից, իշխանությունը իրավունք չունի մուտք գործել: Այսպես, եթե ասում ենք խոսքի ազատություն, ապա պետք է բացառվի պետական միջամտությունն այդ ոլորտում:

Խոսելով մարդու իրավունքների մասին, կարծում ենք մարդու իրավունքների շարքում հատուկ կարեվորություն է ծեռք բերում մի այնպիսի իրավունք, ինչպիսին է յուրաքանչյուրի դատական պաշտպանության իրավունքը: Այս իրավունքը կարեվորվում է այն առումով, որ այդ իրավունքի ապահովումը երաշխիք է մյուս իրավունքների ու ազատությունների պաշտպանության, խախտված իրավունքները վերականգնելու, եվ առհասարակ արդարադատություն հաստատելու համար: Ինչպես ցույց է տալիս ժողովրդավարական հասարակությունների բազմամյա փորձն արդարադատության ապահովման հիմնական եղանակն անկախ դատական համակարգի ստեղծումն է, որի միջոցով իրականանում է բոլորի հավասարությունն օրենքի առջեվ: Ըստ էության, անկախ դատական իշխանության անհրաժեշտությունը բխում է իշխանությունների տարանջատման սկզբունքից, որն ամրագրված է արդի պետությունների սահմանադրություններում, ինչպես նաեվ ՀՀ Սահմանադրությունում (հոդված 5): Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ամրագրել է այս

իրավունքը հետեվյալ ձեվակերպմամբ. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում, **իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները**» (հոդված 8): Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված է, որ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ... իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքնության՝ **խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ եվ անաչառ դատարանի կողմից**» (հոդված 6, ընդգծումը մերն է՝ Վ. Պ.):

Միջազգային հանրությունը կարեվորելով արդարադատության իրականացումն ընդունել է մի շարք փաստաթղթեր՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» (1985թ.), «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների արդյունավետ իրականացման ընթացակարգերը» (1990թ.), որոնց նպատակն է ապահովել դատարանների անկախությունն ու անկողմնակալությունը: ՀՀ Սահմանադրությամբ եվ նախատեսվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ եվ օրենքներով ամրագրված իր իրավունքների եվ ազատությունների դատական պաշտպանության իրավունք» (հոդված 38), ինչպես եվ անկախ դատական մարմինների ստեղծում, որի երաշխավորն է համարվում Հանրապետության Նախագահը (հոդված 94):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դատական անկախ իշխանության ստեղծումը եվ՝ ազգային օրենսդրությամբ, եվ՝ միջազգային պայմանագրերով համարվում է ժողովրդավարության հաստատման կարեվորագույն նախապայմաններից մեկը: Ավելացնենք նաեվ, որ մարդու իրավունքների եվ ազատությունների հիմքը՝ մարդու արժանապատվությունը պաշտոնատար անձանց (չինովնիկների) ոտնձգություններից պաշտպանելու ամենագործուն միջոցն անկախ դատարանն է, որը սահմանադրության եվ օրենքների հիման վրա կարող է տալ նրանց գործողությունների (կամ անգործության) ճշգրիտ իրավական գնահատականը եվ, դրանով իսկ, կմեծացնի պաշտոնյաների պատասխանատվությունը մարդկանց իրավունքների խախտման նկատմամբ:

Անկախ դատական իշխանության առկայությունը մեծապես կնպաստի հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներում՝ տնտեսական, սոցիալական, կրթական, գիտական եվ այլն, կարգուկանոնի հաստատմանը, եվ, առհասարակ, հասարակության մեջ հոգեվոր-բարոյական մթնոլորտի բարելավմանը:

Պետության մեջ դատարանի կարեվորությունն ընդգծելու համար մեջբերենք հանրահայտ իրավագետ, լեհ Մարեկ Նովիցկու խոսքերը. «Դատական իշխանությունը երրորդ իշխանությունն է, որը հավասար է մյուս երկուսին, հնարավոր է նաեվ, որ դրանցից կարեվոր է: Որոշակի առումով ավելի կարեվոր է, որովհետեվ ինչպես նշված է եվրոպական կոնվենցիայի կարծիք արտահայտելու եվ այն սահմանափակելու մասին հոդվածի վերջում կարծիք արտահայտելու ազատությունը կարող է սահմանափակվել դատարանների բարի համբավը պաշտպանելու մասին օրենքով: Ինչ ուզեք կարող եք խոսել կառավարության մասին, խորհրդարանի մասին, բայց զգույշ եղեք դատարանին քննադատելիս: Այն երկիրը, որտեղ պատգամավորները ծիծաղելի են եվ, երբ լսում ենք թե նրանք ինչ հիմարություններ են դուրս տալիս մենք ծիծաղում ենք, այն երկիրը, որտեղ նախարարը հիմար է, այդպիսի երկրներ կարող են գոյություն ունենալ, բայց այն երկիրը, որտեղ ծիծաղում են դատարանի վրա, բնականոն գոյություն ունենալ չի կարող: Նրանում ապրել արդեն հնարավոր չէ եվ այդ պատճառով անհրաժեշտ է ապահովել դատական իշխանության անկախությունը»

(<http://www.hro.org/ngo/discuss/marek/index.htm>):

Այսպիսով, հպանցիկ անդրադառնալով մարդու իրավունքներին առնչվող մի քանի լրացուցիչ հարցադրումների, եվ նկատի ունենալով, որ դրանց թիվը մշտապես կարելի է բազմապատկել, ակնհայտ է դառնում, թե որքան տարողունակ եվ բազմաբնույթ բովանդակություն ունի մարդու իրավունքների տեսությունը:

Միաժամանակ պարզ է դառնում, որ մեզանում դեռեվա բավարար ուշադրության չեն արժանանում մարդու իրավունքների հիմնահարցերը եվ դրանց լուծումը: Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակելով ժողովրդավարական, իրավական եվ սոցիալական պետություն (ՀՀ Սահմանադրություն, հոդված1) եվ միանալով մարդու իրավունքներին վերաբերող մի շարք պայմանագրերի, ինչպես նաեվ դառնալով եվրախորհրդի անդամ, ստանձնել է մարդու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու պարտավորություններ եվ, հետեվաբար, պարտավոր է իր քաղաքացիների համար ապահովել արժանապատիվ գոյություն: Մենք՝ Հանրապետության քաղաքացիներս, մեր հերթին պատասխանատվություն ենք կրում մեր սերունդների առջև՝ ապահովել համապատասխան առաջընթաց նշված հիմնահարցերը լուծելու խնդրում, նպաստել իրական ժողովրդավարություն հաստատելու գործընթացին:

## ՀԱՎԵԼՎԱԾ

1. Անկախության հռչակագիրը (ԱՄՆ՝ 1776թ.) (Քաղվածք)
2. Մարդու եւ քաղաքացու իրավունքների հռչակագիրը (Ֆրանսիա՝ 1789թ.)
3. Իրավունքների մասին բիլլը (ԱՄՆ՝ 1791թ.)
4. Հայոց Ազգային Սահմանադրություն (1863թ.) (Քաղվածք)
5. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.)
6. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազտությունների պաշտպանության մասին կոնվենցիան (1950թ.)
7. Հայաստանի անկախության մասին հռչակագիրը (1990թ.)
8. Մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների հռչակագիրը (ՌՍՖՍՀ՝ 1991թ.)